Բարբառ

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ԱՌՈՒԵՍՏԻ

Է. ՏԱՐԻ 1969 ՄԱՐՏ ԹԻՎ 3

digitized by ...A.R.C

باكين

مجلة شهرية ، ادبية وفنية علمية

مدير المسؤول

السيد ارتين كارنيك قزانجيان

•

PAKINE

REVUE MENSUELLE

LITTÉRAIRE & ARTISTIQUE

Propriétaire

Dr. A. KAZANDJIAN

•

ԲԱԳԻՆ

ԱՄՍԱԳԻՐ

ԳՐԱԿԱՆՈՒԹԵԱՆ

ԵՒ ԱՐՈՒԵՍՏԻ

ՎԱՐԻՉ ԽՄԲԱԳԻՐ

Կ. ՍԱՍՈՒՆԻ

ԽՄԲԱԳԻՐ

Պ. ՄՆԱՊԵԱՆ

ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

ԱՆԴԱՄՆԵՐ

Ց. ԳԵՂԱՐԴ

Տ. ՈՍԿՈՒՆԻ

Բ. ՓԱՓԱԶԵԱՆ

Ն. ՊԱՐԹԵՒԵԱՆ

Ժ. ԱԹԹԱՐԵԱՆ

ՀԻՄՆԱԴԻՐ ԱՆԴԱՄՆԵՐԵՆ

† ԵԴ. ՊՕՅԱՃԵԱՆ

Խմբագրութեան հասցէ

G. SASSOUNI

Rue Sélim Boustani,
Beyrouth–Liban

Հեռաձայնի թիւ 296898

ԳՐՈՒԹԻՒՆՆԵՐ ՈՒՆԻՆ

Ն. ՉԱՐԽՈՒՏԵԱՆ

ՑՈՎՀ. ՇԻՐԱԶ

Ս. ՍԱՆԻՆԵԱՆ

Հ. ՑՈՎՍԷՓԵԱՆ

Պ. ԳԱԼՈՒՍՏԵԱՆ

Խ. ԱՍՈՑԵԱՆ

Ա. ԵԱՂՈՒՊԵԱՆ

Փ. Պ.

Լ. ՄԿՐՏԻՉ

Ա. ՕՐԱԳԵԱՆ

Բ. Փ.

. . . . . .

ՆՇՄԱՐՆԵՐ

ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԼՈՒՐԵՐ

digitised by A.R.A.R.@

Բազմն

ԱՅՍԱՑԻՐ ԳՐԱԿԱՆՈՒԹԵԱՆ ԵՒ ԱՐՈՒԵՍՏԻ

Ը. ՏԱՐԻ, ԹԻՒ 3 — ՄԱՐՏ 1969 — ՊԷՅՐՈՒԹ

ՆՈՒՊԱՐ ՋԱՐԽՈՒՏԵԱՆ

ՄԱՀՈՒԱՆ ԿԱՄՈՒՐՋԸ

(ՎԷՊ)

ԳԻՐՔ ԱՌԱՋԻՆ

ԱՂԱՂԱԿՆԵՐ ԱՆԴՈՒՆԴԷՆ

ԳԼՈՒԽ Ա.

Վայրաշարժը՝ փռուած քարափի երկայնքին, կը հեւար շնչասպառ ծիու մը պէս։ Մահամերձ լոյսին տակ, որ կը մազուէր ցոլակներու աղտոտ ապակիներէն, մարդկային կերպարանքներ կ'երթեւեկէին, իրենց առուերները քաշքշելով, մինչեւ որ խաւարը ընկլուզէր զանոնք դաբաստակալ վիշապի մը պէս։

Միքայէլ Պարթեւեան ակնարկ մը նետեց ժամացոյցի յոգնած շրջանակին, որուն երբեմն սեւ թիւերուն վրայ, սլաքները կը ջանային բացատրել երկվայրկեաններուն ընթացքը եւ լուսաբանել առեղծուածը այս մռայլ ու քմահաճ գիշերուան։

– Ցակուէն ժամանակ ունիմ հեռագիր մը գրկելու, – մտածեց։

Հեռագրական դրասենեակը կը գտնուէր կայարանի շէնքին մէջ իսկ։ Ամբաղդեց կարճ նախադասութիւն մը՝ իմացնելու համար ծնողքին իր մօտալուտ ժամանումը։ Վճարեց ու դուրս ելաւ։

Գանի մը քայլ առաւ քարափին վերայ ու նայեցաւ շուրջը, թափանցելու համար գիշերուան վարագոյրէն անդին։ Կը գտնուէր հասարակ ու ճշգիմ կայարանի մը առջեւ, ամայի տափաստանի մը վրայ։ Սակայն քիչ մը անդին, հովտի մը երկայնքին, ուր կը հոսէր խազազ Որոնդէսը, կը խռնուէին Համայի քարաշէն ու խիտ տունները։

Ոչ մէկ լոյս կը յայտնէր քաղա-

digitised by A.R.A.R.@

քին դոյութիւնը, որովհետեւ կէս գիշերը անցած էր, իսկ դիշերապահներու տկար լապտերները թաղուած կը մնային փողոցներու խրամներուն մէջ։

Կայարանին աղմուկները եւ վայրաշարժին հեկեկանքները դադրած ըլլալով, Միքայէլ յստակօրէն լսեց ոդբագին հառաչը փայտէ հսկայ անիւներուն, որոնք գետին ջուրը կը բարձրացնէին մինչեւ ջրմուղները։ Անիւները կը ոչային յոգնած ծերունիներու պէս, կը հեկեկային, յետոյ կը հառաչէին, կարծես վարը, գետի հեղուկ անդունդին մէջ, կատաղի ձեռքեր կը սեղմէին հաղարաւոր մանուկներու վիզը։

Ցանկարծ, Միքայէլին թուեցաւ, թէ ջուրի միլիոնաւոր կաթիլներուն արծաթեայ աղմուկը գաղրած էր, տեղի տալով հազարաւոր խեղդուող մանուկներու աղաղակին, որոնց դիակները կը ծփային Որոնդէսի արիւնախառն հոսանքին վրայ։

Քարափին վրայ, ժամացոյցին երկար սլաքը բաւական ճամբայ կտրած էր դորշ լրջանակին վրայ։ Կայարանապետը յայտնուեցաւ դռնէ մը, լապտեր մը ձեռքը։ Անմիջապէս որ զանգը հնչեց, Միքայէլ արագօրէն քալեց դէպի վագոնը, ապատան մը գտնելու գինքը չլրնապատող չար ուժերուն դէմ։ Օրհան, որ վագոնէն չէր իջած, անհամբեր իրեն կը սպասէր։ Միքայէլ տեղ առաւ ընկերոջը դիմաց, պատուհանին քով։ Զանգակը հնչեց երկրորդ անգամ։ Կայարանապետը օդին մէջ ճօճեց լապտերին կանաչ լոյսը եւ չոգեկառքը ցնցուեցաւ։ Վայրաշարժը չէր հեւար այլեւս, այլ կը մռնչէր անասունի մը պէս, որ սպանդանոց կ'առաջնորդուի։

Նախ ցոլակները տողանցելու սկսան դանդաղօրէն, եղերամայրերու պէս, որ կը փորձեն հետեւիլ մահուան թափօրին եւ սակայն տկար ըլլալով միշտ ետ կը մնան։ Եւ յանկարծ խաւարին երախը կուլ տուաւ լոյսերու շարքը։ Անիւներուն թաւալումը սկսաւ արագանալ. ճամբան երկար էր, եւ դիակներ կը սպասէին հեռաւոր վայր մը՝ փոխադրուելու համար։ Որովհետեւ, ամէն կողմէ դիակներ կը պահանջէին 1914-ի այս աշնան։ Եւ յետոյ՝ պէտք էր պատանքներ կարել, անհամար պատանքներ, որովհետեւ միլիոնաւոր մեռելներ մերկ պիտի մնային եւ պիտի ամչնային իրենց դահիճներէն։ Պէտք էր նաեւ կարել տոպրակներ, անջատուած մարմինները փոխադրելու համար, մէկուն գլուխը ուրիշի մը ոտքերուն եւ երրորդի մը իրանին հետ։ Բայց կարի մեքենաները խլուած էին ճարտար ձեռքերէ ու փչրուած, յափշտակուած էին լացող կիներու ձեռքերէն, որոնք անդադար արցունք կը թափէին կարի դերձանները թրջելու համար։

Անիւներուն նուազը սկսաւ տկարանալ, վայրաշարժը կրկին կը հեւար, վախնալով դիշերուան թակարդներէն։ Լսած էր որ իր երկաթէ քոյրերը, Եւրոպայի կանանչ դաշտերուն մէջ, կը սուրային դէպի գոմերուն բոցը, իրենց ետեւէն քաշելով անթիւ վագոններ՝ բեռնաւորուած զինուորներով, զէնքերով ու պինամթերքով։ Շատերը մահացու վէրքեր ստացած՝ կը պառկէին երկաթուղիներու երկայնքին, ձիերու դիակներուն քով, եռուցիչը ջարդուփշրուր, բացուած որովայնի մը պէս։

Վերջին տունը, ծառերու վերջին փունջը ընկղմեցաւ խաւարին մէջ եւ յանկարծ առանձնութեան սեւ մակընթացութիւնը տարածուեցաւ երկաթուղիին վրայ, որ միշտ կը հեռանար, կ'երկարէր, ծիծաղելով հեւացող մեքենային կատաղի ու ապարդիւն ջանքերուն վրայ։

Երկու ընկերները առանձին էին այս առաջին կարգի բաժնեակին մէջ։ Օրհան երկնցաւ նստարանի հանդստաւէտ բազմոցին վրայ եւ դիշերը բարի մաղթելով ընկերոջը՝ աչքերը փակեց։ Միքայէլ նոյնը ըրաւ միւս նստարանին վրայ, այն յոյսով՝ որ պիտի կարենայ քանի մը ժամ քնանալ։ Փաթթուեցաւ հաստ վերարկուին մէջ, որովհետեւ Հոկտեմբերի դիշերը բաւական ցուրտ էր։ Բայց այն օրերը, որ անիւները կը նուազէին երկաթէ ստեղնաշարերուն դարնուելով, հակա-

digitised by A.R.A.R.@

ռակ աղդեցութիւն մը կ'ունենար իր ջիղերուն վրայ։ Իր անքնութիւնը ունէր երկու պատճառներ. նախ կար իր ծնողներուն վրայ։ Իր անքնութիւնը ունէր երկու պատճառներ. նախ կար իր ծնողներուն մօտ օրէն տեսնելու ուրախութիւնը, կար նաեւ խուլ ու անհասկնալի անձկութիւն մը, որ բաց կը պահէր իր կոպերը։

Մինչեւ էրզրում՝ ճամբան երկար էր տակաւին։ Շոգեկառքին պիտի յաջորդէր աւելի տաժանելի ճամբորդութիւն մը, ջորիով եւ կառքով։ Եւ միջոցին երկարութիւնը ջնջելու համար՝ Միքայէլ ուժ կու տար իր երեւակայութեան ու հանգրուանները կը կոտրէր երկվայրկեանի մը մէջ. Սուրիական դաշտերէն ետք կ'անցնէր Տաւրոսի կիրճերէն, կը հեռուէր Եփրատի հիւսիսային հովիտին, կը սուրար հայկական բարձրաւանդակին վրայ եւ հեռուէն կը նշմարէր քաղաքին եկեղեցիները եւ մզկիթները։

Հակառակ այս հաճելի հեռանկարին, խուլ անձկութիւնը չէր անջատուեր էութենէն։ Ոչ մէկ պատճառ ունէր մտահոգուելու։ Քանի մը օրէն պիտի միանար ծնողքին, չորս երկար տարիներու բաժանումէ մը ետք. ապագայի հեռանկարները փայլուն էին. զրպանը ունէր չինարարութեան երկրաչափի առաջնակարգ վկայականը։

Բայց կար Եւրոպան ձգած ըլլալու ծածուկ տխրութիւն մը։ Եւրոպան՝ իր մաքուր ու զեղեցիկ քաղաքներով, իր ամէնօրեայ փորձութիւններով, ապրելու համար էրզրում, աշխարհի սահմաններուն վրայ կորսուած քաղաք մը, ցեխոտ ու մութ փողոցներով, սիպերիական կլիմայով եւ միջնադարեան ապրելակերպով։ Քաղաք մը՝ ուր Թուրքին եւ հայուն միջեւ տիրող դարաւոր թշնամութիւնը կ'առնէր յաճախ սուր հանգամանք, ուր հայու մը կեանքը չէր արժեր Թուրքի մը հրացանէն արձակուած փամփուշտը եւ այդ պատճառաւ ջարդերը կ'ըլլային սուրով ու դաշոյնով...

– Եթէ բոլոր Եւրոպա դացող ուսանողները ինծի պէս մտածեն եւ չուզեն վերադառնալ իրենց ծննդավայրը, այն ատեն ո՞վ պիտի լուսաւորէ մեր լքուած եւ անուս ժողովուրդը։

Համալսարանի նստարաններուն վրայ ծանօթացած էր Օրհանին։ Ան զաւակն էր Զուիցերիոյ օսմանեան կայսրութեան դեսպանին։ Մայրը աւստրիացի էր։ Օրհան կը նախընտրէր հայ ուսանողներուն ընկերութիւնը եւ հեռու կը մնար Թուրք դասընկերներէն։ Առաջին օրէն համակրած էր Միքայէլին։ Կը բնակէին նոյն սենեակը եւ կը ճաշէին նոյն տեղանէն։ Զորս տարի ապրած էին իսկական եղբայրներու պէս։

Միասին աւարտած էին իրենց դասընթացքը եւ ստացած՝ համարժէք վկայական։ Առաջին համաշխարհային պատերազմի հուչակումէն շաբաթ մը ետք, Օրհանին հայրը Պոլիս կանչուած էր, շատ կարեւոր պաշտօն մը վարելու համար Արտաքին Գործոց Նախարարութեան մէջ եւ անմիջապէս ճամբայ ելած էր շոգեկառքով։ Օրհան նախընտրած էր ընկերանալ Միքայէլին, որ ծրագրած էր վերադարձի ճամբէն օգտուելով այցելել Իտալիոյ տեսարժան վայրերը։ Եւ ոտք դրած էին օսմանեան հողի վրայ, Գէրբութի նաւահանգիստը։ Անմիջապէս Միքայէլ սկսած էր շնչել հեղձուցիչ մթնոլորտի մը մէջ։ Խորհրդաւոր սպառնալիք մը կը սաւառնէր քաղաքին վրայ։ Թուրքիան տակաւին չէր մասնակցած պատերազմին, սակայն բանակը ամէն տեղ էր։ Համազգեստաւորներ կը վխտային փողոցներու մէջ։ Բազմաթիւ անդամներ, ըլլա՛յ Պէյրութի, ըլլա՛յ Իտալքի ու Հոմսի մէջ, նշմարած էր գերմանացի սպաներ՝ իրենց սրածայր սաղաւարտներով։

Այս բոլորը լաւ նշաններ չէին։ Միքայէլ լաւ գիտէր, որ երբ Թուրքիան պատերազմէր ուրիշ երկրի մը դէմ, առութէն կ'օգտուէր, զանազան պատրուակներով հայերը ջարդելու։ Արեան ծովեր կը բաժնէին այս երկու ազգերը...

Շոգեկառքը կը շարունակէր իր ճամբան, անտեսանելի պարտէզներուն մէջէն, Որոնդէսը եզերող գեղեցիկ պարտէզները, որոնց դէմ աչունը սկսած էր իր խուլ պայքարը։ Խաւարի զանգուած-

digitised by A.R.A.R.@

ներ կը քսուէին վայրաշարժի պողպատէ կողերուն, կասեցնելու համար անոր խելայեղ վազքը, որպէսզի չանհետանայ աստղերու անգունդին մէջ, դիլերուան վախճանէն առաջ։

Փարատելու համար այս մղձաւանջը, Միքայէլ ոգեկոչեց իր սիրածներուն պայծառ դէմքերը եւ բարձրաձայն աղաչեց անունը այն աղջկան, որ իրեն կը սպասէր տարիներէ ի վեր։

⁂

Վայրաշարժին սուլիչը անդադար կ'աղաղակէր։ Միքայէլ բացաւ աչքերը։ Բաժնեակը լուսաւորուած էր այդին կաթնագոյն լոյսով։ Օրհան կը քնանար տակաւին։ Ոտքի ելաւ ու մօտեցաւ պատուհանին։ Տողանցող տեսարանը դրժխեմ էր ու վանող։ Հնձուած դաշտերէն անդին, տեսնուեցան գիւղակի մը խեղճուկ տունները։ Շուներ կը հաչէին հեռուներէն եւ այդը կը բացուէր ճերմակ ու անրիծ՝ նոր գիրքի մը առաջին էջին պէս, գիրք մը, որուն պարունակութիւնը ոգբերգական ու ահռելի էր։

Նոգեկառքը դանդաղեցուց իր ընթացքը։ Անիւները, որ այլեւս չէին դառնար, կը քսուէին երկաթուղիին վրայ։ Քանի մը հիւղակներ դիմաւորեցին զինք, յետոյ Միքայէլ տեսաւ զինուորներ, հարիւրաւոր զինուորներ որ կը սպասէին։

Աննշան կայարան մըն էր, նման բոլոր միւսներուն, որոնց առիթ կանգ առած էր ճամբորդութեան ընթացքին։ Իր համեստ տեսքով, քարէ պատերով եւ կղմինտրէ տանիքով՝ անիկա կը յիշեցնէր Զուիցերիոյ տունները։ Ոչ մէկուն ուշադրութիւն ըրած էր, ոչ մէկուն անունը կարդացած էր, անոնք կը սահմանէին հանգրուանները իր երկար ճամբորդութեան։

Միքայէլ աւելի հեռաւորքրքրուած էր չէնքին շուրջ վխտացող զինուորներով։ Ան չէր գիտեր տակաւին որ այս անծանօթ ու աննշան կայարանը, իրեն համար պիտի ըլլար մուտք դէպի անծանօթ աշխարհ մը, դուռ մը՝ բացուած դժոխքի նախասենեակին վրայ։

Նոգեկառքը անշարժացաւ։ Միքայէլ ժամացոյցին վերը կարդաց Համիտիէ բառը, որ կայարանին անունն էր։

Քանի մը ճամբորդներ վար իջան, քիչ մը շարժելու, ուրիշներ կ'ուղղուէին դէպի ջրհանը, լուացուելու համար։ Ռակայն զինուորները որ կ'երթեւեկէին քարափին վրայ, իրենց հրացաններուն սուինները ուղղեցին ճամբորդներուն կողմը, «Եասա՛ֆ, եասա՛ֆ», պոռալով։

Երկու ենթասպաներ մօտեցան նոգեկառքին եւ պահակներ դնելով վագոններու ելքերուն առջեւ։ Անոնցմէ մէկը վեր հլաւ եւ ճամբորդներուն հրամայեց որ երթան սպասման սրահ՝ արձանագրել տալու համար իրենց անունը եւ ազգութիւնը։

Հարիւրի չափ ճամբորդներ իջան վագոններէն եւ պահակներով շրջապատուած՝ քալեցին դէպի կայարանին չէնքը։ Սպասման սրահը բաւական ընդարձակ չըլլալով, կէսէն աւելին մնացին դուրս։ Ասոնց մէջ կային քանի մը հալէպցի վաճառականներ, մեծ թիւով գիւղացիներ՝ ճէզիրէի շրջանէն։ Մնացեալները պիտի շարունակէին իրենց ճամբան դէպի Թուրքիոյ ներքին քաղաքները՝ Առանա, Մարտին, Տիարպէքիր, Էրզրում։

Ժամ մը մնացին այսպէս, խոնուած իրարու վրայ, շրջապատուած պահակներով, մինչեւ որ դուռ մը բացուեցաւ եւ հարիւրապետ մը յայտնուեցաւ։ Սպան յայտարարեց որ բոլոր սուրիացիները, որոնք Հալէպ կ'երթային, կրնային բարձրանալ իրենց վագոնները, պայմանաւ որ ստուգել տային իրենց ինքնութիւնը։ Նոյն հրամանը տրուեցաւ ճէզիրէի գիւղացիներուն։ Քանի մը վայրկեանէն սրահը պարպուեցաւ երեք քառորդով։ Սպան մնացեալներուն հրահանգեց որ քիչ մը համբերեն... ժեւակերպութիւնները արագ պիտի կատարէր, որպէսզի նոգեկառքը երկար չսպասէ։

Օրհան, որ կը գտնուէր Միքայէլի կողքին, մօտեցաւ ոպային.

— Ես՝ Իզզէթ պէյ Այտընին զաւակն

digitised by A.R.A.R.@

եմ, – ըսաւ, – ուստիս առաքեցի Լոնդոնի համալսարանը եւ այժմ կը վերադառնամ Գոլիս։ Իսկ պարոնը՝ ընկերս է, ան ալ ինձի պէս Զուիցերիա կ'ուսանէր եւ կը վերադառնայ երկրում, իր հայրենի տունը։ Հարիւրապե՛տ էֆէնտի, եթէ կարելի է, կը խնդրեմ որ շատ չուշացնէք մեր մեկնումը, որովհետեւ չորս տարիներէ ի վեր կ'ապրինք հայրենիքէն դուրս։

Սպան զարմանքով մտիկ ըրաւ երիտասարդին խօսքերը եւ յարկալիր ժպիտ մը գծագրուեցաւ շրթներուն վրայ։ Ուրեմն իր դէմը ունէր զաւակը Իզզէթ պէյ Այտընին, այդ ճարտար քաղաքագէտին, որ յաջողած էր բարձր պահել Օսմանեան Կայսրութեան վարկը Եւրոպական մայրաքաղաքներուն մէջ։ Գիտէր նաեւ որ Իզզէթ Պէյ շատ մեծ պաշտօնի մը կանչուած էր եւ շատեր զինք կը նկատէին ապագայ Արտաքին Գործոց Նախարարը։

– Օրհան պէյ, – ըսաւ հարիւրապետը, – ինձի համար մեծ պատիւ կը համարեմ ձեզի հետ ծանօթանալս։ Ձեր փափաքները հրամաններ են եւ կարելիս պիտի ընեմ ձեզի զոհացում տալու։ Միայն թէ՝ ներկայ կացութիւնը մեզմէ կը պահանջէ որ ըլլանք շրջահայեաց։

– Ներկայ կացութի՞ւնը. ի՞նչ կացութիւն։

– Կը հասկնամ. անտեղեակ էք անցուդարձերէն։ Ամբողջ գիշերը անցուցիք ձեր վակոնին մէջ եւ զարմանալի չէ որ լուրը չէք իմացած։

Եւ ակնարկ մը նետելով երիտասարդին անցագրին, զայն վերադարձուց իր տիրոջ։

– Կէս գիշերէն ի վեր, մեր Օսմանեան հայրենիքը պատերազմ յայտարարած է Երրեակ ուխտին դէմ, իր հերոս դաշնակիցներուն՝ Գերմանիոյ եւ Աւստրիոյ կողքին։

Օրհան մեքենաբար անցագիրը դրաւ գրպանը, առանց աչքերը հեռացնելու սպային շրթներէն։ Այս մեծ լուրը իրեն շատ հաճելի չէր թուեր։ Քանի մը քայլ նահանջեց եւ բառերը մէկիկ-մէկիկ խեղդուեցան կոկորդին մէջ։

Միքայէլ մօտեցաւ իր կարգին եւ անցագիրը ներկայացուց հարիւրապետին։ Սպան նայեցաւ լուսանկարին, երկարօրէն զննեց երիտասարդին դիմագիծը, դարձուց թերթերը, գոցեց տետրակը զգուշութեամբ, բայց զայն չվերադարձուց։

– Ի՞նչ է ձեր մասնագիտութիւնը, – հարցուց։

– Շինարարական երկրաչափութիւն. ճամբաներու եւ կամուրջներու մասնագէտ եմ։

– Շա՛տ լաւ, շա՛տ լաւ. իսկապէս լաւ անակնկալ մըն է։ Ճամբաներու եւ կամուրջներու մասնագէտ երկրաչափ, ճիշդ մեր ուզածն է։ Պարո՛ն Միքայէլ, մինչեւ որ ձեր մասին վերջնական որոշում մը առնուի, ձեզմէ կը խնդրեմ որ քանի մը վայրկեան սպասէք այս սենեակին մէջ։

Օրհան մօտեցաւ հարիւրապետին, միջամտելու համար ի նպաստ իր ընկերոջ։

– Ձեր թաբեկամին պարագան տարբեր է, – ըսաւ ասոնցմանաւորը, – ան հայ է եւ կը ժամանէ Զուիցերիայէն։ Ժընեւ կենդրոնն է հայ յեղափոխական կոմիտէներու։ Գէտք է ստուգենք, թէ ինչ որեւէ կապ ունի՞ անոնց հետ։

– Ես շատ լաւ կը ճանչնամ ընկերս. միշտ միասին եղած ենք ամէն տեղ. կը նստէք իմ վրաս կասկածիլ, բայց երբէք իր վրայ։

– Եթէ այդպէս է, ուրեմն մտահոգուելու պատճառ մը չունիք։ Ելէք ձեր բաժնեակը, որովհետեւ շոգեկառքը կը նայ մէկ վայրկեանէն միւսը ճամբայ ելլել։ Եթէ որեւէ բանի պէտք ունիք, մեզի իմացուցէք։

Երկու թաբեկամները իրարու նայեցան վերջին անգամ մըն ալ։ Սպան ընկերացաւ Օրհանին մինչեւ քարտէ, իսկ երկու զինուորներ, մերկ սուիններով, Միքայէլը առաջնորդեցին կայարանա-

digitised by A.R.A.R.@

պետի գրասենեակին քովի խուցը եւ դուռը վրան կղպեցին։

Միքայէլ նայեցաւ շուրջը։ Անկիւնը կար երկաթէ հին մահճակալ մը, պատին քով՝ երկու աթոռներ եւ պզտիկ սեղան մը, որուն վրայ շարուած էին քարիւղի վառարան մը, պղինձէ կաթսայ մը եւ քանի մը կլայուած պղինձէ ամաններ։ Դիմացի պատուհանին երկաթէ ձողերէն անդին կը տեսնուէր միապաղաղ ու դեղնորակ տարածութիւնը, որուն առջեւէն պահակները կ'երթեւեկէին լուռ ու մտահոգ։

Դրան միւս կողմը, սպասման սրահին մէջ, քայլերու աղմուկը նուազած էր։ Ճամբորդները գրաւած ըլլալու էին իրենց տեղը։ Երբեմն-երբեմն, դուռ մը կը բացուէր, ոտնաձայներ կը լսուէին սպասման սրահին մէջ, հրամաններ կ'արձակուէին։ Դուրսը, շոգիին Փչլոցը, որ կը ժայթքէր վայրաշարժի կաթսայէն, կը ծածկէր հեռագրական մեքենային թիք-թաքը, որ կու գար քովի դրասենեակէն։

Միքայէլ նստաւ աթոռներէն մէկուն վրայ եւ սպասեց։ Վայրիէանները կը գումարուէին, կը կազմէին ժամեր և ոչ ոք կու գար դուռը բանալու։ Հիմա հեռագրական մեքենային թքթոցը կ'իշխէր բոլոր աղմուկներուն վրայ, որովհետեւ Միքայէլ սկսած էր անոնց կարծեցեալ միօրինակութենէն զանազանել կարճերը եւ երկարները եւ կազմել բառեր։

Ցանկարծ թքթոցը կանգ առաւ եւ մինչոցը լեցուեցաւ շոգիի վայրագ Փչլոցով, սպաներու կտրուկ հրամաններով եւ ոտնաձայններով, որոնք վերսկսած էին սպասման սրահին մէջ։ Բայց Միքայէլին համար, այս բոլոր աղմուկները գոյութիւն չունէին, որովհետեւ ահռելի լուութիւնը իր ոտքերուն տակ կը փորէր անչափելի անդունդ մը, որուն յատակը պիտի իյնար ուշ կամ կանուխ։ Կրկին շնչից, երբ հեռագրական մեքենան վերսկսաւ քակել իր խօսակցութեան շղթան...

— Ուշադրութի՛ւն, ուշադրութի՛ւն,— կ'ըսէին կարճերն ու երկարները, — ուշադրութի՛ւն. հետեւեալ պատգամը ուղղուած է միա՛յն ու միայն նահանգապետներուն եւ շրջաններու հրամանատարներուն, ուրիշ ո՛չ մէկ պաշտօնեայ պէտք է տեղեկանայ այս չափազանց գաղտնի յայտարարութեան։

Այս ազդարարութիւնը կրկնուեցաւ երեք անգամ, մինչեւ որ գրասենեակին դուռը բացուեցաւ ու դոցուեցաւ։ Երկար լռութենէ մը ետք՝ մեքենան հաղորդեց հետեւեալը.

Յօդուած Առաջին.— Ընդհանուր զօրակոչ հռչակուած է օսմանեան կայսրութեան ամբողջ տարածութեան վրայ։

Յօդուած Երկրորդ.— Նահանգապետները, բանակի եւ անկախ բանակամասերու եւ զօրագունդերու հրամանատարները կրնան, ի պահանջել հարկին, զինուորական գործողութիւնները գիւրացնելու, եւ չէզոքացնելու համար կասկածելի տարրերը, հանել զանոնք սահմանամերձ գիւղերէն ու քաղաքներէն և փոխադրել իրենց յարմար տեսած վայրերը, տեղական իշխանութեանց ակնկալութեամբ։

Միքայէլ զգաց որ երկրորդ յօդուածը ուղղուած էր մասնաւորաբար իր հայրենակիցներուն դէմ։ Գիտէր՝ թէ ի՞նչ կը նշանակէր հայ ըլլալ ու թուրքերու մէջ ապրիլ այսպիսի պայմաններու մէջ։ Գայլին ու գառնուկին յաւիտենական պատմութիւնն էր միշտ։ Ինչ որ սովորութիւն էր, հիմա կը վերածուէր օրէնքի։ Կառավարութիւնը գայլերուն կը պարտադրէր բզկտել գառնուկները։

Միքայէլ ճշգրտօրէն չէր գիտեր, թէ ինչո՞ւ պինք արգելափակած էին այս սենեակին մէջ, բայց վստահ էր որ քանի մը ժամէն պինք պիտի դասէին դատաւաններու եւ լրտեսներու կարգին, պարզապէս որովհետեւ հայ էր։ Անպաշտպան դառնուկը յօշոտելու համար, գայլը կը ստեղծէ հազար ու մէկ պատրուակ եւ աշխարհ իրաւունք կու տայ գայլին։

Դուռը բացուեցաւ վերջապէս, եւ

digitised by A.R.A.R.@

սպան նշան մը ըրաւ, որպէսզի Միքայէլ իրեն հետեւի։

– Պարո՛ն Պարթեւեան, – ըսաւ պաղ ու հեգնող քաղաքավարութեամբ մը, – կը ներէք որ ձեզի շատ երկար սպասցուցի։ Իշխանութիւններու որոշումը ձեր մասին տակաւին նոր հասաւ եւ հաղարապետը կը փափաքի ձեզի հետ խօսակցութիւն մը ունենալ։

– Եւ յետո՞յ։

– Ձեր ըսածներէն իմացայ, թէ կը վերադառնաք ձեր ընտանիքին մօտ եւ արդէն ձերիններուն իմացուցած էք ձեր ժամանումը հեռագրով մը։ Եթէ կը փափաքիք, ձեր անունով կը ղրկեմ երկրորդ հեռագիր մը, ըսելով որ կամքէ անկախ պատճառներով ձեր ժամանումը բաւական պիտի ուշանայ։

– Ի՞նչ իրաւունքով ինծի կ'արգիլէք որ չարունակեմ ճամբաս։ Ես Օսմանեան կայսրութեան հաւատարիմ քաղաքացին եմ։ Ի՞նչ յանցանքով կ'ամբաստանէք զիս։

– Ոչ մէկ յանցանքով։ Դուք Օսմանեան կայսրութեան հաւատարիմ քաղաքացին էք· մեր հայրենիքը պատերազմի մէջ է· չէ՞ք ուզեր այս քաղաքական պայմաններու մէջ օգտակար ըլլալ ձեր երկրին։ . . .

– Պատրաստ եմ քաղաքացիի իմ լրիւ պարտականութիւնս կատարելու։

– Ապրի՛ս, ահա այդ խօսքը կը սպասէի ձեզմէ։ Դուք մասնագէտ երկրաչափ էք ճամբաներու եւ կամուրջներու։ Այս օրերուս լաւ երկրաչափ մը աւելի կ'արժէ, քան զինուորական վաշտ մը։

Սպան պահակ մը կանչեց եւ հրամայեց։

– Կայարանապետին ըսէ որ կրնայ չոգեկառքը ճամբայ հանել անմիջապէս։

Հաղարապետը նստած էր գրասեղանին առջեւ եւ կը թղթատէր Պարթեւեանին անցագիրը։ Նիհար, ջղուտ ու խիստ մէկն էր։

– Երիտասա՛րդ, – ըսաւ, – այս անցագիրը կը վկայէ որ դուն չորս տարի Զուիցերիոյ Լոզան քաղաքը մնացած ես։ Ի՞նչ կ'ընէիր հոն։

– Երկրաչափական ֆաքիւլթէի ուսանող էի։

– Ակէ զատ ինչո՞վ կը զբաղէիր։ Ինչպէ՞ս կրցար չորս տարի հեռու ապրիլ ընտանիքէդ։ Ժամեւ կ'երթայի՞ր յաճախ։

– Ո՛չ այնքան, որքան կը փափաքէի։

– Ինչո՞ւ կը փափաքէիր աւելի յաճախ ժամեւ երթալ։

– Որովհետեւ ժամեւ աւելի կենսունակ եւ աւելի հաճելի քաղաք մըն է, քան Լոզան։ Եւ հոն կ'ապրէին մեծ թիւով ծանօթներ։

– Երբեք այցելա՞ծ ես «Իրօշակ» թերթի խմբագրատունը։

– Երկու կամ երեք անգամ ընկերներս հոն տարին զիս։

– Երբեք ներկայ եղա՞ծ ես կոմիտէներու կազմակերպած ժողովներուն։

– Ո՞ր կոմիտէներու։

Հաղարապետը իր ծեր բազէի աչքերը յառեց Միքայէլի աչքերուն։

– Յեղափոխական Կոմիտէներու, Դաշնակ կամ Հնչակ, որոնք երեսուն տարիներէ ի վեր կ'աշխատին Թուրքիան փճացնել հուրով եւ սուրով։

– Գիտեմ որ կազմակերպութիւններ կան, որոնք կ'աշխատին Թուրքիոյ մէջ տարածել արդարութեան, յառաջդիմութեան եւ ազատախոհ գաղափարներ. բայց չեմ լսած միւս կազմակերպութիւններու մասին, որոնք ըստ ձեզի հուրով եւ սուրով կը ջանան փճացնել Թուրքիան։

– Կը բաւէ՛· ճառ մտիկ ընելու ժամանակ չունիմ։ Գիտենք որ զրկուած ես հայ Կոմիտէներու կողմէ, որոնք ներկայիս կ'աշխատին մեր թշնամիներուն հետ, երկրին մէջ կազմակերպելու համար զինուած խումբեր, արիւնարբու տէրորիստներ, որպէսզի մեր քաջարի բանակը զարնեն կռնակէն, ճակատէն հեռացնեն մեծ թիւով զինուորներ եւ դիւրացնեն մեր թշնամիներուն գործը։ Ինձի պէս կան ուրիշներ, հարիւրաւոր ուրիշներ, որոնք կը սպասեն իրենց

digitised by A.R.A.R.@

ժամուան։ Մենք այս բոլորը դիտէինք առաջուընէ եւ առած ենք պէտք եղած նախազգուշութիւնները։ Այսուիւ Համիտ չատ մեզմ գտնուեցաւ ձեր հետը. ձեր ահաբեկիչները քանի անգամներ փորձեցին գինք սպաննել...

– Եւ ինք անմեղ գառնուկ մըն էր, այդպէս չէ՞, էֆէնտի՛։ Մ՞ով ջարդել տըւաւ երեք հարիւր հազար անմեղ ու անպաշտպան կիներ եւ մանուկներ։

– Կարծեմ թէ քանի մը ամիսէն այդ թիւը չնչին կոտորակի մը պիտի վերածուի։ Որովհետեւ այս անգամ ամէն ինչ պիտի գործադրուի պաղարիւնութեամբ եւ մեթոտով։

– Մենք միշտ եղած ենք հնազանդ եւ խաղաղասէր քաղաքացիներ։ Ուրիշ դարերէ ի վեր դուք մեզ կը շահագործէք, կը շաբշաբէք ու կը ջարդէք եւ մենք կը լռենք։ Դուք կը յափշտակէք մեր ինչքերը, մեր գաւակները, մեր կիները եւ մենք ձեզ կ'օրհնենք...

– Խաղաղասէր եւ հնազանդ ժողովուրդները ապրելու իրաւունք չունին. կ'ապրին այնքան ատեն որ օգտակար են զօրաւորին, երբ կը դառնան վնասակար՝ կը ջարդուին անխնայ...

– Բարեբախտաբար ձեզմէ զօրաւոր ազգեր չատ կան, եւ ձեզի օր մը վճարել պիտի տան ձեր բոլոր վայրագութիւնները...

– Միամի՛տ տղայ. միշտ ջարդարարին իրաւունք կը տրուի զօրաւոր ազգերու կողմէ. ջարդուողները միշտ յանցաւոր կը նկատուին։ Գալով քեզի, այսօր իսկ պիտի զրկուիս վայր մը, որ կը գտնուի Թասուլայնի եւ Թաքքայի միջեւ, Սուրիական անապատին մէջ։ Հոն պիտի զրկուին ուրիշ երկրաչափներ ու գործաւորներ, ու անոնց հետ միասին պիտի գործադրես քու չինարարական ձիրքերդ։ Հաստատած ենք արդէն հսկայ ճամբար մը, ուր պիտի ապրին քսան հազարի չափ մարդիկ, քսան հազար հայ ոտրուկներ, միայն պահակները պիտի ըլլան Թուրք։ Ընտրեցինք հայեր, որովհետեւ անոնք աշխատասէր ու տոկուն են։ Պիտի չինէք հսկայ կամուրջ մը, Եփրատի վրայ, երեք ամիսէն։ Հարիւրապետը պէտք եղած կարգադրութիւնները պիտի ընէ։

Միքայէլ ելաւ դրասենեակէն եւ քնաշրջիկի մը պէս հետեւեցաւ սպային։ Մարդ ըլլալէ դադրած էր այլեւս, եւ արգելափակուած էր անտեսանելի շրջանակի մը մէջ, որ երթալով կը նեղնար։ Շրջանակէն անդին կը տարածուէր մահուան անսահման թաղուորութիւնը. իսկ ներսը կար չարչարանք, նուաստացում, ակռաներու կրճտում եւ յուսահատութիւն։

Ն. Ջ.

(Շար. 1)

digitised by A.R.A.R.@

ՅՈՎՀԱՆՆԷՍ ՇԻՐԱԶ

ԲԱՆԱՍՏԵՂԾԻ ԲՈՂՈՔԸ

Ինձ ասում են՝ ինչո՞ւ համար էլ չես երգում նորը
Թո՛ղ Մասիսի ձիւնը մարմար, իջիր կեանքի ձորը:

Թո՛ղ բուի բոյն աւեր Անին, քոզ հինաւուրց Վանը,
Վանայ ծովը քոզ Սիփանին, երգիր Երեւանը:

Ով բանաստեղծ, բաւ չէ՞ տանջես դու քեզ մեք հին ցաւով,
Բաւ չէ՞ վշտիդ վրայ խաչուես՝ գերուես Վանայ ծովով:

Թո՛ղ հառաչող բանտուած ծովը իր հին աղջամուղջում,
Քո Սեւանայ ազատ հովը մեզ հետ քեզ է կանչում:

Ի՞նչ ես մեխել սին երազում աչքդ Արարատին,
Դու անհասից ի՞նչ ես ուզում՝ խղճա՛ դու քո սրտին:

Թո՛ղ մթնաւեր Ղարսն ու Անին, քոզ վիրաւոր Վանը,
Տես՝ արեւ է Հայաստանին դառել Երեւանը:

Ուրախ երգիր, էլ չի սազում հին ոգբը նոր վարդին,
Մեռած հեռուից ի՞նչ ես ուզում, երբ կեանք է քո չորս դին:

Դու ամէնից լաւ կը վրձնես՝ թէ նկարես նորը,
Եւ կը պաշտեն վերեւն էլ քեզ, ինչպէս վարը, ձորը...

– Ի՞նչ եմ անում պաշտամունքը, երբ չէք յիշում Անին,
Երբ կարօտ է հոգն ակունքը իմ մայր Երեւանին:

Ծաղկում է նոր Երեւանը, ձեզնից լաւ եմ տեսնում,
Բայց բանտում է իր քոյր Վանը, մրմունջն ինձ է հասնում:

Բողոքում եմ խլողի դէմ, եւ թէ ձեր դէմ, վայ՜թ,
Որ չէք թողնում գոնէ երգեմ բանտուած Մասիսը մեր:

digitised by A.R.A.R.@

Մայրն ազատուած որդու համար սրտով է ծափ տալիս –
Բայց բանտուածին յիշում՝ հազար սրտով է միշտ լալիս։

Համբուրում է ազատուածին, սրտին է միշտ սեղմում,
Յիշում անմեղ իր բանտուածին՝ մօր վիշտը չի մեղմում...

Թուերի տակ ազատուածը, կուլ չի գնում, սակայն,
Հարազատ մօր կիրած հացը, – ես էլ այդ մօր նման...

Միայն խորքն է, որ փառաւոր ազատուածին գրկում,
Բայց բանտուածին իր հեռաւոր ո՛չ մի օր չի սգում։

Վայելում է խորքն անբարիշտ՝ գրկած որդուն ազատ,
Այն ինչ՝ բանտուած որդուն է միշտ յիշում մայրն հարազատ։

Նրա մասին շատ է խորհում, քան թէ ազատուածին,
Բանաստեղծն էլ, խորք աշխարհում, մայրն է միշտ՝ ընկածի...

Միշտ հեռաւոր որդու հետ են մօր մտքերը բոլոր,
Արցունքները գաղտնի գետ են իր սրտի մէջ մոլոր։

Միտք է անում գիշեր ու զօր գերի որդու մասին,
Որդին թուում է մերկ, մոլոր, մի շղթայուած լուսին։

– Հաց տուեցի՞ն որդուս արդեօք, ջուր տուեցի՞ն որդուս, –
Մտածում է մայրն անամոք գիշեր ու զօր անյոյս։

Չլինի՞ թէ ծեծում են դեռ, սրտի բերդն են քանդում
Չլինի՞ թէ մեռաւ անտէր որդիս օտար բանտում...

Ես էլ այսպէս մի մօր նման, բայց եօթ որդի ունեմ,
Եօթն էլ բանտում՝ սեւ ամպի տակ ու դեռ մի լուր չունեմ։

Բայց որդին ի՞նչ, բիւր որդի է մի բուռ հողն էլ վանի,
Հազար որդի ես կը զոհեմ հողին իմ Սիփանի։

Իմն Անին է, Մուշն ու Վանը, Ղարսը, Տարօն, Մասիս,
Գիտեմ՝ յոյսն է Երեւանը՝ միակ յոյսը ազգիս։

Երբ գերի է հողն անտահման կոդմին Երեւանի, –
Ո՞նց հարազատ մի մօր նման չհառաչեմ՝ Անի՛...

Երբ կրակիս այսքան մօտ են ձիւներն Արարատիս՝
Ինչպէ՞ս չլամ, երբ կարօտ է ձիւնն էլ վառուող սրտիս։

Ես այստեղ եմ վառուում իրաւ, Մասիսի ձիւնն այստեղ,
Չէք հասկանայ դուք ինձ բնաւ, ով աթոռներ շքեղ։

digitised by A.R.A.R.@

Ոչ թէ իրաւ ես չեմ սիրում իմ յաղթ Երեւանը, –
Այլ գերին է խիզես գերում՝ գերի Ղարսն ու Վանը:

Ես ուզում եմ ազատ լինեն որդիքն իմ հարազատ,
Նօթն էլ մէկէն հօթը ծնեն՝ Հայաստանով ազատ:

Ազատուածը մի գեղակ է, ծովը՝ բանտուած է դեռ,
Աւա՜ղ, նայէ՛ք; ամպի տակ է իմ յոյսն, ինչպէս մի լեռ:

Հերիք սիրտս դուք ծուատէք, կը փոշմանէք վերջը,
Մասիսներս թրք կ'ազատուեն՝ վէրք կը թողնի վէրը:

Ձէք գտնելու (թէ շատ տանջէք···) տեղն էլ գերեզմանիս,
Ձեզ կը ծաղրէ արձանն իմ սէգ՝ վաղուայ ծաղկոզ Անիս···

Կը մասիսուի կեանքն իղձերիս՝ ձեր մոռացուած շիրմին,
Ես անմեռ եմ ինչպէս Մասիս, իսկ դուք՝ ինչպէս քամին:

Ինձ չի սասնի ձեր անաստուած գազանի ահասաստը,
Արարատին եմ ես ձուլուած, ինչպէս Արտաւազդը:

Այս ճոխը ձեզ ··· թող հայ հոգիս աւերակներն ինձ տան,
Միակ դեղն է վիրաւորիս հողն հայրենի իմ տան···

Ես Արտաւազդ արքան եմ հէգ՝ կապանքի մէջ վշտիս,
Կարօտ լեռանցս հազար ու մէկ, կարօտ Մշոյ դաշտիս···

Կարօտ Վանայ ու Սիփանայ հոգին իմ հեռաւոր,
Խարխափում եմ ճոխ Սեւանայ լոյսի մէջ էլ այս նոր:

Ո՛վ չի սգում այս իմ վշտով, ո՛վ չի լալիս ինձ պէս՝
Աքոռ է նա իր քար սրտով՝ ձեր ո՞րն ասեմ ես ձեզ:

Դուք էք խորքը, ես հարազատ մայրն եմ իղձ-բալիկի,
Պիտի տեսնեմ Մասիսն ազատ՝ գրկում հայ գալիքի:

Պիտի բացուեն հայոց յոյսին ճամբաները կապան,
Ես կը մնամ միշտ Մասիսին, որպէս Նոյեան տապան:

Ինչպէս իրարուց չեն գտնուի իմ աչքերը երբեք,
Իմ Սեւանից չի բաժանուի Վանայ ծովն էլ իմ հէգ:

Ձեն գտնուի, չէ, յաւերժուած են, ուսերիս պէս, ո՛վ սուգ,
Արարատն ու Արագածը՝ ազգի ուսերն են գոյգ:

Հայկի վառած մայրն օջախի երկու քարերն են հոծ,
Արարատ լեռն հայոց հոգի եւ Արագածն հայոց:

digitised by A.R.A.R.@

Ինձ չի սաստի ձեր սնգուրուած գաղտնի մահասաստը,
Արարատին եմ ես ձուլուած, ինչպէս Արտաւազդը:

Նեռնագործ այն օրերում ինձ Աստուած է ծնել,
Եւ քար, անգութ այս խենթ դարում իմ խիղճը չի քնել:

Դու լռում ես, ես չեմ լռի, ես հայազատ մայրն եմ,
Ա՜խ, ձեր մէջ էլ ես՝ Ակռռի, կարծես Մասիս սարն եմ:

Անմեղիկ է բանաստեղծի բողոքն իմ հայարդար, –
Մի կտրէ ջուրն իմ ջաղացի, կը փոշմանես, ո՞վ դար:

Նզբայրութեան գործն է վսեմ՝ Մասիսն հանել բանտից՝
Թէկուզ ինչ-որ ցեղ մի նսեմ՝ հաթաղանուի խանդից...

Արիւն ես չեմ տեսնում, երբեք, բացուիր կլոր սեղան,
Հայոց հողը հային տուէք, թող ձեզ բարիք տեղան:

Ամէն մի ազգ իր մայր հողով, հայն իր հողով ծաղկի,
Տուէք Մասիսն իր հող ցեղով՝ ողնաշարն իմ ազգի:

Բանտից հանէք, ոչ թէ գերբից, ախ երբ պիտի հանէք,
Քառասուն տարի յոգնեց *երբից* բանաստեղծն էլ այս հէգ:

Ազգե՛ր, հարցրէք դուք ձեր խղճին, Մասիսն հայոց է զուտ,
Բուժէք հայոց վէրքն էլ վերջին՝ թէ հղբայր էք անուտ:

Մահիկ, աստղ է հայոց յոյսը՝ արդար է հարցն հայոց,
Միշտ չի մնայ սարս դուրսը, շատ մի ցնծա՛, ա՜յ օձ:

Թէկուզ գերբից Մասիսն հանէք, մեր սրտից չենք հանի՝
Ջէ, կ'ազատուի Մասիսն էլ հէգ՝ վառ երազը Հայաստանի...

Ինչքան էլ որ այժմ տաղուեմ, պիտի յաղթեմ ես ձեզ,
Ես Մասիսն պիտի թաղուեմ, Նոյան տապանի պէս:

Հայաստանս կը մեծանայ, Աստուած ինքն է տալիք
Վանայ ծովից մինչեւ Սեւան ծովից ծովով գալիք...

Հառաչում եմ այս էլ կէս դար, բայց վիշտն էլ վերջ ունի,
Այս կռռմ կ'անցնես իմ լեռնաշխարհ, իմ ծովի հետ Բզնունի:

Գանգի ետս, լակ ետս չէ, ոգջ իմ ազգն է վսեմ,
Այս կռռմ կը գայ Մասիսն էլ վեհ՝ մեռած տեղս էլ կ'ասեմ:

ՑՈՎՀ. ՇԻՐԱԶ

digitised by A.R.A.R.@

ՍՈՒՐԷՆ ՍԱՆԻՆԵԱՆ

ՀԱՆՐԱԿԱՌՔԻ ԿԱՆԳԱՌՈՒՄ

Արեւոտ մի դեղեցիկ օր էր։

Արամ կանգնել էր քաղաքի կենտրոնական փողոցներից մէկ անկիւնում եւ հանրակառքին էր սպասում։

Հանրակառքին սպասող ուրիշ շատերը կային։ Այդտեղ էր միջին տարիքի մի մայր, իր գեւահաս աղջկայ հետ։ Մայրն աղջկան ինչ-որ բան էր պատմում։ Աղջիկը լսում էր մօրը, բայց չփոթումից չգիտէր, թէ հայեացքը ո՞ր ուղղութեամբ պահէր, որովհետեւ մի պատանի, առանց ծածկելու իր հիացումը, յամառօրէն նրան էր նայում եւ ժպտում հասկանալի։ Մի քիչ այն կողմը մի պառաւ կին քայլելուց եւ սպասումից յոգնած, անվերջ սրան-նրան հարցնում էր, թէ ե՞րբ պիտի գայ հանրակառքը։ Ոչ ոք չգիտէր, եւ բոլորն իրենց ուսերը վեր էին բարձրացնում տարակուսանքով։

Արամ նայում էր այդ ծեր կնոջը, եւ զարմանում, թէ ինչո՛ւ նա այժմ տանը չէ, եւ չի խաղում իր թոռնիկների հետ։

Բայց ամէնից շատ նրա ուշադրութիւնն գրաւուած էր մի թերթով, որը կարդում էր մի ծերունի։ Այդ թերթի տառերն այնքա՛ն օտար էին եւ այնքան տարօրինակ տեսք ունէին, որ նա իր հոգում հիացած էր այդ ծերունիով, որ կարողանում է կարդալ այդ բարդ գրերը։

Հանրակառքը չէր գալիս, իսկ սպասողների թիւը գնալով մեծանում էր։ Յանկարծ նա իր վրայ բռնեց մի կնոջ հայեացք։ Կինը ծիծում էր, եւ սիրայրին աչքերով նրան դիտում։ Նա դէմքը շրջեց։ Նա տանել չէր կարողանում կանանց հետապնդումն իրեն կամ էլ որ նրանք ծիծում էին փողոցում։ Մօտ վեց տարեկան իր տղայի ձեռքից բռնած՝ եկաւ մի կին եւ կանգնեց նրա մօտ։ Տղան լաց էր լինում առանց պատճառի, իսկ մայրը ջղայնօրէն ձգում էր նրա ձեռքը եւ միշտ նոյնը կրկնում.

— Լռի՛ր։ Քեզ ասում եմ, լռի՛ր։

Տղան լացը չէր կտրում։

Պառաւ կինը ձեռքը դրեց տղայի գլխին.

— Հիմա կը գայ։ Հանրակառքը ա՛ւր որ է, հիմա կը գայ, երեխա՛։

Փոքրիկ տղան ջղայնօրէն իր գլխից հեռացրեց ծեր կնոջ ձեռքը։ Երեւում էր, որ նրա հոգը չէր, թէ հանրակառքը շուտով պիտի գար, թէ ամենուին էլ պիտի չգար։

Ծեր կինը ծիծաղեց չփոթուած։ Տղայի լացից անհանգիստ, զարմանալի

digitised by A.R.A.R.@

տառերով լրագիր կարդացող ծերունին, մէկ վայրկեան իր հայեացքը հեռացրեց թերթից, լացող տղային նայեց, ուզեց մի բան ասել, բայց զլխաց, եւ շարունակեց իր ընթերցումը։

Արամ թեքուեց տղայի վրայ, ժըպտաց նրան, եւ հարցրեց.

– Ի՞նչ է քո անունը։

Տղան լացը կտրեց եւ սկսեց նրան նայել զարմացած, թէ ո՞վ է այդ անծանօթը, որ հարցաքննում է իրեն։

– Ասա՛, քեռուն ասա, թէ ինչ է քո անունը, – տղայի ձեռքից քաշեց մայրը։

Սակայն, ինչպէս երեւում էր, փոքրիկն ուզում էր գաղտնի պահել իր անունը։

Այդ ժամանակ էր, որ ամբոխի մէջ թեթեւ շարժում սկսուեց։ Արամն ուղղուեց տեղում, ենթադրելով, որ հանրակառքն է գալիս։

Ամէնքը փողոցն ի վեր էին նայում։ Դէպի այն կողմն էր նայում եւ անվերջ ակնոցներն ուղղում նաեւ զարմանալի եռաերով լրագիր կարդացող ծերունին։

Երբ Արամն էլ նայեց, տեսաւ որ կենտրոնական փողոցը կտրող փողոցն էր անցնում, եւ զէպի իրենց գալիս մի երիտասարդ կին, որ հազիւ քսանից-քսանըմեկ տարեկան լինէր։

Այդ կինը բնութեան ստեղծագործութեան մի հրաշալիք էր։

Արամ երբեք այդքան գեղեցիկ կին չէր տեսել իր կեանքում։

Ամէնքն աղջկան էին նայում։ Նրան էր նայում կենտրոնական եւ այն հատող փողոցի մայթերով քայլող ամբոխը։ Նրան էին նայում խաչմերուկի կենտրոնում կանգնած ոստիկանը եւ կանաչ լոյսին սպասող վարորդները։

«– Ահա՛ նա, որին փնտռում էի», – մտածեց Արամ։

Այդ կինը կարծես չէր քայլում, այլ պատգամաւորանաւի նման սահում էր ծովի մակերեսով։ Նա իր հետ գեղեցկութիւն եւ հրճուանք էր բերում։ Ինչքան նա մօտենում էր, այնքան բացայայտ էր դառնում նրա չքեղութիւնը, որ զգլխիչ հեթանոսական էր։

Ահա ձիւնի պէս սպիտակ եւ մինչեւ ծնկերն իջնող կարճ շրջազգեստի տակից երեւացող նրա մեղրագոյն ու դծագիր սրունքներն եւ ծնկավերեւները։ Ահա նրա նեղ մէջքը, փարթամ կուրծքն ու բարակ ու երկար վիզը։

Երբ աղջիկը փողոցից դուրս եկաւ մայթի վրայ, Արամ տեսաւ նրա, կարծես ոսկուց ձուլուած գեղեցիկ գէմքը, կանաչ աչքերը եւ ճոխ մազերը։

Ամէնքը կարծում էին, որ նա գալիս է հանրակառքին սպասելու համար, բայց նա ուզեց անցնել, եւ ամբոխը հիացած նրանով՝ ճեղքուեց, նրան ճանապարհ տալու համար։

Երբ գեղեցկուհին մի քիչ անցաւ, Արամ տեսաւ նրա ծործորուն գիստերը եւ վեր ու լեցուն կոնքը։

«– Ա՛ը...», – հառաչեց ամբոխը։

Երբ աղջիկն անցաւ, Արամին թուաց, թէ կեանքի գեղեցկութիւնն էր, որ անհետ անցաւ։ Եւ ինչպէս ամէն մի անմատչելի գեղեցկութեան համար, նա այժմ եւս մեծ տխրութիւն զգաց։ Այնպիսի մի խոր տխրութիւն, որ ուզեց այդ լացող երեխայի նման ինքն էլ լաց լինէր։

Ջոեսնուած տառերով լրագիր կարդացող ծերունին չըմուել, գեղեցկուհու յետեւից էր նայում ակնապիշ, երբ մէկ էլ իր սրբազան տառերով թերթը նետեց մայթին եւ սկսեց ոտքերով տրորել այն, իր լեզուով ինչ-որ բառեր ասելով։

Թէեւ Արամի միտքը չէր աշխատում, բայց նա զգում էր, որ մի բան պիտի անել, այլ կերպ կարող էր խենթանալ, կամ էլ այրուել մոխիր դառնալ եւ կամ էլ ամառնային արեւի տակ ընկած մի կտոր սառոյցի պէս հալել, ջուր կտրել։

Ինչպէս երեւում էր, Արամի մօտ կանգնածները նկատել էին նրա յուզումն ու լարուածութիւնը, եւ այժմ նրան էին նայում խղճալով նրան։ Դեռահաս աղջիկը նրան նայելով՝ ինչ-որ բան ասաց մօր ականջին, իսկ մայրը օրօրեց գլուխը։ Ծեր կինն Արամին էր նայում, տատանելով գլուխը եւ չարժելով իր դու-

digitised by A.R.A.R.@

նաև չրթունքները։ Զարմանալի տաքերով թերթ կարդացող ծերունին մոռանալով իր անձնական յուզումը, մի քանի անգամ ձեռքը պարզեց բռնելու համար նրա թեւը, բայց երեւի չհամարձակուեց։ Դեռահաս աղջկան դիտող եւ նրան ժպտացող պառաւին, այժմ աղջկան թողած, նրան էր դիտում, ցաւակից հայեացքով։ Լացող երեխան, որ հենց սկզբից հեռաքրքրուել էր նրանով, այժմ աչք չէր կտրում նրանից։ Երեխայի մայրը նրան էր դիտում, եւ ղեպին շարժումով սրբում էր իր զարդաշապիկի վրայի երեւակայական փոշին։

Ցանկարծ նա հառաչեց խորապէս եւ ամէնքը լսեցին այդ։

– Ա՜ը…, – ցաւակից տնքացին նրանք։

Նա ձեռքի երեսով տրորում էր այրըւող ճակատը, երբ դեռահաս աղջկայ մայրը քաշեց նրա թեւնոցից.

– Գնացէք նրա յետեւից… Ո՞վ գիտի… Գնացէք եւ փորձեցէք…

– Ի զուր է, – միջամտեց պառաւ կինը, – ի զուր է։ Նա չափազանց զեղեցիկ է, որպէսզի համաձայնի հանրակառքով գնացող մէկի հետ…

– Փորձել միշտ էլ կարելի է,– պընդեց դեռահաս աղջկայ մայրը։

– Մեղք է մեր ազան, – յամառեց պառաւը, – ի զուր է…

«Մեր ազա՞ն», զարմացաւ Արամ։

Նա չգիտէր, որ հանրակառքի սպասման այս կէս ժամուայ ընթացքում արդէն հարազատներ էր ձեռք բերել իր շուրջը։

– Եթէ նա չգնայ եւ չծանօթանայ այդ աղջկայ հետ, կարող է հիւանդանայ, – ասաց դեռահաս աղջկայ մայրը։

Այս անգամ պառաւը լուռ մնաց։

Արամ նայեց զարմանալի տաքերով թերթ կարդացող ծերունուն։ Սակայն ծերունին դէմքը չրջեց, երեւի ցանկանալով ձեռնպահ մնալ։ Նայեց լալկան երեխայի մօրը, իսկ նա ցնցեց գլուխը։ Միայն դեռահաս աղջիկը, նրա մայրը եւ դեռահաս աղջկանով հիացած պառաւին նրան ժպտացին քաջալերական։

Ցանկարծ նա պոկուեց տեղից եւ վազեց հեռացող զեղեցկուհու յետեւից։

– Ցաջողութի՛ւն, – ասաց դեռահաս աղջկայ մայրը։

– Ցաջողութիւն, – ասաց ծեր կինը։

Շտապելուց նա ժամանակ չունեցաւ շնորհակալութիւն յայտնելու նրանց, եւ շարունակեց վազել։

Մայթով յետ ու առաջ շարժուող անցորդների միջից զեղեցկուհին չէր երեւում, բայց քանի որ մարդիկ մէկ ուղղութեամբ էին նայում եւ դէմ ու դէմ եկողները չրջւում յետ էին նայում, նա հասկացաւ, որ աղջիկն հեռու չէ։ Ամբողջ փողոցը նրա զեղեցկութեամբ էր լեցուն։

Շուտով նա տեսաւ նրան։ Հասաւ եւ քայլելով նրա կողքով, ասաց առանց հախարանի.

– Թոյլ տուէք ուղեկցել ձեզ…

Աղջիկը նայեց նրան եւ ժպտաց.

– Եկէք։ Ես գիտէի, որ դուք պիտի հետեւէք ինձ։

– Բայց դուք ինձ անձամբ չէք տեսել, – ասաց նա, զարմացած, թէ ինչպէս աղջկայ կողքից, նրա ամբողջ էութիւնից, զեղեցկութեան հմայքը ծորում է ու ողողում իրեն, խտուտ-խտուտ անում իր սիրտը, քրքրում կոկորդը։

– Կանայք կարիք չունեն մէկին անձամբ տեսնելու, գիտնալու համար, որ նա պիտի հետաքրքրի իրենց, – նոքից ծիծաղեց աղջիկը։

Քայլելով այդ աղջկայ հետ, նա իրեն երջանիկ էր զգում։ Այնքան երջանիկ, որ ուզում էր հենց այդտեղ փողոցում, երգել ու պարել։

– Բայց ո՞ւր էք նկատել ինձ,– հարցրեց Արամ, թէեւ ուզում էր լուռ մընալ ու գիտել նրան։

– Այնտեղ, հանրակառքի կանգառում, բազմութեան մէջ։

– Բայց դուք չնայեցիք ինձ վրայ։

– Տեսայ…

Դէմ ու դէմ եկող տղամարդիկ աչքերով լափում էին աղջկան, եւ նախանձում Արամին։

digitised by A.R.A.R.@

– Դուք իմ ուզածն էք, – ասաց Արամ։

Աղջիկն աչքերի անկիւնով նայեց նրան եւ հառաչեց։

– Դուք չէ՞ք ուզում, որ ես քայլեմ ձեզ հետ, – հարցրեց նա չփոթուելով գեղեցկուհու հառաչանքից։

– Ո՛չ։ Ոչ այդ, – իր գեղեցիկ գլուխն օրօրեց աղջիկը, – այլ···

– Ի՞նչ··· Ասացէք···

– Մենք իրար համար չենք··· Եւ ես ցաւում եմ···

– Հաստա՞տ···, – ընչակուր հարցրեց նա։

– Հաստա՛տ···, – թուաց թէ ամաչեց աղջիկը։

Հրճուանքի ճղփիւնը թռաւ նրա սրտից եւ տեղը լցուեց դառնութեամբ ու տարտամութեամբ։ Զղջաց, որ մօտեցել է ու խօսել այդ աղջկայ հետ։

– Ինչո՞ւ···,– բայց եւ այնպէս հարցրեց նա։

Աղջիկը մի քիչ լուռ մնաց եւ ապա խօսեց աչքերը հեռու պահած.

– Մենք տարբեր ենք հասկանում կեանքը···

– Ինչպէ՞ս դիտէք, երբ ինձ չէք ճանաչում։

Աղջիկը ծիծաղեց.

– Դուք միշտ մոռանում էք, որ ես կին եմ։

– Մե՞ծ է մեր հասկացողութիւնների տարբերութիւնը, – հարցրեց նա։

– Շատ մեծ։

– Մենք կը նուաղեցնենք այդ փոխզիջողութեամբ, – ուզեց համոզել նա։

– Հնարաւոր չէ, որովհետեւ ո՛չ դուք եւ ոչ էլ ես կարող ենք փոխուել,– ասաց աղջիկը։

– Ես ձեզ միշտ էլ փնտռել եմ, – ասաց նա, տաք, կրքոտ եւ անկեղծութեամբ։

– Թերեւս, բայց այդ բաւական չէ։ Երազը լաւ է, սակայն բաւարար չէ ինձ միայն երազով վերցնել։ Ես գիտեմ, որ գեղեցիկ եմ եւ ուզում եմ օգտուել ատրիթից··· Դուք···

– Ես միլիոն դոլար ունեմ, – ասաց Արամ։

– Ո՛չ։ Դուք միայն լաւ հոգի ունէք, – ասաց աղջիկը։

– Դուք ի՞նչ դիտէք իմ հոգու մասին, – հարցրեց նա բարկութեամբ։

– Գիտեմ, – հաստատ պատասխանեց աղջիկը։

– Դուք, որ այդքան գեղեցիկ էք եւ կանացի, ինչպէ՞ս կարող էք նիւթը գերազանցել հոգուց, – հարցրեց նա։

– Դուք կնոջը չէք հասկանում։

– Ձեմ կարծում, որ բոլոր կանայք ձեզ պէս են դատում, – ասաց նա։

– Բոլո՛ր կանայք։ Միայն նրանք ծածկում են, իսկ ես ուղղամիտ եմ···

– Դուք ուղղամիտ էք, որովհետեւ անկարող էք ծածկել այն, որին դուք ձգտում էք, – ասաց նա դառնութեամբ։

– Դուք ինձ վիրաւորում էք, – ասաց աղջիկը։

– Դուք էլ ինձ վիրաւորեցիք, – պատասխանեց տղան։

– Ես կեանքի նկատմամբ իմ իրաւունքներն ունեմ, – ուզեց բացատրել աղջիկը։

– Ես էլ ձեր նկատմամբ··· Ես երազել եմ ձեզ, իսկ դուք մերժում էք ինձ։

– Շատ պիտի ուզենայի արձագանգել ձեր երազին ··· Ես ձեզ հաւանում եմ···, – աչքերի անկիւնով նրան նայեց աղջիկը։

Նա ծիծաղեց ծաղրանքով եւ ուզեց բաժանուել.

– Ներեցէք, որ անհանգստութիւն պատճառեցի···

– Ո՛չ։ Մնացէք ինձ հետ։ Մնացէք եւ մի վարձակառք կանչէք ինձ համար, խնդրում եմ, – աղերսեց աղջիկը։

Նրանք կանգնեցին փողոցի եզրին։ Մինչ նա զբաղուած էր վարձակառք փնտռելով, ամբոխը չրջապատեց աղջիկան։ Տղամարդիկ նրան էին նայում, առանց ծածկելու իրենց հիացմունքը։ Նախանձից կանայք ուզում էին քարկոծել աղջիկան։ Մի երիտասարդ մօտեցաւ նրան, ծնկի եկաւ եւ սկսեց երկրպագել։ Ամէնքն այն համոզմանն էին, որ երի-

digitised by A.R.A.R.@

տասարդը խենթացաւ։ Երիտասարդին ոտքի հանեցին, իսկ նա չընդդիմացաւ։ Կանգնեց, սկսեց աղջկան դիտել, վիզը ծուռ եւ բերանը բաց։

– Թաքսի՛, թաքսի՛..., – կանչեց Արամ։

Վարձակառքը ժամանակին հասաւ։ Այլ կերպ ամբոխը սկսել էր ալիկոծուել եւ սեղմուել դեղեցկուհու շուրջը։ Երիտասարդներն իրենց ափերը քսում էին նրա հագուստին եւ համբուրում իրենց մատները։

Արամ ճեղքեց ամբոխը եւ մօտեցաւ դեղեցկուհուն.

– Գնանք, կառքը ձեզ է սպասում։

Աղջիկը ժպտաց նրան։

Երբ Արամը բացում էր կառքի դուռը, աղջիկը ասաց նրան.

– Մենք միմեանց համար կը լինէինք, եթէ չլինէին ձեր վերացական մտքերը։

– Այն ժամանակ էլ ես չէի լինի, – ասաց Արամ։

Աղջիկը հառաչեց։ Նա յապաղում էր նստելու կառքը.

– Մենք հանդիպում ենք, եւ թւում է, թէ գտնում ենք իրար, բայց բաժանւում, տանելով մեզ հետ մտածում, վիշտ եւ թերեւս զղջում հետագայի համար։

– Մենք մարդիկ ենք, – ասաց Արամ։

– Մարդիկ երջանկութեան համար են, – ասաց աղջիկը։

– Ո՛չ, մարդիկ տխրութեան համար են, – ասաց Արամ։

– Տխրութիւն, յանուն տխրութեա՞ն, – հարցրեց աղջիկը։

– Ո՛չ, տխրութիւն, յանուն երջանկութեան, – ասաց Արամ։

– Ես ձեզ չեմ հասկանում, – ասաց աղջիկը։

– Քիչ առաջ, դուք ասացիք, որ ես վերացական մտքերով եմ ապրում,– ասաց Արամ, – եթէ այդքան դիտէք, ուրեմն եւ գիտէք, թէ ինչ եմ ուզում ասել ես։

– Ուրեմն ճի՞շդ է, որ դուք վերացական մտքերով էք ապրում, – հարցրեց աղջիկը։

– Ոչ։ Ես տիրում եմ դեղեցկութիւնը, իսկ դուք դեղեցիկ էք։

– Դեղեցկութիւն, յանուն տխրութեա՞ն։

– Ո՛չ։ Դեղեցկութիւն, յանուն իւրացման։ Բայց մենք երբեք դեղեցկութիւնը չենք կարողանում իւրացնել։ Այդտեղից էլ՝ տխրութիւն...

– Եթէ ես համաձայնէի ձեզ հետ լինել, ձեր կինը լինել, դուք երջանկութիւն պիտի զգայի՞ք, թէ տխրութիւն...,– հարցրեց աղջիկը։

– Երկուսն էլ...

– Ինչո՞ւ։

– Որովհետեւ դեղեցկութիւնը միշտ էլ տխրութիւն է առաջացնում... Արդէն ասացի այդ մասին։

– Այդ նշանակում է, որ ես ում հետ որ լինեմ, ում հետ ամուսնանամ, նրան տխրութի՞ւն պիտի բերեմ, – հարցրեց աղջիկը։

– Ե՛ւ այո, եւ ոչ։ Նայած ում հետ կ'ամուսնանաք դուք։

– Օրինա՞կ։

– Բայց, դուք արդէն ճշդել էք, թէ ում հետ, – ասաց Արամ։

– Ինչո՞ւ նա միայն երջանկութիւն պիտի զգայ եւ ոչ նաեւ տխրութիւն, – հարցրեց աղջիկը։

– Որովհետեւ նա այդպիսին է։ Նա նիւթն է հասկանում։ Նրան երջանկութիւն են բերում ա՛յն բոլորն, ինչ նիւթական են։ Դեղեցկութիւնը, նա նիւթի մէջ է հասկանում եւ դրանից այն կողմը չի գնում եւ չի էլ կարող գնալ...

– Բայց նա առասպելական գներով նկարներ, արձաններ եւ դեղարուեստական այլ իրեր է գնում իր բնակարանը զարդարելու համար, – ասաց աղջիկը։

– Այո՛։ Բայց այդ բոլորի դեղեցկութիւնը միայն մակերեսային նշանակութիւն ունեն նրա համար։ Նա հիանում է այդ իրերով, ոչ թէ նրանց դեղեցկութեան խորքը թափանցելով, որպէսզի յետոյ տխրութիւն զգայ, այլ, որովհետեւ խոյրը դրամ է ծախսել նրանց վրայ։ Նա հրճւում է իր նեբդրած դրամով միայն...

digitised by A.R.A.R.@

– Ինչո՞ւ էք այդպէս կարծում։

– Որովհետեւ նա գեղեցկութիւնը գնում է միայն, այլ ոչ թէ ձեռք բերում համակրութեամբ եւ փոխ–հասկացողութեամբ, ինչպէս, օրինակ, պիտի գնի նաեւ ձեզ...

– Ես ծախու ապրանք չեմ, – վրդովւեց աղջիկը։

– Ես չխօսեցի այդ մասին։ Դուք ինքներդ քիչ առաջ ասացիք այդ, – ասաց Արամ անվրդով։

– Փոխադարձ համակրութեամբ, նոյնիսկ ամենամեծ սէրով ես չեմ կարող վճարել իմ բնակարանի դռան, էլեկտրականութեան անդորագրերը եւ երախաներիս համար կօշիկներ գնել, – իր դեղեցիկ գլուխը թօթուեց աղջիկը։

Արամ նայեց նրա լեցուն ու անների շրթունքներին, կանաչ ու խորհրդաւոր աչքերին, երկար թարթիչներին եւ հառաչեց.

– Հենց այդտեղից էլ սկսում է մեր տարբերութիւնը...

– Դուք ինձ խենթացնում էք, – ասաց աղջիկը։

– Ես այդպիսի մի մտադրութիւն չունեմ, – ասաց Արամ։

– Գիտեմ։ Բայց եւ այնպէս դուք սկսում էք ազդել ինձ վրայ...

Մի քիչ հեռու կանգնած ամբոխը դիտում էր նրանց, լսում նրանց խօսակցութիւնը եւ կարծում, որ նրանք ամուսիններ են, եւ հիմա իրենց ընտանեկան հարցերի շուրջ վիճում են միմեանց հետ։

«Գեղեցիկ կանայք միշտ էլ վիճում են իրենց ամուսինների հետ, ամէն տեղ, ամէնքի ներկայութեամբ», մտածում էր ամբոխը։

– Դուք անմտան էք, օրիո՛րդ..., – ասաց Արամ եւ ձեռքը պարզեց։ Նա ուզում էր, որ աղջիկը շուտ նստէր կառքը եւ հեռանար։ Նա չէր ուզում այն տպաւորութիւնը թողնել, որ տչխատում է համոզել նրան։

– Թերեւս մենք մի օր նորից հանդիպենք, – ասաց աղջիկը եւ ձեռքը դրեց նրա ձեռքի վրայ։

Արամ ցնցուեց, եւ յետ քաշեց ձեռքը.

– Ոչ։ Ես չեմ ուզում այդ...

Աղջիկը կարմրեց.

– Ինչո՞ւ...

– Զղջանամ, – ուսերը վեր հանեց նա։

– Ա՜, ես տեսնում եմ, որ դուք հըպարտ էք։ Դուք հպարտ էք, նոյնիսկ ձեզ վնասելու չափ, – ասաց աղջիկը։

– Այդ ես իմ ցեղից եմ ժառանգել, – ասաց նա։

– Ո՞վ է այդ ցեղը, – հարցրեց աղջիկը։

– Ո՛հ, դուք չէք ճանաչի։ Այդ ցեղին չեն ճանաչում, – պատասխանեց նա։

– Ես սիրում եմ հպարտ մարդկանց, – ասաց աղջիկը։

Արամ ծիծաղեց դառնութեամբ.

– Այդպէս չէ... Ցաջողութիւն ձեզ, օրիո՛րդ...

Աղջիկը նորից կարմրեց։ Փոքրձեց ցոյց տալ, որ վիրաւորուեց, բայց նրստեց կառքը եւ իջեցրեց դլուխը։ Ցետոյ նրան նայեց եւ ասաց կամացուկ.

– Շնորհակալութիւն ձեր լաւ սիրոյ համար... Նորից եմ ասում, թերեւս...

– Ո՛չ, – ասաց Արամ, – ոչ ոք ինձ պէս, ինձ չի ճանաչում։ Մենք փոխցրինք ուղիները...

– Դուք անտանելի էք, – բարեկամաբար կշտամբեց աղջիկը։

– Գիտեմ, – ասաց նա շատ լուրջ, – յաջողութիւն ձեզ։

Աղջիկը նրան նայեց ցրուած հայեացքով եւ ոչինչ չպատասխանեց։

Երբ կառքը շարժուեց եւ Արամ ելաւ մայթի վրայ, ամբոխը շրջապատեց նրան։

– Կարո՞ղ ենք հարցնել, թէ ով էր այդ երիտասարդ կինը, – խօսեց մէկը։

– Զգիտեմ, – ասաց նա եւ գնաց։

Նրան չհաւատացին։

Նա ուզում էր տեսնել ծեր կնոջը, դեռահաս աղջկան, նրա մօրը, այն պատանուն, որ այդպէս տարուել էր դեռահաս աղջկանով, զարմանալի տաւերով

digitised by A.R.A.R.@

թերթ կարդացող Ծերունուն եւ միւսներին։

Բայց ինչպէս երեւում էր, եկել էր այդ, այդքան երկար սպասուած, հանրակառքը եւ նրանք գնացել էին։

Նոր մարդիկ էին գալիս մի նոր հանրակառքի սպասելու համար։

Ցանկալի նա իրեն մենակ զգաց։ Այնքան մենակ, որ թուաց, թէ անապատում է գտնւում։ Շրջուեց ու գնաց։ Գնաց ասանց մտածելու, թէ ուր է գընում։ Եւ որովհետեւ նա օրորուելով էր քայլում, եւ դէմ ու դէմ գալիս անցորդներին, վերջինները կարծելով, թէ նա հարբած է, ժպտում էին նրան։

Քիչ յետոյ քամի եկաւ եւ սկսեց անձրեւել։

Նա մտաւ մի տան նախադուռթ, որ երեք աստիճանով բարձր էր մայթից, եւ սպասեց։

Փողոցում իրարանցում սկսուեց։ Անցորդները վազում էին զանազան ուղղութեամբ։ Գատանի աղջիկները մէկ միւսի մէջքը թակելով, աջակողից դարպասուած վառեկների նման կչկչում էին ու փախչում։

Շուտով փողոցն ամայացաւ։

Հազիւ էր Արամը մէջք տուել նախադուռթի քարէ հաստ սիւներից մէկին, երբ թաց գետնից վախեցող քայլերով նախադուռթի աստիճաններին մօտեցաւ մի տարիքոտ մարդ։ Նա երկու ձեռքով գլխի վրայ մի թերթ էր բռնել, որից ջուրը ծորում էր նրա ուսերին, մէջքին եւ կրծքին։ Չնայած իր զգուշութեանը, բայց վեր բարձրանալու ժամանակ, Ծերունին սայթաքեց, սասանուեց եւ պիտի վար ընկնէր, բայց Արամ թռաւ, բռնեց նրա ձեռքից եւ վեր հանեց։

Նախադուռթում Ծերունին թերթը կողքին պահեց այն չոքացնելու համար եւ գանգատուեց.

– Օդերեւութաբանական կայանները այս անձրեւի մասին ոչինչ չէին ասել։ Եւ ես հետս չեմ վերցրել, ոչ անձրեւանոցս, ոչ գլխարկս եւ ոչ էլ հագել կըրկնակոշիկներս...

Ծերունին լռեց այնպէս, որ թուաց, թէ խօսելու հերթն Արամին տուեց։ Բայց նա այնպէս էր արձանացել իր տեղում, որ կարծես ո՛չ տեսել էր Ծերունուն եւ ոչ էլ լսել նրա գանգատը։

Ծերունին նայեց նախադուռթի քարէ ծանր ու հնամաշ կամարներին, եւ շարունակեց խօսել.

– Ես հիմա այս կամարների տակ ապահով եմ, իսկ կինս ասանն անհանգստանում է ինձ համար։ Նա միշտ անհանգստանում է ինձ համար... Միշտ կարծում է, որ ես կարող եմ ինքնաշարժի, հանրակառքի տակ ընկնել ... Նը-ւարգարդոյնը, որ ոստիկանները կարող են ինձ բռնել եւ բանտ տանել...

Ծերունին լռեց, բայց անմիջապէս հարց տուեց.

– Ասացէք խնդրեմ, ինչո՞ւ ինձ ոստիկանները պիտի բռնեն եւ բանտ տանեն...

Այս անգամ, Արամ ուսերը վեր հանեց տարակուսանքով։ Նա սկսել էր հաւանել այդ Ծերունուն։ Նրա խօսելու ձեւերը, նրա մանկական պարզունակութիւնը։

– Դուք ամուսնացա՞ծ էք, – հարցրեց Ծերունին։

– Ո՛չ, – ասաց նա։

Ծերունին ձեռքի երեսով սրբեց երեսի խոնաւութիւնը, աչքերը կկոցեց եւ նրան նայեց ուշադիր.

– Ես ձեզ մի տեղ տեսել եմ...

Արամ նորից ուսերը վեր հանեց։ Նա միշտ այդպէս էր անում, երբ տրամադրութիւն չէր ունենում խօսելու։

Ծերունին թաց թերթը դրեց անուքի տակը, ձեռքերի մատները միմեանց միացրեց եւ սկսեց մտածել։ Մոռանալով թերթը, նա մէկ էլ ձեռքերը բացեց եւ բացագանչեց.

– Անչո՞ւշտ... Անչո՞ւշտ...

Արամ թեքուեց, բարձրացրեց թերթը եւ տուեց Ծերունուն.

– Ի՞նչ է այդ։

– Ա՛հ, քիչ առաջ, գլխաւոր փողոցում ձեզ տեսայ այդ գեղեցկուհու հետ ... Ա՛հ, այդ ի՞նչ գեղեցկութիւն էր...

digitised by A.R.A.R.@

Այդ ի՞նչ գեղեցկութիւն... Ո՞վ էր նա։

– Լուսնի վրայից...,– կատակեց Արամ։

– Ցեռ գնա՞ց։

– Ցեռ գնաց...

– Ինչո՞ւ չգնացիք հետը։

– Զուզեց, որ գնայի։

– Մերժե՞ց...

– Մերժեց։

– Բայց դուք միասին էիք։

– Միայն այնտեղ, փողոցում։

Մերունին տխրեց ու չփոթուեց։ Նա դարձաւ դէպի անձրեւը։ Երեւի ամաչում էր իր խօսակցի երեսին նայելուց։

– Իսկ ես, զառամեալս, – բառերը հատ-հատ արտասանեց նա, – նախանձեցի ձեզ... Ձեր փոխարէն ես էի ուզում լինել նրա հետ... Ես, բայց ձեզ պէս երիտասարդ ... Քայլէի հպարտանալով, թէ ինձ է պատկանում այդ չքեղ գեղեցկութիւնը... Այնտեղ գլխաւոր փողոցում, արեւի լուսէ չողերի տակ... Իսկ հիմա ամաչում եմ ձեզնից։ Դուք այստեղ էք, այս տխուր նախադասութիւնում։ Մենակ ու մոայլ ... Քիչ առաջ արեւ էր, եւ արեւի պէս գեղեցկութիւն, իսկ հիմա անձրեւ է եւ մենակութիւն...

– Ա՛հ, այդ ոչինչ է։ Մի մտահոգուէք այդպէս, – ասաց Արամ։

Մերունին չրջուեց.

– Ասո՞ւմ էք, այդ ոչինչ է...

– Այո՛։

– Ինչո՞ւ։ Չէ որ հարիւր հազար կանանցից միայն մէկն է այդպէս գերչքնաղ լինում։

– Այո, – հաստատեց Արամ, – բայց այնտեղ, գլխաւոր փողոցում, երբ ես ծանօթութիւն էի հաստատում նրա, այդ գեղեցկուհու հետ, ես գիտէի, որ վաղ թէ ուշ վերջ է գտնելու մեր բարեկամութիւնը...

– Ինչո՞ւ, – հետաքրքրուեց Մերունին։

– Ինչո՞ւ,– տխրօրէն ժպտաց Արամ,– չէ որ ամէն բան, եթէ սկիզբ ունի, ապա եւ վերջ ունի։

– Բայց, դուք դեռ նոր էիք սկսել ձեր ծանօթացումը, – դիտել տուեց Մերունին։

– Վերջերը կան, որ շուտ են գալիս, վերջերը էլ կան՝ ուշ, – բացատրեց Արամ։

– Եթէ ձեր բարեկամութեան վերջը ուշ գար, հիմա դուք այդ գեղեցկուհու հետ կը լինէիք, իսկ այդ երանելիութիւն կը լինէր ձեզ համար, – սրտանց ցաւ յայտնեց Մերունին։

– Եթէ ջանք թափէի, թերեւս հնարաւոր լինէր վերջը յետաձգել, – հենց այնպէս ասաց Արամ։

Մերունին նրան նայեց շշմած.

– Ասում էք, կարող էիք, եւ չարեցի՞ք...

– Ասացի, թերեւս, – ուղղեց Արամ։

– Ձեմ հասկանում... Այն ժամանակ ինչո՞ւ չյետաձգեցիք, – թուաց, թէ վրդովուեց Մերունին։

Նա չէր սիրում եւ երբեք էլ ուրիշներին չէր խօսում իր բնաւորութեան գծերի, իր ներաշխարհի մասին։ Ցեռոյ էլ գիտէր, որ եթէ ասելու էլ լինէր, նրան չպիտի հաւատային, որ այդպիսի մէկն է ինքը։ Սակայն այդ Մերունուն չէր կարող չասել։

– Այդ գեղեցկուհին սկզբում մերժեց ինձ, եւ ես էլ չհետապնդեցի, – ասաց նա։

– Ուզում էիք, որ նա անմիջապէս ձեր գի՞րկն ընկնէր, – բարկացաւ Մերունին։

– Այո...

– Օ՛, poj, դուք արդէն քայլում էիք այդ չնաշխարհիկ կնոջ հետ։ Դուք արդէն գրաւել էիք նրա ուշադրութիւնը։ Ուրիշները միայն դրա համար գիտէք, թէ ի՞նչ կ'անէին...

– Զգիտեմ։

– Կանայք ձեզ երես են տուել, խրեւի։ Ուրիշները ծնկի կը գային նրա առջեւ, ծնկի՛...

Մերունին ցոյց տալու համար, թէ ինչպէս ուրիշները ծնկի կը գային գեղեցկուհու առջեւ, ձեռքերը, թաց թերթով միասին, ծալեց կրծքին, ձախ ոտքը յետ տարաւ եւ աջ ոտքը ծալեց։ Ցեռ-

digitised by A.R.A.R.@

տոյ ձեռքերը բացեց ու առաջ տարաւ, իբր թէ շնորհակալութիւն է յայտնում արուած շնորհի համար։

Արամ աբոտանց ծիծաղեց։

– Այդպէս են անում, – տեղում ուղղուեց Ծերունին։

– Ես չեմ կարող այդ անել, – ասաց Արամ։

– Ինչո՞ւ։

– Չգիտեմ։

– Գեղեցկուհու հացէն գիտէ՞ք։

– Ո՛չ։

– Կարող էք փնտռել եւ գտնել։

– Չեմ ուզում։

– Չէ՞ք ցաւում, որ կորցրել էք նը-բան։

Արամ անմիջապէս չպատասխանեց։ Յետոյ խօսեց տխրութեամբ եւ կարծես Ծերունուն չէր որ ասաց.

– Ես նրան միշտ փնտռել էի եւ կարծում էի, որ նա ինձ չի մերժի...

– Ըստ երեւոյթին, նա ձեզ չի մերժել...

– Ես տանել չեմ կարողանում, երբ նիւթը դէրբասում են ինձնից, – անյայտ ուղղութեամբ բարկացաւ նա։

– Մենք, ամէնքս նիւթի գերիներ ենք, – ասաց Ծերունին։

– Դուք արդարացնո՞ւմ էք նրան, – հարցրեց Արամ։

Ծերունին ձեռքերը բացեց.

– Եթէ չեմ արդարացնում, ապա չեմ էլ մեղադրում։

Արամ սկսեց թափուռղ անձրեւին նայել։

– Արդեօք վիրաւորեցի՞ ձեզ, – հարցրեց Ծերունին։

Արամ չլսեց եւ ժպտաց.

– Ո՛չ։ Ամենեւին ոչ։

Նրանք լռեցին։

Անձրեւը չէր դադարում։

– Այս անձրեւը երկար է տեւելու, – ասաց Ծերունին։

– Ես էլ հենց հիմա այդ մասին էի մտածում, – ասաց Արամ եւ բարձրացրեց բաճկոնի օձիքը։

– Մրսեցի՞ք, – հոգատարօրէն հարցրեց Ծերունին։

– Ո՛չ։ Ուզում եմ գնալ։

Ծերունին ձախ բռունցքը կպցրեց այտին.

– Այս անձրեւի՞ն։

– Այո՛, – ասաց Արամ մտենալով նախագաւիթի եզրին։

– Մէկ վայրկեան, – ձեռքը պարզեց Ծերունին, – ասացէք, խնդրում եմ, դուք տառապո՞ւմ էք։

– Այո՛։

– Ո՞ւր պիտի գնաք հիմա։

– Ձիշդն ասած, չգիտեմ, – պատասխանեց նա, եւ աստիճաններից իջնելով, կանգնեց մայթի վրայ, չգիտնալով որ ուղղութեամբ գնայ։

– Դուք բացառիկ մէկն էք, – նախագաւիթի եզրից նրան գոռաց Ծերունին։

– Ես, ե՛ս եմ, – տխրօրէն ժպտաց Արամ եւ ձախ դաստակով, անյայտացաւ տեղատարափ անձրեւի մէջուշում։

Ծերունին հառաչեց։ Գնաց մէջքով յենուեց նախագաւիթի սիւներից մէկին եւ սկսեց մտածել։

Ս. Ս.

digitised by A.R.A.R.@

ՀԱՅԿ ՅՈՎՍԷՓԵԱՆ

ԼԵԳԵՆԴ

ԱՂՋԿԱՑ ՔԱՐՔ

1.

Հէ՛յ Բուրվարի, Բուրվարի,
Դու Բինգեոլն ես Իրանի.
Լալ ու զմրուխտ լանջերով,
Անգին թայն ես Գիլանի:
Դար է անցել ու տարերք
Քո բարձրաբերձ լեռներում,
Հազար երգ ու հազար վէրք,
Նկել անցել են հնում:

Որքա՞ն խան ես դու տեսել,
Որքա՞ն Իլխան աճուանի,
Նկե՛լ անցել են նրանք –
Թողել բերդեր, ապարանք:
Սարդդ՝ սար է մնացել,
Քարդ լեգենդ է դարձել:

«Հայրն ազատ թող լինի –
Հրաման էր Մեծ Շահի (*)

Որտեղ կամի, հաւանի,
Այնտեղ իր տունը շինի.
Էս օրհնաբեր երկնի տակ,
Քարից, հողից լիառատ,
Արդար հաց ու կաթ քամի...»
Հրաման էր Մեծ Շահի:

2.

Ձիւնազգազաթ իր տեսքով,
Շոթոբանիքուն համայից,
Ոնց Արարատ սիրաթով,
Նկուղներին ոգջունեց:
Թուխ լանջերով ջրառատ,
Դարաւանդով բերքաշատ,
Թամանդարը սիգապանծ,
Դարձաւ մի նոր Արագած:

Հէ՛յ Բուրվարի,
Բուրվարի,
Սարդդ կանաչ
Բուրվարի:

(*) Հօրքը 1606 թ. Շահ Աբաս Մեծի միջոցով Իրան զաղթեցուած հայերի մասին է:

digitised by A.R.A.R.@

Աշխարհացիր, տառապած,
Ժողովուրդը Նայիրի,
Սիրեց սարերը ծաղկած,
Դարաւանդները բերրի:
Նկել էին Սասունից,
Ու Տարօնից, Զուղայից.
Նկել էին քարաշատ
Լեռնաշխարհից Արմէնի:

«Թող կամովքն Բարձեալի,
Ժողովուրդըն այս բարի,
Առանց ժամ ու դպրեստան,
Անլոյս, անքան չմնայ...»
Այսպէս աւագ քահանան
Օծեց հիմը ժամատան,
Փահրան դարձաւ մայրաւան,
Պանդուխտ հային օթեւան:

Եւ ծաղկեցին հայօրէն,
Բազում շէներ, կամուրջներ.
Լօռստանը այն օրէն
Դարձաւ մի նոր ապաւէն:

3.

Փահրա գիւղի յանդիման,
Փարշէշ տանող ճամբեզրին,
Ոնց ձեռակերտ մի արձան,
Ճակատ տուած տարերքին,
Մնում է դեռ մինչ էսօր
Սեւաքարի մի բեկօր:
Էն հին, անցած օրերից,
Դար ու դարեր շարունակ,
Հայերն էս ծէռ անտաշին
«Աղջկայ Քար» կոչեցին:

4.

Առում են քէ
Ժամանակով,
Փարշէշ գիւղում,
Ցարգ ու պատուով,
Սուրբ պսակով
Ու մի քարձով
Ապրում էին
Մի այր ու կին՝
Ռանչպար Խէչօն,
Տըմբուզ Եղսօն:

Ռանչպար Խէչօն,
Ցաղթակազմ էր.
Դէմքը խարիւռած,
Գոնձագոյն:
Կոշտ ու կոռ էր
Ու դիմացկուն:

Գիւղի բան ա,
Ո՞վ իմանայ.
Դուռ ու դրկից,
Իրարու կից,
Խօսք մէկ արին,
Նրա ուժին,
Ցարմար տեսին
Մի սազական
Մակդիր գտան...

Ու տնէ-տուն,
Տուին, առան,
Նրա անուան
Ու ճակատին
Գինդ փակցրին՝
«Գոմէշ» Խէչօ:

Է՛ն սկզբում Խէչօն կատղեց,
Կրակ կտրեց ու փրփրեց,
Պոզ ու կոտոշ հնարողին,
Իր անունը հալվողին,
Լաւ դընքբանց,
Զիգրը հանեց:

Բայց ինչ օգուտ,
Ինչքան ծնծեց, ք-բեց, մրեց.
Ինչքան բազկի ուժ ապառեց.
Էնքան էն պէռ մականունը,
Էն անմեռոն վայ անունը,
Տըզի նման
Անուան կպաւ
Ու պոկ չեկաւ:

Վերջ ի վերջոյ,
Հերսը նստեց.
Էն անհաճոյ

digitised by A.R.A.R.@

«Գոմէշ»ի հետ
Մի կերպ հաշտուեց:

5.

Գոմէշ խէչօն
Ու իր կնիկ՝
Տըմբուզ Եղսօն
Ունէին մի,
Միաւորիկ,
Մի վարդ աղջիկ.
Անունն՝ Արփիկ,
Շարմաղ շոռիկ:

Ոնց երկնային
Լուսէ-լուսին.
Խաած-կիսաած,
Միջից հատած:

«Էս կոշտ ու կոռ
Խոշոր հօրից,
Գունտ ու կլոր
Տըմբուզ մօրից
Էսքան սիրուն
Աղջի՞կ կ'ելնի...»

Խօսում էին
Դէսից, դէնից.
Գիւղ էր, էլի,
Հազար բերան
Ու բամբասանք:

6.

Գոմէշ խէչօն երջանիկ էր.
Մի գոմ լիքը տաւար ունէր.
Արտ ու այգի, բերք ու բարիք,
Միայն, միայն մի դարդ ունէր,
Մի խոր կսկիծ որ տանջում էր,
Իր խեղճ սիրտն էր ուտում թաքուն.
Դա իր անուան «Գոմէշ» պօչն էր:

Բայց դէ, խէչօն մեծ սիրտ ունէր.
Վիշտը ծածկել, տանել գիտէր.
Կնոջն անգամ «Պոչի» մասին,
Իր անգիւման դարդի մասին,
Խօսք չէր բացում,
Չէր տրտընջում:

Էլ ինչ անէր, բախտի բան էր.
Միթէ՞ կեանքում, ոչ աշխարհում,
Մի անթերի, առանց հոգսի,
Առանց պոչի մա՞րդ կը ճարուի...
Գոմէշ խէչօն էսպէս խորհում
Ու ինքն իրեն մխիթարում:

7.

Կարմիր խնձոր է սիրուն աղջիկը,
Իր բաղի միջին, իր ծառի վրայ.
Անցնող ու դարձող նշան է բռնում,
Ու քար է նետում, իր բախտն է փորձում:
Հիմա խէչոյին հանգիստ չեն տալիս,
Գնում են գալիս, աղջիկ են ուզում.
– Ձեր բաղից սիրուն ծաղիկ ենք
ուզում...
Գնում են, գալիս, հանգիստ չեն տալիս:

Գալիս են մօտիկ հարեւան գիւղից,
Հեռո՛ւ Զարբազից ու Բոլորանից.
Ծաղիկ են ուզում, աղջիկ են ուզում –
Գոմէշ խէչոյի ձեռքն են համբուրում:

– Աղջիկս փոքր է,
ժամանակը չէ...
Շատերին էսպէս
Ճանել է, ճամբել:

8.

Գարուն է հիմա, տեղդ ու բռնկում.
Այնքան ալմաս է փշրուել, վառուել.
Այնքան զմրուխտ է անցոց հուր-հրում –
Գարուն է, ծաղկում, տեղդ ու բռնկում:

Եղսօն իր տընկիկ թուերը սոթտել,
Վառ թոնրի առաջ լուաշ է թխում.
Աղջիկը՝ հասած ծիրանի պէս շիկնել,
Մօր կողքին նստել գլտնակ է ուռում:

digitised by A.R.A.R.@

Խէչօն լիաթոք գարուն է շնչում,
Ու սրտանց օրհնում է՛ւ բախտ,
Եւ թաքիք.
Հիմա եզները լծել է բակում,
Արտը հերկելու չի էլ շտապում.
Նոյում է եզան վզին աչքերում,
Մի ամբողջ խաղաղ աշխարհ է տեսնում:

– Ինչ լաւ է էապէս,
Բախտաւոր եմ ես...
Խէչօն մըտմտում
Ու հանդ է գնում:

9.

Արտուտն է երգում ցորենի արտում.
Քարափների մէջ կամաւ կըզկզում.
Եւ հազար բողբոջ, հազար ծիլ ու ծառ,
Արեւի լոյսով շաղւում են, մեռնում:

Ահա՝ մի սիրուն նորահաս աղջիկ,
Ծաղկաձորն ի վեր նազում է, խաղում.
Ոնց սարից իջած սիգաճեմ եղնիկ,
Կանաչների մէջ՝ նազում է, խաղում:

Գամէշ Խէչոյի
Դուստրն է գեղանի,
Մի թեւը կանթել
Ու քարմ մածոնի
Բժուքն է ուսել.
Վարուոր Խէչոյին
Մածոն է տանում,
Լաւաշ-հաց տանում:

Աղջիկը նազում,
Վազում է դէս-դէն.
Ծաղիկ է քաղում,
Թիթեռ է բռնում
Հետն էլ ընկնում,
Երգում է, կանչում:

– Ա՛յ սիրուն ծաղիկ,
Ա՛յ վարդի փնջիկ,
Ծաղիկի լեզուով,
Վառ շաղի շաղով,
Ասա՛ իմ քոյրիկ՝
Ո՞վ է լինելու
Իմ սրտի սէրը,
Իմ գլխի տէրը.
Ինչպիսի՝ տղայ,
Ո՞ր սարով կը գայ...
Ասա՝ իմ քոյրիկ...»

Զրո՛ւցն ասում է,
Որ սուրբ հրաշքով,
Ծաղիկներն էապէս,
Մարդկային լեզուով,
Խօսում են կարծես –

Ա՛յ սիրուն աղջիկ,
Ա՛յ վարդի փնջիկ,
Արի, մի՛ գնա,
Մեզ ընկեր մնա՛,
Որ ամէն գարուն
Էս կանաչ ձորում
Քեզ շրջապատենք,
Կուրծքդ զարդարենք...
Մեզ մօտ կ'ըմբոշխնես
Վառ ու կենարար,
Սուրբ սիրոյ նեկտար...
. . . . . .
Արի՛, մի՛ գնա,
Մեզ ընկեր մնա՛...»:

Մինչ աղջիկը ձորն ի վեր,
Ծաղկախաղով կը մնար,
Երեք ձիաւոր զինավառ,
Հենց դէմ ու դէմ դուրս եկան:
Մի ակնթարթ ձորը լեցուեց
Դոփիւններով ահաւոր,
Ու մնջեցին ծաղիկները,
Վարդ աղջիկը սիրաւոր:

Ու անդրկեց... Շեղեց նամբան
Էն եղնիկը վախուռած,
Իսկ Լուսերը գրոհ տուին,
Կալմէջ արին աղջկան:

«... Ո՞վ Արարող, Ամենակալ, –
Աղջիկն անուժ շշնջաց, –
Ինձ թեւեր տուր, ազատ թռչեմ,
Անօրէնի ձեռք չընկնեմ,
Կամ քար կտրեմ,
Ազատուեմ...»:

digitised by A.R.A.R.@

Եւ ո՞վ հրաշք,
Ասաց–չասաց,
Աղջիկն իսկոյն
Քար կտրեց:

Ոնց հանեարեղ մի ասմունքող,
Հովն է անվերջ հովերգում.
Ժայռը՝ կանգուն ու յաւերժող,
Սիրոյ արձան է կանգնում:

10.

Էն օրուանից արձան մնաց,
Վարդ աղջիկը հեզանազ.
Ծաղիկներին ընկեր մնաց,
Քայլ մնաց:

Շընկշնկում է հովը հովտի,
Պատմում անմեռ մի հեքիաթ.
Ծաղիկներն էլ գլուխ-գլխի,
Օրօրում են վերացած:

Ու ժայռային պաղ հայեացքով,
Աղջկայ Քարն է յառնում.
Կարծես անհոգ խաղ ու տաղով,
Վարուոր հօրն է հաց տանում:

Ամէն գարուն, Ծաղկազարդին,
Աղջիկներն են ձոր իջնում.
Ծաղիկներ են դնում քարին,
Ու մուրազով խնդիրք անում,
Քարն համբուրում,
Աղօթում...:

Ոնց հանեարեղ մի ասմունքող,
Հովն է անվերջ հովերգում.
Ժայռը՝ կանգուն ու յաւերժող,
Սիրոյ արձան է կանգնում:

11.

Փարշէշ գիւղի յանդիման,
Ծաղկաձորի ճամբեզրին,
Ոնց ձեռակերտ մի արձան –
Ճակատ տուած տարերքին՝
Թեւը կանթած,
Բժուքն ուսած,
Մնում է դեռ մինչ էսօր,
Սեւաբարի մի բեկոր:

Էն հին, անցած ժամանակ,
Դար ու դարեր շարունակ,
Հայերն էս ժէռ անուշին
«Աղջկայ Քար» կոչեցին:

Հէ՞յ Բուրվարի,
Բուրվարի –
Քարդ լեգենդ
Բուրվարի:

Հ. Ե.

Թեհրան

digitised by A.R.A.R.@

ՊԵՏՐՈՍ ԳԱԼՈՒՍՏԵԱՆ

ՔԻՉ ՄԸ ԱՄԷՆ ԲԱՆ ԷՐ

Անլոյս աչքերով բարձրահասակ մարդ մըն էր Մանուկ անունով։ Ոմանց համար «Մանո» կամ «քօռ» Մանո։ «Մանուկ աղբեր» էր, սովորաբար։ Ցիշողութեանս ծնունդէն ի վեր, Մանոյի գլուխէն ծոպաւոր կարմիր Ֆէսը անպակաս մնաց, մինչեւ վերջին քանի մը տարիներուն։ Մահէն առաջ, կարճ ժամանակաշրջանով մը, մերկ-գլուխ կը պտըտէր ան։

Աչազուրկ այս մարդը ունէր անբաժան իր ղեկ-ձեռնափայտը, որ՝ անվրէպ կերպով՝ միշտ իրմէ մէկ քայլ առաջ կ'ընթանար, արագ։ Եւ ինք անոր կը հետեւէր համաչափ քայլերով եւ շտապ-շտապ, քայլող արձանի մը նման։

Փողոցին մէջ, շատ բախտաւոր էր Մանօն։ Իր ողջ կեանքին մէջ, ինք բնաւ չհանդիպեցաւ փողոցի մանուկներու ոգեւորութեան. անոնք զինք երբեք չբարկացուցին։ Շատ անգամ, անոնցմէ մէկն ու մէկը, ամենայն պատրաստակամութեամբ, անոր ազատ ձախ ձեռքէն կը բռնէր եւ զայն իր ուզած դուռը կ'առաջնորդէր։ Մանօն, խնայէս խելացի, գիտէր լաւապէս վարուիլ մանուկներու հետ, անոր սիրտը առնել, անոր հետը խօսիլ եւ զայն խօսեցնել։

Եւ, երբեմն, մինչեւ Մանոյին ճշդորոշած դուռը հասնիլը, անոր եւ իր կրտսեր առաջնորդին միջեւ անուշ, հաճելի զրոյց մը ծայր կու տար, անշուշտ՝ անչափահասը խօսակցութեան մեծ մասը իրը կ'ընէր։

— Մանո՛ւկ աղբեր, — կը հարցնէր, օրինակ, ութ-ինը տարեկան մատչի Վահիկը, — այս փայտը ինչո՞ւ համար է։ Շուները ծեծելո՞ւ համար, թէ չարերը պատժելու։ Ինձի չե՞ս տար, Մանո՛ւկ աղբեր, քիչ մը «ձի-ձի» խաղամ։

Եւ Վահիկ, խնայն, ձեռքը կը տանէր ձեռնափայտին, զգոյշ մատներով կը դպչէր անոր։ Թեթեւ շոյանք մը։ Եւ եւքը, կ'աւելցնէր.

— Աղուոր փայտ է, հա՛։ Մեր ուսուցչին գաւազանը բարակ եւ կարճ է, Մանո՛ւկ աղբեր։ Մեր ցոբենը ջաղաց տանող իշապանին փայտէն աւելի երկար է եւ աւելի սահուն։

Մանոյի փոթ-փոթ, լուրջ դէմքին ուշադրութեամբ նայողը միայն պիտի տեսնէր, թէ ինք, այդ րոպէին, կը ժպտէր մեղմօրէն, չօշափելի կերպով։ Վահիկի խօսքերը իրեն դիւր եկած էին։ Անուշ ըլլալու ատենան։

— Մանչո՛ւկս, — կը յարէր Մանօն, — դուն ի՞նչ պիտի ընես այս երկար փայտը։ Դուն գպրոցական տղայ ես, մանչս։ Եթէ տանը մէջ հարդարտ ըլլաս եւ դասերդ լաւ սորվիս՝ Կաղանդ Պապուկը

digitised by A.R.A.R.@

աղուոր, գեղեցիկ չատ խաղալիքներ նուէր կը բերէ քեզի։

Վահիկը այդքանով չէր գոհանար, անմիջապէս կը հարցնէր.

– Մանո՛ւկ աղբիր, Կաղանդ Պապուկը մեր տունը գիտէ՞, զիս կը ճանչնա՞յ։

Եւ Վահիկ դէմքը վեր կը բարձրացընէր։ Ուշի–ուշով կը նայէր Մանոյի դէմքին։ Մանոյի խաղաղի՛կ դէմքին։ Մա՛նաւանդ՝ անոր փակ աչքերուն...։

Նորէն լուսաւոր ժպիտ մը կը ծաղկէր Մանոյի խորշոմածածկ դէմքին վրայ։ Եւ կը ապասէր, որ իր արթնամիտ մանուկ առաջնորդը շարունակէ իր խօսքը։ Բայց կրտսերը, ինքն ալ, անհամբեր սպասումի մէջ կ'ըլլար։

– Մանչուկս, – կ'ըսէր Մանօն, – հաճելի եղանակով մը, – անունդ ի՞նչ է, ինչպա՞ն ես...։

– Վահիկ Սիմոնեա՛ն, – կ'ըլլար անչափահաս առաջնորդին պատասխանը։

– Լա՛ւ, շա՛տ լաւ։ Հիմա, գիտցայ, թէ դուն որո՞ւն տղան ես։ Գիտեմ՝ ձեր տունը ուր է։ Նոր Տարիին, ես ձեր տունը կաղանդ Պապուկին ցոյց կու տամ, ինչպէս որ դուն հիմա ինծի ցոյց պիտի տաս ընկերոջդ հօրը տունը։ Հոդ մի՛ ըներ։ Ես Կաղանդ Պապուկին կ'ըսեմ, որ Վահիկ Սիմոնեանը չատ բարի, չատ աշխատասէր մանչուկ մըն է։

Խօսակցութիւնը վերջակէտի կը հասնէր, երբ Մանօն եւ Վահիկ, մայթին վրայ, դրան մը առջեւ կ'ըլլային, այդ րոպէին։ Անլոյս մարդը, ձախ ձեռքով քիչ մը խարխափելէ ետք, մղակը բրոնելով՝ կ'ըսէր.

– Ձի՛ւդ այս դուռն է, մանչուկս։ Դու հազա՞ր ապրիս։ Կաղանդ Պապուկին կ'ըսեմ, որ Վահիկ Սիմոնեանը չատ բարի, չատ աշխատասէր մանչուկ մըն է։ Ձեր տունը անոր ցոյց պիտի տամ։ Խելացի եղիր։ Զարութիւն չընես։

Վահիկ, արդէն, փոզոցին անկիւնագարձը ըրած կ'ըլլար։ Վերջին երեք նախադասութիւնները չլսեց, թեքեւս։ Բայց, երբ Վահիկ, մէկ վայրկեան ետք, փողոցը խաղցող ընկերներուն կը միանար՝ չատ–չատ ուրախ կ'երեւէր։ Դէմքին վրայ աղուոր բան մը կը խաղար։ Բերան չէր բանար։ Գաղտնիքը իրեն կը վերապահէր։ Կ'ապրէր արդէն, թէ Կաղանդ Պապուկը Մանոյի բարեխօսութեան եւ ցուցմունքին վրայ իրեն աղուոր–աղուոր նուէրներ կը բերէր։ Գեղեցի՛կ խաղալիքներ...։

❖

Մանոյի եկեղեցասիրութիւնը չափ ու սահման չէր ճանչնար։ Տարուան բոլոր օրերու բոլո՛ր արարողութիւններուն զինք կրնայիք եկեղեցի գտնել՝ կանգնած միշտ քանի մը վայրկեան առաջ։ Իր տեղը, եկեղեցւոյ մէջ, անփոփոխ էր։ – Սէյն մարդ գիտէր։ – Դասէն սկսեալ, առաջին պատուհանին ճիշդ տակը ընտրած էր իրեն համար, նստարանին ծայրին դառնուկի գանգրաւոր ճերմակ մորթի մը ամրացնելով։ Ձեռնափայտը իր աջ կողմը դէտինը կը պառկեցնէր։

Փակ աչքերով այս ժամուորը, համարեա՛, եկեղեցական ամէն աղօթք, ամէն մաղթանք, ամէն շարական, ամէն մեղեդի, ամէն ընթերցուած, ողջ պատարագը գոց գիտէր, «Ջուրի պէս» գիտէր, պիտի ըսէր Վահիկը։

Որովհետեւ՝

Մանոյի քովը կեցողը եւ անոր յարաշարժ շրթունքներուն հետեւողը մթայն կրնար հաստատել, թէ ան կամացուկ մը, քառ առ քառ, մերթ հազիւ լսելի, մերթ՝ քիչիկ մը բարձր – ինքնամոռացումի պա՞հ – կը մասնակցէր այդ բոլորին, անվրէպ կերպով։

Ժամերգութեան աւարտին, ամէնէն ուշ ելլողը ինք կ'ըլլար, Մանօն։ Անապարելու պէտք չունէր։ Արդէն, ինչո՞ւ աճապարէր։ Ոչ ոք իրեն կը սպասէր։ Ոչ կին ունէր, ոչ զաւակ։ Միմ–միանակ կ'ապրէր իր սեփական երդիքին տակ։

Եկեղեցիէն ետք, Մանօն հայու մը

digitised by A.R.A.R.@

տունը կ'ըլլար։ Փոքր սկուտեղի մը վրայ կամ լայն ափսէով դրան մօտիկը ծալապատիկ նստած Մանոյին կը հրամայուէր իր բաժին հացը։ Դրեթէ ծունկերուն կպած կ'ըլլար։ Ան իր երկու ափերը իրարու կը բերէր, «ճաշակեցուցը» կ'ըսէր, քաղցրօրէն, եւ եռքը միայն, քիչ մը խարխափելով՝ հացը կը գտնէր նախ, վրան խաչանիշ մը կ'ընէր եւ երկու կտորի կը վերածէր զայն – եթէ խոշոր ըլլար։ – Կը սկսէր ուտել։ Ոչ մէկ բառ կ'ելլէր Մանոյին բերնէն։ Լուռ էր, շատ լուռ, մինչեւ ճաշի աւարտին։ Զեռնափայտին մեծ մասը կ'անհրաժեշտաբար անոր ներքեւը այն տանը մէջ, ուր շարաճճի մանուկ մը ըլլար...։ Ինչո՞ւ գլուխ ցուցնէր։ Նախազգուշութիւնը, յաճախ, կը սիրէր կրկնել Մանոն, մարդը – որ հողէդէն է եւ մահկանացու – շատ մը փորձանքներէ հեռու կը պահէ։

Մանոն՝ փիլիսոփայի մը լրջութեամբ կը խօսէր այս կամ այն խնդրին մասին։ Կարծես իր մասնակցութիւնը խիստ անհրաժեշտ ըլլար։ Որոշ տարիքի մը մէջ եղող մարդիկ զինք կը լսէին։ Նոյնիսկ հանդիսաւորով։ Կը սիրէին, որ ան բերանը բանայ, խօսի, շատ խօսի։ Տան փոքրիկները ձայն-ծպտուն չէին հաներ։ Անոնք՝ ականջ դարձած՝ մոլի կ'ընէին Մանոն։ Անոր մէջբերումները կամ իմաստուն խօսքերը, ընդհանրապէս, Ս. Գիրքէն ջոկուած կ'ըլլային, անչուշտ աղաւաղուած ձեւով մը թարգմանելով։ Իր հասկցած ձեւով։ Մերթ լուռ մէկ վայրկեանին, յանկարծ լսելի կը դառնար շարականի մը մէկ պատառիկը, հաղիւ շարժող իր շրթունքներէն։

Քիչ մըն ալ շրջուն ձայնասփիւռ էր Մանոն։ Քաղաքական լուրերու հանդէպ մեծ «հոտառութիւն» ունէր։ Իր ուռած ձեւով կ'ուռնէր լուրը եւ այդպէս ալ կը մեկնաբանէր։

❖

Հայու մը տունը ուրախութեան մէջ ըլլար կամ տխրութեան՝ Մանոն մէկ անգամ ներկայ կ'ըլլար, անպատճառ։ Իսկ ունեւորի մը տունը մէկը երկու, երբեք կ'ըլլար։ Երբեմն՝ աւելի։ Եթէ ուրախութիւն էր՝ Մանոյին կը տրուէր իր նուէրը, որուն գիմաց Մանոն չէր մոռնար իր տաքուկ մաղթանքները։ Մանոյի առջեւի մոխրամանը իրեն հրամցուելիք սիկարէթներուն փոշիով եւ փոքր կճատներով կը բեռնաւորուէր։ Կը լեցուէր։ Երբեմն, տան փոքրերը սիկարէթներու թիւը կը բարձրացնէին։ Մանոն սիկարէթը կը մարէր լեցուն մոխրամանին մէջ, երբ մատները այրուելու մօտ ըլլային։ Ան վառած սիկարէթը վար դնելու սովորութիւն չունէր քնաւ։

Պատրաստաբան մարդ էր Մանոն. սրամիտ եւ զուարթաբան։ Նաեւ, սուրճի գաւաթ նայող էր։ – Մերթ ոսկահակը լուացուած կ'ըլլար։ – Մեծէն մինչեւ պզտիկ կը սիրէին զինք ու կը յարգէին։ Ոմանք, նոյնիսկ, անոր կարծիքը կը հարցնէին այս կամ այն աղջկան, այս կամ այն երիտասարդին մասին։ Եւ Մանոն չէր քաշուեր։ Կու տար իր կարծիքը, խնդրելով շուրջիններէն որ ուրիշին բան չըսեն, սակայն։ Ահա, թէ ո՞ւրտեղերը հասցուցած էր ժողովուրդը Մանոյին, աշխատուրկ Մանոյին իրաւասութեան սահմանները։ Ժողովուրդին չափանիշներ կոտրող «ախմախութիւններ»ը, երբեմն, ի՛նչ անդարմանելի աւերներ կը գործեն։

– Մանո՛ւկ աղբեր, – կը հարցնէր անչափահաս Ցարութիկը, մէկէն, քիչ մը խնդուքով, – դիշերը, առանց լոյսի, ի՞նչպէս փողոցէն կը քալես եւ տունիդ ճամբան կը գտնես։

– Ցարութի՛կ, – կը յարէր Մանոն,– ես քեզ աւելի խելացի կը կարծէի։ Գ'երեւի չարաճճիութիւնդ բռնեց նորէն։ Ցերեկ ըլլայ կամ գիշեր՝ նոյնն է Մանուկ աղբար համար։

Եւ տան գլխաւորը, խկոյն, կը յանդիմանէր իր զաւակը։ Ամէն մարդ պաշտպան կը կանգնէր այս բարձրահասակ կոյր մարդուն, մաղմօրուք ճերմկցուցած եւ ալխարհ տեսած Մանոյին։

digitised by A.R.A.R.@

Ֆ

Վերջին մէկ-երկու տարիներուն, ութսունը թեւակոխած Մանոն եկեղեցիէն կը բացակայէր, երբեմն։ Մերթ օրերով չէր տեսնուեր քաղաքին փողոցներուն մէջ։ Մանաւանդ՝ ձմրան խիստ ցուրտերուն։ Ոչ ոք կրնար պատճառը գիտնալ, նախապէս։ Իր երեւումէն հաք կը ստուգուէր, իր իսկ կողմէ։

– Այս ո՞ւր էիր, Մանո ջան, – զարմանքով կը հարցնէր կաթնավաճառ Աւօն, որ Մանոյի եկեղեցւոր ամէնօրեայ ընկերն էր։

– Հի՛չ մի հարցներ, Աւօ՛, – կը յարէր Մանո՛ն, ծանր եւ դառն շեշտով մը, – հաւատալ, Աւօ՛, որ չեմ ուզեր պատկիլ, օրերով ներսը բանտարկուած մնալ, բայց ինչ ընեմ։ Չեմ գիտեր, – կ'աւելացնէր Մանոն, – ի՞նչ մը կ'ըլլամ, Աւօ ջան։ Ես Մանոն ըլլամ եւ այդպէս օրերով անկողին մնամ։ Է՜հ, կեանք է։ Ի՞նչ կրնանք ընել։ Երէկ, ջահել էինք։ Ցուրտը, բուքն ու բորանը ինչ կարեւորութիւն ունէին մեզի համար։ Անոնք մեզմէ կը վախնային։ Իսկ, այսօր…։ Հէ՛յ, գեղեցի՛կ ու վա՛ռ օրեր…։ Մերութիւնը լաւ բարեկամ չէ, Աւօ։ Մանոն ալ ծերացաւ։ Ես ալ ըսեր գլուխ մը զարնեմ, տեսնեմ ի՞նչ եղաւ Մանոն։ Եւ խօսքը կը վերջացնէր գլխու ծանր-ծանր շարժումներով։

Ժամանակէ մը ի վեր, ժողովուրդի բերանը ինկեր էր Մանոյին կոտակը։ Ամէն տուն, ամէն մարդ այդ մասին կը խօսէր։ Ա՛լ լսելու բան էր զանազան մեկնաբանութիւններն ու պոչաւոր անթիւ դուշակութիւնները, որոնց Մանոն ինք եւս ականջալուր կ'ըլլար, մերթ։ Ինք՝ քմծիծաղ մը ունէր լոկ։

– Որո՞ւն պիտի ձգեմ։ Հարկա՛ւ՝ ազգին։ Ազգը ինծի տուաւ, ես ալ՝ ազգին։ Ես ոչ ոք ունիմ։ Կտակս, արդէն, գրած եմ եւ յանձնած ազգ. առաջնորդարան։ Ի՞նչ է, մարդիկ մա՞հս կ'ուզեն…։ Դեռ չա՛տ կ'ապրիմ։

Գ. Գ.

digitised by A.R.A.R.@

ՆԱՆԻՍ Կ'ԸՍԷ

Նանիս կ'ըսէ՝
Թէ ասոդերն այս,
Մեր աշխարհի ասոդերուն
Փայլը չունին։

Նանիս կ'ըսէ՝
Թէ դաշտերն այս,
Մեր հայրենի դաշտերուն
Զարդը չունին։

Նանիս կ'ըսէ՝
Թէ լեռներն այս,
Նոյնիսկ գերուած մեր Մասիսի
Շա՛ւքը չունին...

ՏՈՒԱՑՏԱՆՔ

Որդ՛ւ տանիմ
Ցաւը հոգւոյս.
Կեանքը այսօր դաւ է միայն։

Որդ՛ւ տանիմ
Լացը սրտիս.
Սէրը այսօր խաղ է միայն։

Այսպէս դաւով,
Ցաւով, լացով,
Սիրտս ինչպէ՞ս օժտեմ բերքով։

ԾԱՂԿԱՄԱՆՆ

Մանկամանիս դէմ դիմաց,
Կը գրուցեմ շաբունակ,
Ցնսայ կամաց կը զգուեմ
Բաժակները կիսատաց։

Որոնց կամաչ շրթներէն,
Դեռ չրացուած կոկոններ,
Մանուկի պէս՝
Լուռ կը ժպտին։

Աչքերուս մէջ ցայելով,
Կը հանդարտին ցազանով
Գգուանքները մտանեուս,
Ու յետոյ լուռ կը ցիրանին...

ՎԵՐՋԻՆ ՆՈՒԱԳԸ

Զգազլգիս տա լաքին,
Վերջին ցուազն ալ մեռաւ,
Լռութեան մէջ գիշերուայ։

Հիմա գոյգեր ձեռ-ձեռքի,
Կ'իյնան գիրկը սա ծովուն.
Սառած հոմբոյր լռութիւն։

Մութ անկիւն մը կծկաւած,
Դեռ գիճովի մը վերջին
Հեծկլտուքն է՝ որ կու լայ։

Սրտին մէջ ամայի,
Շիշերուն քով ծերպերի,
Բաժակներդ կ'ապօրեն...

ԿԱՐԱՒԱՆՆԵՐ

Աշխարհի չորս ծագերէն,
Կարաւանները անհամար,
Հանդիպեցան, ու փերան
Ոգլուեցին ու անցան։

Ոգլայեն իրենց, ուսի
Հատիկներդ կուլ տուին,
Կարաւաններն իրարու
Ցետոյ դուք ճիւրեցին։

Այդպէս, ու միշտ, շաբունակ,
Օրերն ամբողջ կարաւան,
Նոյն օրէնքը կրկնելով՝
Օրակ-օրակ կը դառնան...

ՆՈՄԻՐՈՎ ԱՍՈՑԵԱՆ

digitised by A.R.A.R.@

ԱՐՏԱՇԷՍ ԵԱՂՈՒՊԵԱՆ

ՏԷՐ - ՏԷՐ ԱՄՈՒՆ ԱՆԻԾԵՑ

Սարգիս ամուն խամ մարդ չէր։ Ան շատոնց կուահած էր իր եղբօրորդուն խիստ մտերիմ կապը դրացի Թուրք ոստիկանին կնոջ, էմինէ խանումին հետ։ Իր դողահար սիրտը ու պատուախնդիր ծածկամտութիւնը յաջողած չէր դրացիներու դիտող աչքերէն քողարկել Մկրի մտերիմ կապն ու ծառայութիւնները Թուրք կնոջ։

Թագին կիները պէզէլու, բամբասանքի ընդունակ՝ հաշիւը շուտ կը հանէին թէ ի՛նչպէս՝ մէկ, մէկ ալ երկու կ'ընէ. անոնց որոնելու ձիրքը զերակըշռել դժուար էր։

– Քա՛, Մ'ամբիամ խաթուն, էտ չան կնիկը մոնայեռած կատուներուն պէս, գիշեր-ցերեկ աչքը կոխմրցոց Մկրին վրայ է. իր խոփած էրիկը ոտքը տունէն դուրս դնէ չի դնէ, մահանայ մի կենէ, եա՛ գնա ակէն պարտախով ջուր բեր ինծի, եա՛ գազեազին պակաս է ըսելով, աղան շուկայ կը ճամբէ ու եռ գալուն ըլ, ժամերով ներսէն դուրս չի հաներ։ Էդ ի՛նչ պապա կորիմ տղայ էր, վրան հա՛լ չէ մնացեր։ Ինք ըլ, սուրդուկը, էնպէս խաթրյի, ձեռքը բաց, աղուոր, լուսու պէս ճերմակ, ո՞ր արիմարդ էտոր ճիլուէին կը դիմանայ։

Քորս էտ կնիկը հայու ճնսէ ըլլու է. հայերը շատ կը սիրէ, քիչ մ'ըլ հայերէն կը խօսայ. հայոց բաղնեց օրը բաղնիք կուգայ. տաճկի կիներուն պէս զրնեխ-մոնեխ չի քսուիր։

Էոլի չաթուն, իմ բաղնեցս օրը ինք ըլ էկեր էր։ Քիչ մի մնաց գուռուներն էոլին տաքուն պայլըմիշ տըլլէի. ըսաւ. «Մարդրիտ խաթուն, էկօ մարդերդ ես սապոնիմ, շատ խոնճեցած կ'երուաս»։ Քա՛ քուրս, տեսնայիր հեմի, էնպէս փաք խատակ աղուոր մի լոգցուց ինծիս, վրան հէչ տաճկի նէպէս չի կար։ Դուրս դացի վրաս քանի մի Թաս պաղ ջուր լեցուցի, քիչ մի հանգչայ, սիրտս պաղչտակաւ, եա՛ ներս դացի նորէն, ըսի, էմինէ՛ խանում, ձեռուիդ դալար, հոգիս հանգչաւ, էկօ ես ըլ քեզ սապոնիմ։ Վայ անա՛մ, ձեռքս վրան դրի, մսերը մէրմէրի պէս սնուկ, ի՛նչ մեղքս պայիմ, ես կնիկ հալովա մարմինս փուչ-փուչ եղաւ. լուսու պէս ճերմակ, հրեշտակ կը լմանէր. փորը, կուրծքը, Թամամ ազապ աղջիկ, ոտքին մատէն ոչ մազին ծայրը վարդի պէս պալարտ։ Ո՞ր արիմարդն է, որ էդպէս կնկան մի խուբ ու դուրպան չ'ըլլիր։ Էդ խոփած էրիկը ո՞ւսկու ձեռք է ձգեր էդ մռճանի պէս աղջիկը. ամմա՛, եթէ օր մը էդ չան մարդը փարդին երթայ, Մկրին հալը եաման է։

Մկրին կապը էմինէի հետ՝ յիրաւի շատ սերտ էր, խիստ մտերմական. բայց ինչպէս ինք պիտի բացատրէր, այդ ծայրայեղ մտերմութիւնը հեռու էր խորամտաս խարխխներէն։

Կնոջ քնքոյշ հոգին, անտարակուսելի անկեղծութիւնը, անոր տաքնց ու անկա-

digitised by A.R.A.R.@

բոզ ամուսինը, կարեկցութեան ու պինդ համակրանքի հրաւէրներ եղած էին երկուսաթք։ Անոնց սիրաշրջով մտերմութիւնը պայմանաւորուած չէր անքակտելի նուիրման ուխտով, ոչ ալ պարփակուած լուկ տոփական կապերով։

Իմինէ խանդին զեղուն սէրը գրեթէ խորթ քրոջ մը երանգները ունէր։ Սարդիս ամուն լաւ կը հասկնար ու կը սարսափէր այս վտանգաւոր դաշնաւորմի ծանր հետեւանքներէն։ Այս էր զինք մաշեցնող վիշտը։ Իր միակ մտահոգութիւնը եղբօրորդին փրկելն էր։ Կը ջանար համոզել զայն, որ ամուսնանայ իրենց գիւղացի աղջիկներէն մէկուն հետ, խոստանալով անոր տուն, տեղ, գործ, իանութ։ Մկր, սակայն, յամառօրէն կը մերժէր, մինչեւ օր մը, երբ ալ դանակը ոսկորին հասածի պէս, աչքերը գետին յառած, ըսաւ.

— Աբա՛ր, թագաւորին աղջիկն որ ըսես, չեմ ուզեր։ Մեր գեղին Տէրպապուն աղջիկն զատ աղջիկ՝ ինծի հարամ է։

Ինծի բան մի եղեր է Աբա՛ր, խելքս գլուխս չէ, դիշեր ցերեկ Մարանը աչիցս առջեւ է։ Նեռաս կրակներու մէջ կը վառի։ Ես նորէն եւ գիւղը երթամ, երթամ Տէրտրուն մշակ ըլլամ, թէ՛ Մարանին մօտն ըլլամ։

Երդում եմ ըրեր Աբա՛ր, խօսքէս եւ չեմ դառնար։ Կրնա՞ս Տէրպապուն խօսք մի հասկցնել։ Իրիցկինը դէմ չէ, Մարան վրաս տաք է, բայց պապուն դէմ լիզուն կ'առուի։

Էգիկութին գեղն էր, գացի Տէրպապոնց պօսթանը, Մարանին պզտի եղբայրը եկած խաւունները կը ժողվէր։ Ամերդայէն բերած գրիչդ անոր տուի, ափալ թափալ տուն վազեց, Մարանին ցուցուցեր էր։ Ես ալ էտի կ'ուզէի։ Հայիմ, քիչ մի հաքը Մարան սէրիթ մի չալված եկաւ, մէջը քանի մը հատ խաւուն լեցուց ու մուտ հնձուն։ Լալով ըսաւ, թէ Տէրպապան զինք Մղի Սերոբին տղուն՝ Կարոյին նշանելու խօսք ըրած է, բայց Իրիցկինը հասկցուցեր է, թէ աղջիկդ էրզումանէնց Մկրին սէր ձգած է։ Ա՛լ դուն տեսնուա, ի՞նչ թուք ու մուր, ի՞նչ ապտակ խեղճ Մարանին։ Աբա՛ր, մաքէս կ'անցնի, որ դիշեր մը երթամ էտ անասունած Տէրպապուն տունն ու տեղը կրակը տամ, առնեմ Մարանը ու փախիմ էս երկրէն։ Կամ չէնը երթամ Տէրտրուն ձեռքը ոտքը ինամ, թէ՛ իրենց մշակ ըլլամ, էսի քաշուելիք տէրտ չէ։ Ատուած տուչմընիս չիտայ։

— Հա՛ տղաս, բայց մինչեւ Տէրտրուն խօսք մի հասկցնելը, դուն ոտքդ իմինէի դուռէն պիտ՝ կտրես։ աչքին մ'երեւար, եաւեի դուռէն տուն եկուր, քեզ թող չի տեսնայ, սուտ հիւանդ եղիր, իրեն համար խանութ մ'երթար։

Ես գիտեմ մեր ճնեն դէշ մարդ չ'ելլար, դուն հալալ հօր ու մօր վաստակ ես, մեր տան նամուսը փարա մի չես ըներ, Փախա՛թ, եա՛ւրուս, տաճիկը տաճիկ է, օր մի երթէ էրիկը Փարղին երթայ, մեր բանը բուրդ է։

— Բայց Աբա՛ր, ես ի՞նչ կենիմ անոր համար, թէ՛ թուք խանութ մի կ'երթամ, հետն ի՞նչ ունիմ։ Սիրտը չատ բարի կնիկ է, հիչ տաճկի չի նմանիր, չուկայ որ երթամ, ղօրով գրպանս դրամ կը կոխէ, կ'ըսէ դուն ալ ինծի պէս որբ ես, հայր մայր չունիս։ ինք ալ որբ է, նէ հայր ունի, նէ մայր։ հայերն ալ չատ կը սիրէ։ կ'ըսէ, երանի էրիկս հայ ըլլէր։ Իշտէ ալ ինչ գիտնամ... — Մկրի ակնածանքը իր հօրեղբօր՝ գրեթէ անկարելի կը դարձնէր աւելին խօսելու, ըսելու այն սուր պահանջը, որ ծնունդ առած էր իր մէջ դէպի հրապուրիչ Թրքուհին։ Ան կ'ամօթէր պատմել ամէն բան, ըսել այն հզօր, անյաղթահարելի ցանկութիւնը, որ արուին մէջ յանախ ամէն կամք կը խորտակէ, որ դերբնական ուժ մը հագիւ կրնայ սանձել տարփանքի ամեհի ալիքները ու ծաղկափթիթ մարմինը։

Կ'ամչնար ըսել անոր, այդ կնոջ սիրով թաթաւուն լեզուին, զինք փայփայող նուրբ մատներուն ու լուսափթիթ խրանին մաշնիանութիւնը, որ գրաւած էր բերդը անդիմադրէր ու անաղմուկ։

digitised by A.R.A.R.@

Զէր գիտեր, թէ ի՛նչպէս բացատրէր, թէ ինք հիմա նման էր մարդու մը, որ կ'ուզէր տուանց անօթենալու, սոսկ ջղային պահանջէ մը գրդուած. հենց այսպէս ալ կլանուած էր Էմինէի սիրով... ինքն իր մէջ, ան կը խոստովանէր, որ մետաքսեայ թելերով ուռկանէ մը բռնուած էր, սակայն ան կ'երդնուր, որ այդ ուռկանին գերազնին թելերը երբեք պիտի չիրձէին կաշկանդել դինք ու խորտակել իր հոգիին տիրապետող անվիճելի սէրը դէպի իր աննման Մարանը։

Էմինէին դեղուն սէրը դերծ էր պարմանաւորումէ. աւելի զարմանալին՝ ան անկեղծօրէն քաջալեր էր հաւատարիմ մնալու Մարանին։ Ան լրիւ կը հասկնար Մկրի հոգեկան տառապանքը ու կարեկից էր խորթ քրոջ մը նման։

Այս զգլխիչ երիտասարդ կինը, ոչ միայն գերազանցօրէն ազնիւ էր, այլ եւ խոհական էր։ Կատարելապէս ծանօթ ըլլալով թուրքերու բարբարոս բարքերուն, տղան ընկլուզելու միտքը գոած էր երկուստեք խիստ վտանգաւոր։

Մկր, կը սիրէր Մարանը հոգեւին. Էմինէն սակայն՝ կը սիրէր հենց դինքն, իբրեւ շատ սրտահաճ ու հեշտալիր էակ։

Սարգիս ամուն մեծ զարմանքով կը գիտէր Մկրին անփութիւնը, որ կրնար աղիտաւոր հետեւանքներ ստեղծել ու հակառակ իր յոյժ վտանգալի նախազգացումներուն, կը թուէր, թէ ինք եւս գոհունակութիւն մը, յագեցում մը կը զգար։

Արդեօք ինքն ալ նոյն ճամբով պիտի չ'ընթանա՞ր նման պարագայի մը տակ, փոխ-հաստատման մը զգացումէն դրդուած։ Ան, դիւրաւան իր քունը կորուսած, ամէն առուտ ջուր բերած էր համոզելու Մկրը, որ ամուսնանայ։

Լսած էր նմանօրինակ դէպք մը, երբ Ամերիկա կը դտնուէր, թէ ի՛նչպէս հայ երիտասարդ մը դալուստհարած ու մարմինը փողոցի շուներուն նետած էին թուրքերը։

Սարգիս ամուն իր խորագէտ կնկան հետ երկար մտածեց, ամէն քար վերցուց, վեր վար չսփռեց ու դտան, որ միակ փրկութիւնը Տէրտրուն աղջիկն էր. հակառակ դէպքին, տղան Ամերիկա փոխցնելու է։

– Կնի՛կ, ալ ճար, ճամբայ չմնաց, ի՞նչ կրնամ ընել։

– Սարգի՛ս, Համելիքան իմ խելքիս չի պառկիր, ըրնց հօր, ըրնց մօր, էտ տղան խուրպէթը կը կորսուի. թեզ մի կարգելը փաքը կը հանէ։

– Աղէ՛կ ամմա, կ'ըսես, կ'ըսես, ո՞ր կ'ըսես, խօ՛սք չի հասկնար. ըսի տղա՛ս, քեզի պատէն տուն տեղ ընեմ, խանութ մը բանամ, օդուտ չըրաւ. հուզապը՝ չէ, չէ, չէ, է։ Ըսի Տէրտրուն աղջիկը թող չըլլի, թող Մազման Ակոյին թոռը, Եղսան ըլլի. ուժակարող, խլաւ, ի՞նչ է եղեր. ի՛նչ ըսէնը կը հաւնիս.

Ա՜խ՛ր, Եղսա՛ն ալ աղջկայ տեղ կը դնես, վրան քեռ մը հօնճա կապես, էշ մի վրան չի զարթ։

– Է, իրա՛ւ է մէսուրը, Տէրտրուն Մարանն ա՛ւր, Մաղմանին թոռն ւ.ր. Մարանին ճէյրանի աչքերուն տասը Եղսա չիմ փոխեր։

– Աղէկ ամմա, հիմա ի՛նչ ընենք Կնիկ. Տէրտէրը անգամ մը ինծի հակառակ ինկած է, ալ չի շիտակիր. էնոր թերութիւնը դուն գիտես. մինակ մէկ ճամբայ մի կայ, շատ աղուոր չէ ամմա, կեցիր տեսնանք...

Սարգիս ամուն ինքն ալ, հիմնականերն մէջ հակառակ էր տղան Ամերիկա ճամբելուն, հոն իր եղբօր միակ յիշատակը կը կորսուէր։ Ան լաւ ճանչցած էր Ամերիկայի չպարուած պուպրիկները, անոնց հրապոյրը անփորձ երիտասարդներուն. եթէ գոնէ ամուսնացած ըլլար, զաւկի մը տէր, որ ոչքը ետեւը մնար։ Տէրտրուն Մարանն էր փրկութիւնը ասայժմ։ Մարդ ու կին երկար բարակ վերցընել դնելէ ետք, որոշեցին, որ վաղն խսկ ան գիւղ երթայ ու Սանահայր Զաքարի միջնորդութեամբ Տէրտրուն աղջիկը ուզէ։

Արեգակը ծովուց կողմէն հալար պապայի ճակտին նոր զարկած էր իր

digitised by A.R.A.R.@

ցուրտ ճաճանչապեղ նիզակները, երբ Սարգիս ամուն ոտք դրաւ Սանուկ Զաքարի դորդուն։

– Հա՛յ բա՛րի, հազա՛ր բարի կընքահար Սարգիս, էս ի՞նչ հով փչեց էսպէս խապարսուզ, չի կենա՞լիր գինիները չիչ մի տահա հասնէր. խէ՛ր ըլլի, ի՞նոր էք, ի՞նչ կայ չիկայ, ի՞նոր է քիւլիֆէթը, ու ձգեց սայլի մը օխը, որ առաւօտ կանուխ սկսած էր տաշել, տէ հատէ ներս երթանք ու ձայն տուաւ կնոջը։– Գո՛ւվար քորս, Գո՛ւվար քորս, խայվալիք մը չինէ, դիտե՞ս վով է եկեր, կնքապէ, քաղքցի կնքապէ ու քահ քահ խնդաց, քաղքցիին զաւեշտական շեշտ մը դնելով։

Գուվար քորսն դուրս վազեց ուրախ, առաւ կնքահօր ձեռքը, խոնարհ ու կարօտագին համբուրեց.

– Բարի, հազար բարի կնքահար Սարգիս, էս ի՞նոր եղաւ, էոյիդ օչխար մը մորթենք, ո՞ւր են, ուր է կնքամարս, հեռդ ինչո՞ւ չի բերիր, գի՛տես էս ինչափ առենէ կնքամօրս օտքը մեր էշիկը չէ կոխեր։

– Էս իմ գալս էնպէս մէկէն իմէկ եղաւ, խօսք կուտամ որ ձօն չեկած, օր մի կնքամարդ հետս առնիմ գամ, երբ որ գինիները աղուոր մը հասած կ'ըլլի։

Գուվար քորսն ետ վազեց ու խոնջամը դրկած, հաց, պանիր, գինիով բեռնաւոր վերադարձաւ։

Զաքար առաւ գինին դուլը, լեցուց գաւաթը ու հիացկոտ նայեցաւ կարմիր գինիին, ծծեց ուժգ մը ու օ՛խ, սնմայութիւն է անմայութիւն, կնքահար Սարգիս։

– Հըլէ սըվի առ, խմէ տեսնամ ինչո՞ր կը հաւնիս. ա՛ռ հըլէ, խմենք որ չի մեռնինք, էս օր կանք՝ վաղը չիկանք, բարի գալուստդ կնքա՛ր, էսի վերի էդուն խավողն է, խանցոց գինուն համը կուտայ, տահա աղուոր չէ հասեր, ամմա վաղը քէսկուն բան կ'ըլլի։ Գուվար քորս, սը աղուոր Փասուլիայիդ հետ քիչ մըլ ձուկ, ա՛դուոր բան մի կ'ըլլի։

– Կնքա՛ր, էրէկ ծովեցիք ձուկ բերեր էին, մէկ երկու քաշ առի, որո՞ւ խելքէն մտքէն կ'անցնէր, որ քեզի խըսմէթ ըլլի։ Աշխարքիս մէջ ծովուց ձուկէն համով ձուկ չիկայ։ – Թէեւ ան իր կեանքին մէջ ուրիշ ձուկ ո՛չ տեսած, ո՛չ ալ կերած էր։

– Վերցուր սը գաւաթը, խմենք օր չի մեռնինք, կենդանութին կնքահար։

– Անմայութիւն, կենաք մնաս Սանուկ Զաքար, ըսաւ Սարգիս ամուն, առաւ գաւաթը, համը նայելու պէս բան մը ըրաւ, արիւնի պէս կարմիր գոյնովն հիացած։

– Զէ՛, իրաւ, հրմը հրմը հասեր է, չէն մնաս սանուկ, օճախդ չէն ըլլի ու պարպեց գաւաթը, ծծեց գինիով թրջած պէխը, ճիկարտ մը վառեց ու ծուխը ադահօրէն ներշնչեց։

– Է՛, տա՛հա, տահա, չըսիր թէ քաղաքը ինչ կայ չիկայ. ցորենն գինները կ'ելլա՞ն, կ'իջնա՞ն. լսեցի Եարպէքիրի թարաֆէն շատ ցորեն թափեր են չուկան, ամմա մեր ցորենն ո՞ւր, էնոնցը ուր. մեր ցորենն հայիս, քէյրիպալ կ'ըլլանի, լուսու պէս երեսդ կուգայ։ Ամանութդ, առատութդ ի՞նոր է. մեր դեղացիք աղաքդ շատ կը հաւնին. Գարեգինդ ինսաֆլի տղայ է, Աստու ձեռքը վրան ըլլի։ Հրմը էտ Ղորու պապ Ցոլա՞կէ, եա՛ման էշ է, ըսաւ ու քահ քահ երկար խնդաց։ – Զաքար, Ցոլակի ժասնագիտութեան ծանօթ էր։– Կնքահար դուն խելօք մարդ ես, քարէն հաց կը հանես, Աստուած օրերդ երկան ընէ։ էն չէ՛, մեր Մկրը ինո՞ր է. քանի մի օր առաջ հոս էր, հեմի տեսայ, ետքը ա՛լ չերուաց, ժում մի հաց պիլէ չի կերաւ. էդ տղան ցաւ մի ունէր, երեսը ծուռ էր, շատ փոխուած կ'երուար ու գաւաթը լեցնելով՝ ճանը՛մ, ա՛ռ օր գաւաթը, վո՞վ գիտէ հեմըլ եի քու երեսդ կը տեսնանք. խմէ՛ կնքահար, կեանքը կարճ է, Աստծու կամքով մենք մեր պարտքը կատարեցինք, ալիրնիս ժաղեցինք, ալրմաղը կախեցինք, հիմա ալ մեր գաւակները թող լուծը քաշեն։ Փառք կուտամ, հազար փառք, ինչե՛րս է պակաս, մուխանեթէ մուխթաճ չենք, մինակ սը աշուրներս կը Ղրատի, չիմ գիտեր ինչ ընեմ,

digitised by A.R.A.R.@

օր մի քաղաք գամ տէ, ընծիս էտ հա-
մելքացի տոքթորին տանես. է դուն հի-
մա հէլպէթ անիսրէն քիչ մի կը խօսաս։

Սարգիս ամուսին ներքին յոյզերը
միացած գինիին պայթուցիկ ուժին,
գրեթէ տրամադիր էր ձեռքը ականջին
տանել ու իր բարձր պայթիւնները որո-
տալ, սակայն զինք ճնշող մտահոգու-
թիւնը, կը սանձէր ալքոլին ամեհի յար-
ձակումը իր մէջ։

Հիմա, ան ժամանակը հասած նկա-
տեց սիրտը բանալու եւ իր խոր ցաւը
պատմելու Սանուկ Զաքարին։

– Սանո՛ւկ, էսպէս անակնկալ կէր-
պով գեղն եկայ, որ քու միջնորդու-
թեամբ, որպէս յարգուած մարդ, Տէր-
պապուն աղջիկը, Մարանը մեր Մկրին
ուզենք։ – Թէ, ինք գիտէր որ Տէրպապան
զինք չէր սիրեր, բայց գիտէր նաեւ, որ
Սանուկ Զաքարին խոթրը ամէն տեղ
կ'անցնի։

– Կնքհար, է օրի՞ Տէր ամուն քեզ չի
սիրէ, դու անոր ի՞նչ ես ըրեր։

– Սանո՛ւկ, էդ երկար մասէլա է,
ուրիշ օր մի կը պատմիմ, էսքանը բանէ
միայն, որ ես մեղաւոր չեմ. Ամերիկայի
մեր գիւղին ուսումնասիրացէն կուգայ։
Նիւզրիթին եղած առենս, ազգին օգտին
համար Տէրտրոյ փեսին քիչ մի գէպայ,
ալ չեմ գիտեր թէ ան ի՞նչ գրեց Տէրպա-
պուն. է՛, գուն գիտես, լաւ կը ճանչնաս
Տէրամուն, նեֆսէնէթնի մարդ է, սըր-
տէն չէ հանած։

Կը յիշես Ամերիկայէն եկած տարիս,
քաղաք դեռ չէի գացած, ուզեցի խաչը
ջուրէն ես հանել, իմ խոստումս աւելի
էր քընծ Մարտ ամուինը, Տէրտէրը խա-
չը անոր տղուն հանել տուաւ ու քնթին
տակէն վրաս խնգաց։ Ի՞նչոր է, էտի հին
մասալէ է, օր մի կը պատմիմ եւ գաւաթ
մի եւս պարպելէ հաք՝ խոր յուզմամբ
սկսաւ պատմել Մկրին ու թուրքին կնոջ
մտերմութիւնը եւ ատկէ յառաջանալիք
անխուսափելի ահաւոր հետեւանքները։

Սարգիս ամուն հիմա, աւելի քան
հարազատ հօր մը հոգեկան տուայտանքը
կ'ապրէր. գինին անոր խոցոտող վիշտը
կրկնապատկած էր։

– Սանո՛ւկ, ալ էսի քու գործդ է,
ճար մը պիտ՝ գտնաս։ Մարանը շատ
տաք է Մկրին վրայ, կ'ուզէ նոյնիսկ
տունէն փախչիլ ու կարգուիլ, բայց ես
կ'ուզիմ որ Տէրպապուն իզինոմն ըլլի,
իրեն պատիւը չամուին մէջ չըմնի, եօթն
օտարը վրան չի խնդայ, ամօթ է, եկե-
ղեցու մարդ է։ Սակայն՝ եթէ Տէրպա-
պան խօսք չհասկնայ, ես ուզիմ չուզիմ,
չիտակ սխալ, ճար ճամբայ մի պիտ՝
գտնամ տղաս ազատելու համար։

– Շիտակն ալ էտպէս է կնքհար
Սարգիս, Տէրամուն կանչիլ զուրուցելու
է ու ձայն տուաւ կնոջը։

Գուվար քորս, հիմա չիտակ կ'եր-
թաս Տէրպապոնց, ուր օր է կը գտնաս
ու կ'ըսես, որ մեր տունը քաղքէն մարդ
եկած է, Զաքար ամուդ կ'ուզէ որ միւի
գաս. էտքան միայն, կրնաս նը հետդ
առ ու էկո. ու դարձաւ կնքահօրը. ի՞նչ
ըլ ըլի, էտ տղան ժամ առաջ էտ քէծէն
վազ բերելու է։ Դուն չի լսեցի՞ր, աշ-
խարքը ձէն տուաւ, քու Համելքա եղած
առենդ էր, Զարթարիզցի ալանի պէս
հայ երիտասարդ մը, գեղին աղային
կնկան հետ բռներ էին, խեղճ տղան
կտոր կտոր էին ըրեր, լէշն ըլ չուներուն
էին նետեր։

Կնքհար էս գազաններուն երեսէն ա-
մէն բան կ'ելլայ. տղան քաղքէն փախցը-
նելդ նայիր, բան մի ըրէ, տեղ մի պարտ-
կէ։

Ա. Ե.

digitised by A.R.A.R.@



ԱՐՈՒԵՍՏԸ ԿԵԱՆՔԻՆ ՄԷՋ

Պատերազմէն ետք, արուեստի ըմբռնումները խոր փոփոխութիւններու ենթարկուեցան, առանց կեդրոնական գաղափարներու յայտնութիւնը ընելու։ Արուեստի մարդիկ դեռ կը շարունակեն տենդագին իրենց որոնումը, ապահով ուղի մը գտնելու հեռանկարով։ Երէկուան հատատուածը կը հերքուի այսօր եւ տարուէ տարի նոր կուռքեր կը յայտնուին, առաջ հշելով արուեստը ժողովուրդին հասանելիութեան բերելու կամ գիտական նուաճումները արուեստին մէջ օգտագործելու գաղափարներէն մէկն ու մէկը։

Ստոքհ Տիգրան Ոսկանի հայացուցած վերին աստիճանի շահեկան յօդուածը, որ բաւարար չափով լոյս կը սփռէ Եւրոպական մտմտուքին մէջ տեղի ունեցող ամէնօրեայ այդ բոհեմրանին վրայ։

ՍԱԼՎԱՏՈՐ ԴԱԼԻ

Օփ եւ Փոփ, *շարժարուեստ* (cinétique) *եւ շարժական ստեղծագործութիւն* (cybernétique), *անուաշ արուեստ եւ մանրարուեստ։ Գարկիչա մարդը այս բոլորին մասին կը լսէ տարտամօրէն։ Բայց ինքզինք գուրս կը նկատէ արդի արուեստի խորհրդաւոր ցեղախումբին կողմերու պայքարէն։*

Ընդհանուր առմամբ, ինչ որ կու գայ այդ խեղճ աշխարհէն, կը նկատուի ջղաձգական եւ հղհիմ, դուրս՝ բանաւոր ոճէն մեկնաբանութենէ։ Գարկիչա մար-

digitised by A.R.A.R.@



ՄԱՔՍ ԷՐՆՍԹ

դը, համոզուած՝ որ ոչ մէկ պատրաստութիւն ունի հակնալու արուեստագիտական փորձարկութիւնը եւ ձեւերու հոլովոյթը, Փիքասոն կը նկատէ սահման մը, որմէ անդին արուեստին արկածախնդրութիւնը իրեն հետ առընչութիւն չունի։ Կը փակուի իր տունը եւ կը բանայ պատկերասփիւռը։

Մա՛նր անխոհեմութիւն։ Կարելի չէ արուեստէն խուսափիլ։ Մանաւանդ՝ պատկերասփիւռ բանալով։ Մի՛նչեւ իսկ արուեստին ոահմանուած հաղորդումներուն երես դարձնելով։ Արդի արուեստին գաղտնի գործակալները կը յաջողին մբանել ամէն տեղ։ Դեկտեմբեր 13-ին, Ֆըբանսական ձայնասփիւռին «Զորս ժամանակներ» այլպանութեանց հաղորդումը կը կատարուէր Սոնիա Տելոնէի տեքստերուն մէջ, իսկ Դեկտեմբեր 27-ին, Վալաբէլիի տեքստերուն։ Առաջինը կը հաբցազնդէր Ժաք Տիւբրոն, երկրորդը՝ Միշէլ Փոլնարեֆ։

Ժան-Քրիստոֆ Ավերթի իր հաղորդումներուն կու տայ կերպընկալ կշռոյթ մը, որ ուղղակի ներշնչուած է ժամանակակից նկարիչներու որոնումներէն։ Յունուար 1-ին, «Ինէա»ներու մէջ, Կի Բելլաերի տեքստերը եւ հաղորդումին նկարագրումը կը հանդիսանային մեծարանք մը հանդէպ Օփ արուեստին եւ Փոփ արուեստին։ «Տիմ Տամ Տամ»-ի եւ «Ա լ'ափիշ սիւ մոնտ»-ի նման իրարմէ այնքան տարբեր հաղորդումներու տեքստերը արդիւնք են նոյն ներշնչման։

Իր տունէն դուրս, պատկերասփիւռ դիտողը, Փարիզի Ֆիւրսթենպերկի հրապարակին վրայ, կրնայ անցնիլ մետաղեայ ժողերու տարօրինակ անտառ մը, զոր շարժապաշտ նկարիչ Ռաֆայէլ Սոթօ կ'ողողէ իր գունաւոր լուսարձակներով։ Ռուանի մէջ, Ժան-մ'Ազք փողոց, լապտերներու աւանդական շղթաներուն փոխարէն, Նիկոլա Շէֆֆէր 6 մեթր բարձրութեամբ հինգ աշտարակները բազմագոյն ճառագայթներ կ'արձակեն։ Փրիզմիկ վաճառատուներու մէջ, խաղալիկներու եւ սննդեղէնի բաժիններուն մէջեւ, 100 Ֆրանքի կը ծախուին Ալեքսանդրի, Մաքթայի, Գրամ Վան Վէլտի նբման նկարիչներու կողմէ թուագրուած եւ ստորագրուած ու 300 օրինակով հանուած վիմագրութիւններ։ Մէկը կրնայ գոհանալ մաքարոնիով, բայց վաճառատունէն դուրս կու գայ տոպրակով մը, որուն վրայ կը պայթին նարնջագոյն եւ մանիշակագոյն համակերտոն շրջանակներ, ուղղակի Ծնունդ Վազարէլիի երանգագնակին։

Շարժանկարի սրահին մէջ, պարկեշտ մարդը պիտի գտնէ միայն գունաւոր ժապաւէններ, որոնց շարժանկարիչները իւրացուցած են տեսողական վերջին գիւտերը. «Մրոթքը Ֆրիտոմ», Ռիլիքմ Քլէյնի նոր ժապաւէնը, իսկական փառատօն մը շարժանկարային Փոփ արուեստի. «Լա փրիզոնիէր», Անրի-Ժորժ Քլուզոյի վերջին ժապաւէնը, շարժապաշտ նկարիչի մը մօտ կատարուած ուրվագրաժով մը, Կալբրի Տընիզ Ռընէի մէջ ցուցահանդէսի բացումով մը, ժամանակա-

digitised by A.R.A.R.@

ՌԱՈՒԱՇԵՆԳՆԵՐԿ
Նկատելի է որ այս նկարին մէջ երեւցող պատկերները իրարու հետ ոչ մէկ կապ եւ առընչութիւն ունին։

digitised by A.R.A.R.@

կէց որոնումներու իրապաշտ հիմերուն մասին ուսուցողական հատուածով մը եւ նկարներու չուկային մասին ճշգրիտ տեղեկութիւններով։

Ցայտարարութիւն, ծանուցում, ցուցադրութիւն, բեմադրութիւն (Գաբրոյի «Մեսպրեէ»էն մինչեւ Գրէյգի Հորս Սալունի սիրիվ-թիզը), հագուստ, կոաւ... Ամէն կողմ շրջապատուած եւ պաշարուած արդի արուեստին ամէնէն այլազան արտայայտութիւններով, պարկեշտ մարդը անգիտակցաբար կ'ենթարկուի անոր։

Կտաւի մը դիմաց, տակաւին կրնայ պատահիլ որ ըսէ. «Ի՞նչ կը ներկայացնէ այս» կամ յայտարարէ. «Ես տգեղ կը գտնեմ ասիկա», առանց անդրադառնալու, թէ ինչ որ արուեստագէտները, «մարդկային ցեղին այդ անթեմները» կը յայտնաբերեն իրեն, պարզապէս այն աշխարհն է, ուր ինք կ'ապրի։ Նոյն տեսն, անոր տեսնելու կարողութիւնը անդգալաբար կը փոխուի։

Արդի արուեստին յարձակողականը երեք պատճառ ունի. արհեստագիտական, տնտեսական եւ գեղագիտական։ 1945-էն ասդին, արուեստի գործերուն վերարտադրութեան եւ տարածման թեքնիքներուն զարդացումը խոր փոփոխութեան ենթարկեց չուկայ մը, որ մինչ այդ սահմանափակուած էր սիրողներու եւ մասնագէտներու շրջանակի մը մէջ։ Արուեստի գիրքը եւ գունաւոր վերարտադրութիւնները աճեցուցին հասարակութեան ծանօթութիւնները եւ զարգացուցին անոր հետաքրքրութիւնը։ Ժապաւէնն ու պատկերասփիւռը տիեզերական ծաւալ մը տուին այս երեւոյթին։ Կրանֆրայէի մէջ, Փիքասոյի ցուցադրութեան սպասումի անվերջանալի շարքերը (800·000 մուտք), Թուր Անի Ամոնի եւ Վերմերի ցուցադրութեանց այցելուները (1·200·000 եւ 320·000 մուտք) ցոյց կուտան ասոնցմանը ա՛յն հետաքրքրութեան, որ մարդիկ ունին արուեստի իրողութեան հանդէպ։

Փոփոխութիւնը ունի նաեւ տնտեսական եւ ընկերային պատճառներ։ Տգնապները որքա՛ն իրարու յաջորդեն, դրամանիշերը որքան արժեզրկուին, արուեստի գործին արժէքը, իբրեւ դրամ պահելու միջոց, այնքա՛ն կ'աւելնայ։ Ամուրդով վաճառքներու շուրջ յարուցուած աղմուկը աւելի թափ տուաւ տիրանալու ցանկութեան, որուն վրայ կ'աւելնայ շահադիտական որոնում մը։ Ամէնէն շռնդալից վաճառքները կը հասնին երեւակայութեան խօսող թիւերու։ 42 սանթիմեթրի վրայ 37 սանթիմեթր Լէոնար տա Վինչիի մը ծախուեցաւ 30 միլիոն ֆրանքի, Սեզան մը՝ եօթուկէս միլիոնի։

Երեւոյթը նոր չէ։ Ֆիլիփ տը Բուլանժ կը գրէր Մատամ տը Սեվինեէին. «Նկարները ոսկիի ռոդիկներ են... Երբ որ ուզէմ, կրնամ զանոնք կրկին գինով ծախել»։ Երէկուան համբակը կը զայրանար Տալիի արտառոցութիւններուն առջեւ, կը գայթակղէր Մաթիսի բոպէական նկարչութենէն, կը խնդար, երբ Փիքասոյի մօտ աչքը կը տեսնէր քիթին տեղը։ Բայց երբ տեսաւ Փիքասոյի եւ Տալիի թիւերը, Պրաքի, Շակալի, Մարքս Էրնսթի, քսան ուրիշներու թիւերը քսան տարուան մէջ հաբիւրապատկուած են, հանդերձարան թողուց իր հեգնանքը եւ սկսաւ փնտռել, թէ ո՞ր արուեստագէտով «հետաքրքրուի» արդեօք։ Կեանքի մակարդակին ընդհանուր բարձրացումը բազմապատկեց թիւը այս սիրողներուն, արդարացնելով ամերիկացի տնտեսագէտ Ճոն Քենէդի Կելպրէյթի տեսութիւնը։ Այս վերջինին համաձայն, այսօր ինչպէս երէկ, արուեստի գործերը կ'ուղղուին ընկերութեան «փարթամ» դասերուն։ Բայց արուեստին տարածումը կ'աւելնայ որքան փարթամութիւնը կը տարածուի։

Անշուշտ, մեր ընկերութեան առօրեայ կեանքին վրայ արդի արուեստին խճողիչ պատուաստը մերժելու փորձեր կ'ըլլան։ 1968 Փեսթուարին, Կրենոպլը եռաց, երբ, Մշակոյթի Տան բացման առիթով, օժտուեցաւ Գլոտ Վիզէօյի քանդակներով։ Սոթոյի մեռաղեայ քանդակները զայրոյթ պատճառեցին Ֆիւրսթենպերկ հրապարակին եղերամերձ բնակիչներուն եւ Հին Փարիզի սիրահարներուն։ Բայց կը տեսնենք, որ դիմադրութեան

digitised by A.R.A.R.@



ՖԵՐՆԱՆ ԼԵԺԷ

չունչը հետզհետէ կը սպառի։ Հաւանաբար անոր համար՝ որ հասարակութիւնը կը սկսի հասկնալ ինչ որ Շանել կը սահմանէր սապէս. «Նորոյթը այն է՝ որ գեղեցիկ կը գտնենք ու կը տգեղնայ. արուեստը՝ որ տգեղ կը գտնենք եւ կը գեղեցկանայ»։

Բայց, արդի արուեստին արշաւանքին գլխաւոր պատճառը գեղագիտական բնոյթ ունի։ Եթէ այդ արուեստը իր տեղը գտաւ շատերու անտարբերութեան եւ անհասկացողութեան մէջ, պատճառը ա՛յն է՝ որ իր նպատակը ճիշդ այդ տեղը գրաւելն եղաւ։ Ոչ մէկ արուեստ ուզած է այնքան ընկերային ըլլալ, որքան այսօրուանը։ Ոչ թէ ընկերվարական, այսինքն ցոլացումը, ներկայացումը եւ պանծացումը ընկերային պայքարներու։ Այլ «ընկերային» անո՛վ՝ որ կը ձգտի այլափոխել մարդը ընկերութեան մէջ ապրող կապերը, կա՛մ զայն ընկերութեան դէմ ցցելու եւ օգնելու՝ որ ձերբազատուի անոր ուծանքներէն, կամ արդի աշխարհը անոր աւելի դիւրահասկընալի եւ աւելի հաճելի դարձնելու համար։

«Արուեստը ընկերային դարձնելու լուծում մը կը փնտռեմ», *կ'ըսէ Շէօֆֆէր։* «Կ'աշխատիմ կերպընկալ երեւոյթը մտցնել ամէնօրեայ կեանքին մէջ։ Պիտի ուզէի որ իմ գործս ամէն քանէ առաջ ընկերային ըլլայ», *կը յայտարարէ Վազարէլի։ Իսկ ժիւլիօ Լը Փարք,* «Մշակութային Հրատամարտ» *խորագրին տակ իր նպատակը կը դաւանի տարբերցընել իրենց ճակատագիրը անձամբ վրեռելու մարդոց ճնացած կարողութիւնը եւ վերակենդանացնել անոնց յարձակուն զօրութիւնը, գոյութիւն ունեցող կարգերուն դէմ»։*

Որովհետեւ, արդի արուեստը նախ մերժում մըն է։ Ամէն բանէ առաջ՝ մշակոյթի մերժումը։ «Մշակոյթը կեանքին շրջումն է», «Մշակոյթը մեռած է. վայելեցէ՛ք», *կը յայտարարէին Սորպոնի պատերը Մայիսին։ Շատ է թիւը արդի նկարիչներուն, որոնք կը մերժեն անցեալի ժառանգութիւնը, ուսուցման ծանրութիւնը, աւանդութեան օժանդակութիւնը կամ արդիւքները եւ կ'ուզեն*

ՓԱԶԻՄԻՐ ՄԱԼԵՎԻՉ

digitised by A.R.A.R.@



ՎԱԶԱՐԵԼԻ

նուաճել ազատութիւն մը, որ ձերբազատուած ըլլայ ամրողջ անցեալէն։

Այս կ'ըսէ մասնաւորաբար Ժան Տիւպիւֆէ իր գրութիւններուն (ինչպէս՝ «Հեղձուցիչ մշակոյթը»), իր գործին եւ «անտաշ արուեստ»-ի արտայայտութիւններուն մէջ, ուր կը մէկտեղէ տարօրինակ եւ ինքնաբուխ գործեր, որոնք ծնած են մշակութային ամէն աւանդութենէ դուրս, մեծ մասամբ հեղինակութիւնն են մտքով անհաւասարակշիռներու, եւ որոնք արուեստին մէջ վերատին կը մարցընեն անդիտակիցին մթամած եռքը, ծծմբային վարիկը երեւակայականի մը, որ արհեստագիտութեան խստականոն կարգին կը հնազանդի։

Բայց, մշակոյթէն խուսափելու նըկարչութեան այս յաւակնութիւնը չի կրնար պատմութենէն խուսափիլ։ Այսօրուան արուեստը մտածուած, փարձուած եւ ծիրի վրայ դրուած է յիսուն տարուան արմատական փոփոխութեամբ մը, որ սկիզբ կ'առնէ ֆիւպիզմի յեղափոխութենէն եւ որուն հանդրուանները նշեցին Քանտինսկի, Մալեւիչ, Մոնտրիան, Քլի, Ֆերնան Լեժէ, Բալտեր, Իլ Քլէյն եւ ուրիշներ։ Կարեւոր ցուցահանդէսներ, մէկը նուիրուած Փիեթ Մոնտրիանի, միւս-

digitised by A.R.A.R.@

ոը՝ Իվ Գէյնի, առիթ պիտի տան վերադառնալու այն համբան, որ կը տանի այժմու յաւաջապահ արուեստին։

Փիեր Մոնորիան չափագիտական արուեստը սարաւ մինչեւ իր վերջնադոյն հետեւանքները։ Փարիզեան թանգարաններու տնօրէններուն կողմէ երկար ժամանակ մերժուած այս հոլանտացին իր կեանքին մէկ մասը անցուց քառակուսիներ գծելով։ Իր ուղղահայեացհորիզոնական կառոյցներուն ընդմէջէն՝ փնտռածը կատարելութիւնն էր։ Հիմնական հաւասարակշռութիւնը։ Մոնորիան, ուղղանկիւնի այդ բանաստեղծը, նկարեց քանիներորդ դարու սրբանկարները։ Անոր գործերուն բացարձակ մաքրութիւնը, անոնց ամբողջական մերկութիւնը ազդեցին չափագիտական ամբողջ հոսանքին վրայ։ Օփ արուեստը եւ չարժարուեստը իրմէ կը բխին։

Իվ Գէյն, որ վեց տարի առաջ մեռաւ. 33 տարեկան հասակին, թողուց փայլկնացայտ գործ մը։ Ողջութեան աւելի ծաղր տեսաւ, որովհետեւ հասարակութիւնը չէր կրնար ըմբռնել, թէ գործ մը կրնայ միագոյն ըլլալ։ Նոր Ռէալիթիներու Սրահին մէջ, մերժեցին իր նկարը, ըսելով. «Նկար մը պէտք է առնուազն երկու գոյն ունենայ»։

Մշակոյթէն անդին, արդի արուեստագէտը ինքզինք կը մերժէ։ Ամենազօր աբարիչը, իր արարչութեան բացարձակ տէրը, որ իր գործով ուրիշին կը պարտադրէր աշխարհահայեացք մը, հրաժարած է իր առանձնաշնորհումներէն, ինչպէս նաեւ պատասխանատուութիւններէն։ Այսօր, արուեստագէտը մարդուն կ'առաջարկէ տեքոր մը (Վազարէլի), խաղ մը (Լը Փարք, Սոթօ), գործիք մը, որուն ղեկը կ'ուզէ իրեն վստահել (Ռաուշենպերկ, Շէֆֆէր)։

Օրինակի համար, Ռաուշենպերկի «Սաունտինկնիրը» կը ներկայացնեն ընդարձակ սենեակ մը, մէկ երեսին վրայ փակուած պատով մը, որ կազմուած է ծխամած թեր հայելիներէ։ Երբ հանդիսատեսը կը մտնէ սենեակէն ներս, ինքզինք ցոլացած կը տեսնէ հայելիին մէջ. անձամբ մաս կը կազմէ «նկարին»։ Երբ ձայներ կը հանէ (խօսք, երգ, կանչ, ոտնահարում), հայելիին եռեւը կը վառին լամբեր, ձայներու բնոյթին համապատասխան տեւողութեամբ եւ զօրութեամբ, անհետացնելով հայելիի տպաւորութիւնը եւ ապակիներուն եռեւ երեւան հանելով աթոռներու կոյտեր։ Հանդիսատեսն է որ ամէն վայրկեան կը ճշդէ բնոյթը այն տեսարանին, որ կը մատուցուի իրեն։ Ռաուշենպերկ իրեն «առաջարկած» է ձեւածին գործիք մը, զայն դնելով իր ազատ արամադրութեան տակ։ Գերթբան տը Ժուվրնել, իր կարգին, «Արքատ»-ի մէջ կը նկատէ, թէ «իսկական հանոյքը արուեստ ապաելուն մէջ չի կայանար, այլ արտադրելուն»։ Հոս, արուեստի դեռնին վրայ փոխադրուած կը տեսնենք տիալոգի եւ մատնակցութեան ըմբռնումները, որոնք այնքան կարեւոր են այլ մարզերու մէջ։

Արուեստը՝ սահմանուած փողոցին, առօրեայ կեանքին, իր տարրերը պէտք է գտնէ կեանքին ու փողոցին մէջ։ Այս որոնումը կը ձգտի նաեւ նշել գործին ժամանակաւոր բնոյթը, մինչ դարեր շարունակ, ինչպէս գրած է Անտրէ Մալրո, արուեստը ժամանակին դէմ պայքար մը էր, մարդուն համար փորձ մը՝ իր գործով նուաճելու յաւիտենականութեան մէկ մասնիկը։ «Երեւակայական թանգարանը իր ընտրած բոլոր գործերուն կու տայ եթէ ոչ յաւիտենականութիւնը, առնուազն առեղծուածային ձերբազատում մը ժամանակէն»։

Թինկելիի կողմէ յղացուած մեքենաները, որոնք իրենք զիրենք կը փճացընեն բուրումնաւէտ կայծեր արձակելով, կը նշեն հեռանկարներու չրջումին դերագոյն կէտը։ Մարդը, արուեստի ճամբով, կ'ուզէր աստուածանալ։ Հաւասարագործ արուեստը այսօր արուեստագէտը կ'իջեցնէ ժարդոց մէջ, իր հաւասարներուն, եղբայրներուն քով։ «Բազմազանները», որոնք կու տան բոլորովին իրարու նման տարբ կամ հարիւր մեկնութիւններ նոյն գործէն, բոլորն ալ ստորագրուած հեղինակէն, կը ժխտեն

digitised by A.R.A.R.@



ՓԻԵԹ ՄՈՆՏՐԻԱՆ

արուեստի գործի մը մէկ ուրիշ յատկանիշը, որ կը նպաստէր անոր վարկին եւ առեւտրական արժէքին. անոր եզականութիւնը։

Վերարտադրութեան միջոցներուն կատարելագործումը, շուկայի ընդարձակումը, արուեստի գործը ռամկացնելու ցանկութիւնը կը յանդին գործին բազմացման, որուն կը ձգտի թէ՛ Վազարէլիի Օպ արուեստը եւ թէ Լը Փարքի ու Սոթոյի շարժարուեստը։ Ռամկացած, բազմապատկուած, լուծուած՝ գործը կը դառնայ նաեւ ժամանակաւոր եւ անբաւոյդ։ Շէօֆֆէրի «վիտրինոնները» պատկերասփիւռի փոքր պատատաին վրայ կ'արձակեն գունաւոր եւ շարժուն ձեւեր, զորս անկարելի է յիշատակի վերածել կամ պահել։ Գործը գոյութիւն ունի ա՛յն ատեն միայն, երբ գործիքը կ'աշխատի. տեւական լինելութեան մէջ է։ Սոթոյի «Փենեթրաթալները», որոնք կը կազմեն կերպընկալ նիւթէ տեսակ մը անատա, իբրեւ գործ գոյութիւն ունին ա՛յն ատեն միայն, երբ այցելու կ'ընդունին։ Գործը, հոս, ոչ թէ կարգ մը նիւթերու արուած ձեւն է, այլեւ ա՛յն կապը, որ կը հաստատուի առաջարկուած այդ նիւթին եւ մարդուն միջեւ։

Ասիկա արուեստի այս բոլոր ձեւերուն հասարակաց հիմնական յատկանիշներէն մէկն է։ Ոչ ոք կը կասկածի, թէ Երեքշաբթի, Լուվրի փակման օրը, «Լա Ժոքոնտը», իր պատին վրայ, բոլոր նայուածքներէն հեռու, կը շարունակէ ըլլալ Լէոնար տա Վինչիի գլուխ-գործոցը։ Մինչդեռ, առանց այցելուի, Ռաուշենպերկի «սաուլնտիկ»ները հայելի մըն է միայն, Շէօֆֆէրի «վիտրինոն»՝ անօգուտ գործիք մը, իսկ Սոթոյի «Փենեթրաթալը»՝ առաձգական լարերու կոյտ մը։ Ասիկա անոր համար՝ որ արդի արուեստը սահմանուած է ո՛չ թէ դիտուելու, այլեւ ապրուելու։ Ան պէտք է գործէ հանդիսականին վրայ կամ պէտք է գործէ անով, ու այս կապին ուժականութեան մէջ կը կայանայ արուեստի գործի անոր հանգանակը եւ գեղագիտական արժէքը։

Մերժումի արուեստ, սահմանուած օգնելու մարդուն, որ դուրս գայ ընկերութեան կապանքներէն, արդի արուեստը կը ժխտէ նաեւ անոր առեւտրական հանգամանքը։ Իր նիւթերուն ընտրութեամբ, վերարտադրութիւններու բազմացումով, գործին պարզայական եւ առժամեայ բնոյթով, արդի արուեստը կ'աշխատի նաեւ յուսահատութեան մատնել շահագէտները։ Արդի արուեստի գործը հարուստի մը պատերը զարդարելու ձգտումը չունի։ Այլ կը փափաքի տարածուիլ ամենացած գինով, հասնիլ կարելի բոլոր սիրողներուն կամ հաստատուիլ հանրային վայրերու մէջ ու դիւղին հրապարակին վրայ, հոն տանելու համար իր խաղերը եւ գրգռութիւնները։

Բայց արուեստի շուկան ցոյց կուտայ այնպիսի ճկունութիւն մը, որ ինքնին կ'արգարանայ փիլիսոփայ Հերպերթ Մարքիւսի տեսութիւնը։ Եթէ արուեստի գործը լաւ յաճախ ինքզինքը կը հաստատէ իբրեւ ըմբոստութեան արարք մը՝ ընկերային կառոյցներու դէմ, աշխատելով օգնել մարդուն, որ յաջողցնէ

digitised by A.R.A.R.@



ՇԷՕՖԷՐ

«իր ազատագրութեան ազէտը», ընկերութիւնը կը պաշտպանուի, արուեստը վերառնելով իբրեւ սպառումի առարկայ եւ այդ ըմբռնումը դարձնելով նոր ապրանք մը։ Կալըրիներ կը մասնագիտանան այս նոր շուկային շահագործման մէջ, ինքնատիպ վիմագրութիւնը եւ միւլթիփլը շեղելով իրենց խոստովանելի նպատակներէն։

Բլոտ ծիվոտանի մօտ, նկարիչ Էրբոյտոյց կու տայ իր գործերուն լուսապատկերները։ Այն գործերը, որոնք վար կը դրուին, մասնաւոր աշխատանոցի մը մէջ կը պատրաստուին յանախորդին մատնանշած չափերով։ Վաճառականութեան տիրապետութենէն խուսափելու համար, Տանիէլ Գիւրէն կը հրաժարի նկարներ գծելէ, իր նկարները տպել կու տայ թուղթի երկար երիզներու վրայ եւ զանոնք ուղղակի կը փակցնէ պատին։ Բայց որովհետեւ կը խօսին իր մասին՝ կը ծախէ իր հին կտաւները, ու միլանցի հարուստ մը իրմէ ինդրած է երթալ ու զարդարել իր յարկաբաժնին մէկ պատը։ Ընկերութիւնը այնքա՛ն արագ կը յարմարի պայմաններուն, որ ըմբռնա արուեստագէտը չի յաջողիր երկար ժամանակ մնալ լուսանցքի վրայ, անմիջապէս որ յաջողութիւն գտնէ։

Այս յաջողութիւնը կախում ունի յիսուն հոգիէ, որոնք կը գտնուին բանալի պաշտօններու վրայ։ Տասը հաւաքածոյ

digitised by A.R.A.R.@

պահողներ. Ռոլան տը Մոթեկիւ՝ Փարիզ, կոմս Բանծա՝ Իտալիա, Ռապերթ Սքուլ՝ Նիւ Եորք... Տասը քննադատ։ Հինգ թանգարանի անօրէն. Ֆ. Լ. տը Վայլա՝ Ամսթերտամի Սթեդելիք թանգարանէն, Ռ. Ժ. Բոնթիւս Հուլթըն՝ Սթոքհոլմի Մոտերնա թանգարանէն, Հերբըրտ Զիման՝ Գերնի Բունսթալէն, Գէյթս Լովրի՝ Նիւ Եորքի արդի արուեստի թանգարանէն... Հինգ վաճառական. Լէօ Քասթելլի եւ Սիտնի Ժանիս՝ Նիւ Եորք, Շմելա՝ Տիւսելտորֆ։ Ու քանեակ մը արուեստագէտներ։ Ամէնէն լաւատեղեակները եւ արագ իմացողները ասոնք են։ Ամէնէն ուելի հոսանութիւն ունեցողներէն կարելի է թուել Թինկելին, Ռաուշենպերկը, Լիխթանշթէյնը, Ռասը։ Այս մարդերը իրենց պաշտպանեալները կը լքեն, երբ անոնք ընկրկին։ Այն ատեն, կը հառաչեն. «Որքան լաւ էին 1952–1962 տարիները...»

Տասը տարիէ ի վեր ականատես կ'ըլլանք 50-ական թուականներու բազմաթիւ համբաւներու անկումին։ Փոխարէնը երեւան կու գան ուրիշներ։ Օրինակ, պատերազմէն ետք, «հասկցողները» Մակրիթին տուած էին «գրական» պիտակը, ինչ որ այն ատեն զրպարտութիւն կը նկատուէր։ Աւելին, կ'ըսէին անոնք, Մակրիթ կը նկարէ անկանոն ձեւով, առանց անձնական կնիքի։ Այս այն շրջանն էր, երբ կար ձեռքին կրօնքը, երբ կը հիանային ծանրօրէն աշխատուած թանձր նկարներուն վրայ։

Տարիները անցան, շարժական արուեստը, Փոփ արուեստը նորոյթի վերածեցին մեքենայաբար դրուած գոյները։ Ձեռքը Ընդունցաւ ի նպաստ դրեթէ ճարտարարուեստական հաշուեկշռի մը։ Գրականէն՝ դարձաւ «ուղեղային» ու գովք չգտան՝ դրուատելու համար ա՛յն եղանակը, որ ան գտած էր ձեռքին ճարտարութիւնը անանուն ազդակով մը փոխարինելու համար։ Համբաւներու այս յաբաբերութիւնը երկար խնդիր մըն է։ Կը հետաքրքրէ մանաւորապես հաւաքածոյ պահողները, որոնք չահ կ'ակնկալեն նկարներու գնումէն եւ վաճառումէն։ Արդի արուեստը նորաձեւութենէ կը դադրի մասամբ։ Կարեւորը այսօր բերածն է, աշխարհին հետ մեր յարաբերութեան մէջ։

Տարիներէ ի վեր, նկարչութիւնը պատկերաւոր կամ վերացական տեսարան մը չէ, այլ շրջապատում, ստեղծումը արուեստական տեսարանի մը։ Իրին հետ կը բերէ կեանքի նոր փիլիսոփայութիւն մը, որ կը հակադրուի վիպապաշտութեան, բնութեան կարօտին։ Կը ձգտի մեղմացնել արհեստապիտակն դաբաշրջանին ստեղծած սարսափը, բացատրել աշխարհը եւ երկարել, վերահաստատել գիտութեան հետ խզուած կապը, որովհետեւ, գիտութիւն եւ արուեստ, տարբեր նպատակներով՝ կու գան նոյն ծանօթութենէն։

Արդէն իսկ, իր ժամանակին, Գլիի վերացականութեան ճիգը կը նկատուէր «ճմռոյշը իր սկզբնական ծագումին վերադարձնելու» ցանկութիւն մը, իսկ Մոնտրեան կ'ուզէր իրականը մաքրել անեկդոտէն եւ եղերականէն, որոնելու համար հիմնական օրէնքները, աշխարհի կմախքը։ Նոյն նպատակին կը ձգտին արդէն փիլիսոփաներն ու դիտնականները։ Արուեստի ընկերաբան Փիէր Ֆրանքասթէլ արդի ընկերութեան մէջ արուեստագէտին տուաւ որոնողի, ռամկացնողի եւ միջնորդի դեր մը։ Ֆրանքասթէլ նախատեսած է արուեստի այն փոփոխութիւնները, որոնց ծնունդ պիտի տան պիտակի նուաճումները։ «Ներկայ աշխարհին մէջ, ուր արագութիւնը դրականացուցէ որակ փոխեց, ուր շարժումը մարդուն համար դարձաւ մտերմական նոր փորձարկութիւն մը, ուր արհեստագիտութիւնը ամէն օր ճիւթի տարբերադրութեան եւ համադրութեան երեւոյթներ կ'իրագործէ, ծանօթութեան հին ըմբռնումներուն հաստատիմ արուեստ մը ժամանակավրէպ արուեստ մըն է»։

Վազարէլի կ'ընդունի, թէ չատ մը արուեստագէտներու ներշնչման ձեւերը այսօր կու գան հիւլէէն, ծիր-կաթիններէն եւ մագնիսական դաշտերէն։ Իրեւ

digitised by A.R.A.R.@

մակագրութիւն շարժական արուեստին, որ նիւթին թրթռացումի զգացումը վերարտադրող ձեւերու եւ գոյներու ցանց մըն է, Վազարէլի կ'արձանագրէ կառուցն Պաշլյարի հետեւեալ խօսքը. «Մի՛ թրգիզիրի տեսակէտէն, անհրաժեշտ է նիւթը ենթադրել հաստատուն վիճակի մէջ, քանի որ նիւթը մեզի համար գոյութիւն ունի իբրեւ ուժ եւ միայն ճառագայթումով կը խօսի մեզի»։

Անցեալ շաբաթ, Նիկոլա Շէօֆֆէր Սարքաւորումի նախաբաւութենէն վերջնական արտօնութիւն ստացաւ, Պաշտպանութեան Բոլորակին մօտ շինելու իր շարժապատ աշտարակը։ 347 մեթր բարձրութեամբ, Շէօֆֆէրի աշտարակը պիտի ունենայ 3226 բազմագոյն լուսարձակներ, 2000 էլեկտրոնիկ ֆլէշներ, 32 ցոլացող պտուտակներ եւ 363 կոր հայելիներ, որոնք պիտի զառնան 114 անթեւավար առանցքներու վրայ։ Աշտարակը շարունակ ձայն եւ լոյս պիտի սփռէ՝ օգտագործելով արհեստագիտութեան վերջին յառաջդիմութիւնները, կերպարանափոխելու համար քաղաքին տեսարանը։

Բայց ամէնէն հետաքրքրականը ամէնէն ակնախիզը չէ։ Աշտարակը պիտի դառնայ եւ աշխատի շնորհիւ օրտինաթէօրի մը, որ պիտի հակազդէ հիմնուելով զանազան տեղեկութիւններու վրայ, ինչպէս ջերմութեան աստիճանը, ՀՊՀ-ությունը, հովին արագութիւնը, լուսաւորութիւնը, սակաւանին վիճակը, շոգեկառքերու մեկնումը կայարաններէն եւ հեռաձայնի զիծերուն խճողումը։ Հոս, նպատակը յստակ է. լուսաւոր ձեւերով տալ քաղաքի մը խոր կեանքը։ Ասիկա մեքենական յառաջդիմութիւնը արուեստի ստեղծագործութեան մէջ մտցնել չէ միայն, այլ ստեղծել նոր գործիք մը՝ համապատասխան հաւաքական կեանքին, գործիք մը, որ ըլլայ անոր յատկանիշը, խորհրդապատկերը, մարգարէութիւնը եւ գեղագիտական վերծանումը։

Նիւ Եորքի մէջ ստեղծուած է ընկերակցութիւն մը՝ Էքսպերիմենթ ին Արթ Էնտ Թեքնոլոճի, գործակցութեամբ արուեստագէտ Բարբրա Բաուչենպերկի եւ Պէլ Թելեֆոն Բեմփրնիի մօտ լէյզերի մասնագէտ Պիլ Քլիմերի։ Արուեստագէտներէ եւ գիտնականներէ բաղկացած խումբեր կ'աշխատին արհեստագիտական լուծումներ գտնել արուեստագէտներու երեւակայած խնդիրներուն, կամ գիտնականներու գիւտերը գեղագիտական նպատակներու ծառայեցնել։

ՓՕԼ ՔԼԻ

Այս ընկերակցութեան կողմէ անցեալ Դեկտեմբերին կազմակերպուած մրցումը շահեցաւ 43 տարեկան Ֆրանսացի մը՝ Ժան Տիւփիւի, որ գործակիցն է 33 տարեկան ամերիկացի ճարտարագէտ Բարի Մարթէլի։ Տիւփիւի շինած է ապակիէ տարօրինակ տուփ մը՝ «Փոշին զարնող սիրտը», ուր անտեսանելի արտի մը բաբախումներուն ենթակայ մատնոդիչ կարմիր փոշի մը կը բարձրանայ եւ կը տարածուի։ Այս գործին նպատակն է բանաստեղծութիւնը մտցնել կեանքին մէջ՝ մեքենային գործածութեամբ, փառաւել՝ որ արհեստագիտական յառաջդի-

digitised by A.R.A.R.@

մութիւնը դէմ. չէ երազին, այլ ընդհակառակն, երազը կը մնայի անով։

Արդի արուեստին բոլոր գիւտերը ընդունելի չեն անշուշտ։ Որովհետեւ – շրջելով Փիքասոյի խօսքը – արդի արուեստը աւելի որոնող արուեստ մըն է, քան՝ ստեղծագործող։ Եւ սակայն, սրխալներէն, չափազանցութիւններէն եւ ձախողութիւններէն անդին՝ պէտք է ընդունիլ այդ որոնման ուղղութիւնը եւ նշանակութիւնը։ Նոպէլեան մրցանակաւոր ժաք Մոնօ, Գոլէժ տը Ֆրանսի հիւլէական կենսաբանութեան ամպիոնի իր բացման դասին մէջ, կը վերլուծէր «Քանդի այն զգացումը, թէ գիտութիւնը մարդը կը դարձնէ անձնանօթ մը այն տիեզերքին մէջ, ուր ան այլեւս վերապահուած եւ անհրաժեշտ տեղ մը չունի»։

Այսօրուան արուեստագէտներէն շատեր այս զգացումին դէմ հակազդելու համար է որ կը յղանան իրենց գործերուն ստեղծումը եւ տարածումը։ Ժաք Մոնօ կ'եզրակացնէր. «Ի՞նչ իմէալ առաջարկել այսօրուան մարդոց, որ իրենցմէ վեր ու անդին ըլլայ, եթէ ոչ, գիտութեան միջոցաւ վերանուանումը ա՛յն ունայնութեան, որ իրենմէ գտաւն»։ Արդի արուեստը այս ունայնութե՛ւնն է՝ որ կ'ուզէ «ապրելի» դարձնել։

Փ. Գ.

ԲԱՌԱՐԱՆ ԱՐԴԻ ԱՐՈՒԵՍՏԻ

ART CINETIQUE

ՍԻՆԵԹԻՔ ԱՐՈՒԵՍՏԸ կը ներշնչուի վազքուղիի երեւակայած տեսողական խաղերէն։ Այս արուեստին հետեւողները իրենց գործերուն մէջ կը մտցնեն շարժում մը, որ կ'արտադրուի մեքենայի մը կամ լոյսի փոփոխութիւններուն շնորհիւ։ Սինեթիք արուեստագէտները առաւելագոյն չափով կ'ընդունին բազմատպումի սկզբունքը։ Քանի որ գործը իմէնին յարափոխ է, ճախտիպերը բազմացնելը ոչ մէկ կարեւորութիւն ունի։

MULTIPLE

ՄԻՒԼԹԻՓԼԸ արուեստի գործ մըն է, որ կէս ճարտարարուեստական եղանակով կ'արտադրուի։ Ընկերային նպատակներ կը հետապնդէ։

ART CYBERNETIQUE

ՍԻԲԵՐՆԵԹԻՔ ԱՐՈՒԵՍՏԸ արուեստի այնպիսի ձեւ մըն է, որ կ'օգտագործէ օպտիմաթէօրներ։ Սիպերնէթիք նեն Շէօֆֆէրի կարգ մը շարժական արձանները, որուն կը «հրամայէ» ելեկտրոնիք ուղեղ մը։ Այս վերջինը կը վերլուծէ տեղեկութիւնները եւ զանոնք լոյս շարժումի կը վերածէ։

ART TECHNOLOGIQUE

ԹԷՔՆՈԼՈԺԻՔ ԱՐՈՒԵՍՏԸ կ'օգտագործէ թեքնոլոժիք արդիական մեթոտները։ Որեւէ գործ, որ կը գիտէ թէքնիք զարգացած միջոցներու «թեքնոլոժիք արուեստին մաս կը կազմէ։ Օրինակ՝ Թոմիս եւ իր մագնիսական ալիքները, Մարթիալ Ռայս եւ իր պատկերասփիւռային վիտեոները, Ակամ եւ իր լուսաւոր ալիքները։

MINIMAL ART

ՄԻՆԻՄԱԼ ԱՐՈՒԵՍՏԸ ակնչութեան հոսանք մըն է, որ կը ձգտի ձեւերը վերադարձնել իրենց ամենապարզ տարրերուն. խորանարդ, քառակուսի, զուգահեռական։ Իր կարգախօսն է «Վեր քմ մոր», նուազագոյնը առաւել է։ (Մորիս, Նիւման)։

NOUVEAU RÉALISME

ՆՈՐ ԻՐԱԿԱՆՇՏԱՒԹԻՒՆԸ փոփ արթի հրապարակաւ զուգահեռ է։ Նոր իրականշտանները ուղղակիօրէն կ'օգտագործեն առարկան։ Կտրատուած ոտիշներ, գունաւոր սրուակներու կուտակում։ Այս արուեստին կը հետեւին Իվ Քլէյն, Թինկէլի, Նիֆի տը Սէն-Ֆալ, Տանիէլ Սպոէրրի։

OP ART

ՕՓ ԱՐԹԸ տեսողական խաղերու հետաքրքրութիւն է։ Կու տայ երրորդ տարածութեան տպաւորութիւնը, գոյներու թրթռացումով։ Օփ արթի կը հետեւին Բրեթէրք Նավլենտ, Պրիթ Բիլի եւ ուրիշներ։

POP ART

ՓՕՓ ԱՐԹի արուեստագէտներուն մեծագոյն կը ծառայեն փիւլիսիթէն, լուսանկարը, գծագրուած երիզները։ Այս արուեստին կը հետեւին Վարհոլ, Լիխտենշթայն եւ ուրիշներ։

digitised by A.R.A.R.@

Լ. ՄԿՐՏՉԵԱՆ

ԵՒՍ ՄԻ ՊԱՏՄԱԿԱՆ ՀԵՐՈՍԱՄԱՐՏԻ ՀԵՏՔԵՐՈՎ

Իրերի տրամաբանութեամբ, Հայաստանում այսօր ասուիճանաբար աւելի յանախակի է դառնում «հերոսամարտ» արտայայտութեան գործածութիւնը, այն իմաստով, ինչպէս որ հասկանում է Հայոց Պատմութեան մանաւանդ վերջին հարիւրամեակի իրագործութիւններին տեղեակ իւրաքանչիւր հայ։ Ասաիճանաբար բացւում են վարագոյրները՝ մինչեւ հիմա անտեսուած ու «մոռացութեան» տրուած, յաճախ էլ ուրացուած կամ հայհոյութեան թիրախ դարձուած պատմական դէպքերի ու դէմքերի վրայից։ Թէեւ տակաւին վաղաժամ է ծաւալուող շարժումը հանրագումարի բերելը, նոյն ժամանակ անկարելի է նաեւ չտեսնել ու չզգալ այդ շարժման բնոյթը եւ ուղղութիւնը։

Հայրենի պատմութեան ուշագրաւ դրուագների յիշատակը համայն ժողովրդի յիշողութեան մէջ թարմացնելու եւ ընդմին ամրապնդելու տրամադրութիւնը նիւթական մարմնաւորում է դրսեւում նորաբնոյթ յուշարձանաշինութեան միջոցով եւ նրան զուգընթաց հանդիսութիւնների մէջ։ 1965 թուականին յաջորդող ժամանակաշրջանը, այսինքն Մեծ Եղեռնի 50-ամեակով սկսուած նոր մթնոլորտը, խորհրդահայ պատմութեան մէջ ըստ երեւոյթին պիտի նշանաւորուի համազգային յուշարձանաշինութեան աննախընթաց թափով։ Մինչեւ հիմա կառուցուած յուշարձանները, անշուշտ, սակաւաթիւ են եւ տակաւին փաստօրէն անաւարտ, բայց մեծախոստում։ Մեծեռնակաբերդի բարձունքի Եղեռնի յուշարձանախումբը, օրինակ, ըստ հաւասոի տեղեկութիւնների, պիտի օժտուի 100 մեթր երկարութեամբ «Նահատակների Պատով» համապատասխան ձեւաւորմամբ։ Թերեւս դրան յաջորդեն եւ ուրիշ իրագործումներ։ Նոյնպիսի ու առաւել ընդլայնում է նախատեսւում նաեւ Սարդարապատի յուշարձան-դրօսայգու շրջանակում, որն ինքնին արդէն միանգամայն պերճախօս երեւոյթ է։

digitised by A.R.A.R.@

Այսօր զարմանալի չի թւում այլեւս, երբ պատասխանատու եւ բանիմաց անձինք հրապարակօրէն յայտարարում են, – տես երիտասարդական «Գարուն» ամսագրի 68 թուի օգոստոսեան համարի հարցազրոյցը, – թէ հայ ժողովրդի ազգային-ազատագրական հերոսամարտերից ամենափառահեղը Սարդարապատինն է, որը իրեն հաւասարը չունի։ Ինքնին հասկանալի է թւում, երբ յայտարարւում է, թէ զբօսայդին պիտի ընդլայնուի ու նոր կառոյցներ պիտի լինեն, այսինքն դրուելու են Սարդարապատի ճակատամարտի հերոսների, դեկավարների ու ոգեւորողների արձանները, վերակառուցուող զանգերը հանդիսաւորապէս հնչեցնելու են Կոմիտասի կամ Եկմալեանի ստեղծագործութիւնները, ինչպէս եւ կառուցուելու է «Հայ ազգային-ազատագրական շարժումների» երկու բաժնից բաղկացած տակաւին եղակի թանգարան, որի առաջին մասը «այցելուներին կը պատմի մեր ժողովրդի հերոսական անցեալի, ազատութեան ու անկախութեան ձգտող նրա մարտական ոգու մասին, սկսած Հայկի եւ Բէլի առասպելից, մինչեւ Սարդարապատի հերոսամարտը»։ Այսօր մենք կարող ենք վստահօրէն արձանագրել, որ իսկապէս «եղածը սկիզբն է դեռ»։ Մի սկիզբ, որն ինքն իրեն տարբերայնօրէն չներկայացաւ եւ հետեւապէս չի կարող մնալ առանց պատշաճ շարունակութեան ու ամբողջական իմաստաւորման։

Յօդուածի սկզբում յիշատակեցինք, որ Հայաստանում ատիճանաբար սովորական է դառնում «հերոսամարտ» արտայայտութիւնը հայկական իմաստով գործածելը։ Եւ բնական է, որ առաւելապէս «հերոսամարտներից ամենափառահեղի» Սարդարապատի 18 թուի մայիսեան ճակատամարտի կապակցութեամբ շրջանառութեան մէջ դրուի, ամրապնդուի ու օրինականացուի «հերոսամարտ» հասկացողութիւնը։ Բայց միաժամանակ գիտենք, որ Սարդարապատի հերոսամարտը ոչ առաջինն էր և ոչ էլ միակը Հայոց Պատմութեան ընթացքում, թէեւ իր մէջ առաւելագոյն չափով խտացնում է հերոսական սխրանքների ընդունակ ժողովրդի բարձր ու առաքինի ոգին։ Ուստի նոյնպէս բնական է, որ նոր լոյսի տակ քննութեան առնելն մեր նորագոյն պատմութեան նաեւ միւս դրուագները, որոնք այս կամ այն չափով առընչութիւն ունեն հերոսականութեան դրսեւորման հետ։

Արդ, այդպիսի պատմական եւ ուշագրաւ դրուագներից էր եւ այն, ինչ որ տեղի ունեցաւ 1918 թուի գարնանն ու ամրանը Բաքւում եւ շրջակայքում, եւ ինչ որ մեր ազգային քաղաքական դրականութեան ու յուշագրութեան մէջ սովորաբար կոչւում է «Բաքուի հերոսամարտ»։ Բաքուն Հայաստան չէ եւ 18 թուի իրադարձութիւնները, անտարակոյս, զուտ հայկական բնոյթ չէին կրում։ Բայց եւ այնպէս, մենք առանց վարանելու հնարաւոր ենք համարում այնտեղ մղուած կռիւների ամբողջութիւնը բնութագրել որպէս հայկական հերոսամարտ, որովհետեւ այդ պայքարի մէջ հայերը թուով եւ ուժականութեամբ վճռական գործօն էին հանդիսանում, մարտնչում էին անմիջապէս 90 հազարի հասնող հայկական զանգուածի գոյութիւնը ապահովելու համար ու, մանաւանդ, նրանց պայքարը բախտորոշ նշանակութիւն ունէր եւ հենց բուն Հայաստանի Հանրապետութեան ու հայրենաբնակ խռովայոյզ հայութեան ճակատագրերի համար։ «Առանց Բաքուի, – առած է Սիմոն Վրացեանի «Հայաստանի Հանրապետութիւն» գրքում, – Հայաստանի դէպքերը կարող էին բոլորովին այլ ընթացք ստանալ»։ Թէ Բաքուի հերոսամարտի մասին մինչեւ հիմա ինչ է գրուել՝ Հայաստանի խորհրդայնացումից առաջ ու ապա «Գարմիր գծից դուրս»՝ յայտնի է շատերին։ Այստեղ մեր միակ նպատակն է ցոյց տալ, թէ այդ նիւթի շուրջ ինչ է գրւում այսօր Հայաստանում եւ ինչ նկատելի տեղաշարժեր կան այդ ասպարէզում։

1918 թուի Բաքուի դէպքերը տասնամեակներ շարունակ խորհրդային հե-

digitised by A.R.A.R.@

դինակներին հեռաքշքշել են բացառապէս որպէս «Բաքուի Կոմունայի պատմութիւն», «Խորհրդային իշխանութեան պատմութիւն», ռուսական յեղափոխութեան եւ կոմունիստական շարժման կցորդ պատմութիւն։ Ցամաքօրէն անտեսուել է ժամանակաշրջանի ու դէպքերի սպառիչ ու համապարփակ ամբողջութիւնը։ Դրա փոխարէն առաջին գիծ են մղուել սոսկ որոշակի իրողութիւններ ու նրանց հիման վրայ էլ հեռապնդուել է որոշակի պարտադիր նպատակ։ Ուստի իրական պատմութիւնը առանց այլեւայլութեան փոխարինուել է յոբելինական կամ այլ առիթներով հրամցուող միակողմանի փաստաբանութիւնների ու անէծքների կոյտով։ Սոսալինեան տիրապետութեան պայմաններում, յատկապէս, դա համարուել է միակ հնարաւոր վերաբերմունքը եւ սնամէջ դրոյթները կրկնուել են ու փոխանցուել սասնամեակից տասնամեակ։ Մինչեւ վերջին ժամանակներս յամառօրէն աչքաթող էր արուած մանաւանդ հայերի կատարած հսկայական գործը։

Շատ հեռու կը տանէր այդ միաւմնաւոր անտեսման դրդապատճառներն ու նպատակները բացայայտելու փորձը։ Մերկ իրողութիւնն այն է, որ Բաքուի 18 թուի դէպքերի պատմութիւնը խորհրդային օրօք գրուելիս՝ յատուկ նկատառումով աչքաթող է արուել ո՛չ միայն հայ ազգային ուժերի վաւերական գործունէութիւնը, ինչ որ ինքնին բացատրելի է, այլեւ հենց հայ կոմունիստների, այն էլ ակնառուր կոմունիստների կատարած առաջատար դերը։ Եւ դա միաւմնաւոր անուշադրութեան եզակի բնագաւառ չէ, այլ շահախնդիր ռազմավարութեան ընդհանուր շղթայի սոսկ մէկ օղակը։ Ովքեր ծանօթ են Բերիայի 35 թուին հրապարակ հանած ախրահրոշակ գրքի բովանդակութեանն ու առաջ քաշած գրոյթներին, գիտեն, թէ կոմունիստական իշխանութեան պայմաններում եւ առհասարակ՝ այս կամ այն «անմեղ» թուացող, բայց ազդեցիկ «ճչտումների» քողի տակ ինչպէսի՛ հեռահաս քաղաքական նպատակներ են թաքցուում։ Իսկ այսօրուայ հայաստանեան կացութիւնն էլ այն է, որ նախնական փորձեր են արուում դուրս գալու երկարամեայ «կարիարդական շրջանից» ու մօտենալու ազգային իրականութեան ակունքներին։ Ճիշդ է, առայժմ խօսք չի կարող լինել, օրինակ, 1918 թուի Բաքուի հերոսամարտի ամբողջական արժէքաւորման մասին, բայց գիտա-հեռատեսական խորացումները անպայման ճանապարհ են հարթում, որպէսզի ճշմարտութեան որոնումը ընթանայ բուն պատմական իրականութեան, այլ ոչ թէ հակառակ ուղղութեամբ։ Մնացածը ժամանակի եւ հանգամանքների դատաւորման հարց է։

Բաքուի 18 թուի իրադարձութիւնների պատմութիւնը գիտականօրէն ուսումնասիրելու նոր փուլի շրջանակում ուշագրաւ կարելի է համարել Արամայիս Մնացականեանի 19-էջանոց ռուսերէն յօդուածը, որը զետեղուել է Երեւանի «Լրաբեր հասարակական գիտութիւնների» ամսագրի 68 թուի յունուարեան համարում։ Առհասարակ այդ համարը աչքի է ընկնում իւրայատուկ բովանդակութեամբ, ինչ որ մինչեւ հիմա ռովորական չէր խորհրդային գիտական հանդէսների համար։ Այսինքն, ծաւալի երկու երրորդը յատկացուել է հասարակական որոշակի քնագաւառի եւ հինգ տարբեր՝ հայերէն կամ ռուսերէն ուսումնասիրութիւններ լուսաբանում են փաստօրէն նոյն հարցի տարբեր կողմերը։ Եւ այդ ուսումնասիրութիւնները մէկը միւսից ուշագրաւ են՝ թէ՛ փաստական բովանդակութեամբ եւ թէ ընդհանուր հարցադրման համայնապատկերի շրջանակում։ Մեր առջեւ ունենք մի չօշափելի նախաձեռնութիւն, որը լիովին ի վիճակի է տեսական աւանդոյթ դառնալու։

Աբ. Մնացականեանի յօդուածը կոչւում է «Կովկասեան Կարմիր Բանակի պատմութեան շուրջ» եւ արծարծում է մի որոշակի հարց, թէ ինչպէս է կազմաւորուել կարմիր բանակը Կովկասում 18 թուին, ինչ ճանապարհ է անցել եւ

digitised by A.R.A.R.@

ինչպիսի կաղմ ունեցել։ Այստեղ նպատակայարմար է թարգմանել յօդուածի կարճ ու դիպուկ նախաբանը. «1918 թուի կովկասեան կարմիր բանակի պատմութիւնը, – գրում է հեղինակը, – դեռ չի հետազօտուած եւ նրա մասին չեն ստեղծուել յատուկ գիտական աշխատութիւններ։ Այդ հարցը ներկայացնում է որոշակի հետաքրքրութիւն եւ ունի սկզբունքային նշանակութիւն՝ Անդրկովկասում 1968 թուի Յունուարից մինչեւ Յուլիսը տեղի ունեցած յեղափոխութեան ամբողջ պատմութիւնը եւ մանաւանդ բաքուի Կոմունայի ռազմական պատմութիւնը հիշդ լուսաբանելու համար։ Հրատարակուած որոշ աշխատութիւններում, որոնց մասին խօսք կը լինի հետագայում, սակաւ բացառութիւններով, Կովկասեան կարմիր բանակի կազմակերպման հարցերը, նրա կազմը, մարտական գործողութիւնները, յաղթանակներն ու պարտութիւնները կամ բոլորովին լռութեան են տրւում, կամ էլ նրանց մասին խօսւում է միակողմանիօրէն, խեղաթիւրւում է ճշմարտութիւնը, պատմական ընթացքը ներկայացւում է կեղծ լոյսի տակ։ Սոյն յօդուածի խնդիրը համեստ է, – շարունակում է հեղինակը, – սեղմ կերպով շարադրել Կովկասեան կարմիր բանակ ստեղծուելու պատմութեան ընդհանուր գծերը, նրա մարտիկների, հրամանատարների ու կոմիսարների ազգային ու դասակարգային կազմը, նրանց հերոսական սխրագործութիւնները՝ Բաքուի Կոմունայի ստեղծման ու նրա պաշտպանութեան համար մղուած մարտերում, բանակի գործողութեան ռազմա-քաղաքական բարդ պայմանները, նրա ազատագրական խորտակումը»։ Պէտք է ասել, որ յօդուածի բովանդակութիւնը լիովին համապատասխանում է վերնագրին եւ հեղինակը դուրս չի գալիս նախապէս գծած շրջանակից։

Նկատելի է, որ յօդուածագիրը յատուկ կարեւորութիւն է տալիս փաստերին եւ առհասարակ չատ չի ծաւալւում վերացական դատողութիւնների ոլորտում։ Նրա ի մի հաւաքած փաստական տուեալները, որքան էլ թերի եւ միակողմանի լինեն, անպայման ուշադրութեան արժանի են, այլ ոչ թէ մի կերպ որեւէ յօդուածի թիւրելու ընթացիկ ցանկութեան։ Այդ աշխատանքը ըստ էութեան աւելի է արժէքաւորում, երբ հաշուի ենք առնում վաւերական նիւթեր հաւաքելու հիմնական կամ գործնական դժուարութիւնները։ «Կովկասեան Կարմիր Բանակի արխիւային փաստաթղթերի ճակատագիրը բաւական արտառոյց է, – յօդուածում մի տեղ գրում է Մնացականեանը, – նրանք ընկել են այնպիսի մարդկանց ձեռք, որոնք այրել են փաստաթղթերը, ընդելով շատ կարեւոր իրադարձութիւնների հետքեր։ Փաստաթղթերի մի մասը մտել է Բիչերախովի ջոկատի արխիւները, սպիտակ-գուարդիական նիւթերի մէջ, մի մասը ընկել է Վառնա, հայկական զօրամասերի սպայակոյտերի նիւթերի հետ, իսկ մի մասն էլ փրկուել եւ պահւում է անդրկովկասեան հանրապետութիւնների արխիւներում։ Այդ նիւթերը վկայում են, որ Բաքուի Կոմունայի պաշտպանների շարքում յատկապէս աշքի են ընկել հազարաւոր շարքային հայ կամաւոր մարտիկներ, հրամանատարներ, քաղաքացիներ. նրանց սխրագործութիւնը մի ամբողջ դիւցազներգութիւն է։ Ահա այդ սխրագործութիւնը ընդհանուր գծերով եւ նախնական սահմաններում վերակենդանացնելու մէջ էլ, մեր կարծիքով, կայանում է Մնացականեանի ուսումնասիրութեան դրական նշանակութիւնը։ Անշուշտ, բնական է, որ հեղինակը չնչին դնի սուհասարակ Բաքուի Կոմունայի եւ Կովկասեան Կարմիր Բանակի պատմութեան վրայ։ Բայց յօդուածը մեզ հետաքրքրում է գերազանցապէս այն չափով, որքան որ ներկայացնում է հայկական մարտական ուժերի գործունէութիւնը։

1918 թուի սկզբին, հայկական մարտական ուժերի Բաքուում կուսակուելը, ինչպէս յայտնի է, հայերի կամքից անկախ հանգամանքների արդիւնք էր։ Ա-

digitised by A.R.A.R.@

բեմտեան ռազմաճակատից խմբերով վերադարձող հայ զինուորների առջեւ հայրենիք հասնելու ճանապարհը ուղղակի փակ էր ու Բաքուի տեղական Հայ Ազգային Խորհրդի մտահոգութիւններից մէկն էր նրանց անկազմակերպ չթողնել։ Եւ կարճ ժամանակում ստեղծուեցին հայ ազգային զօրամասեր։ Մնացականեանն այժմ հաստատում է, որ 18 թուի Փետրուար–Մարտին արդէն Բաքուի այդ զօրամասերում կային 13 հազար հայ զինեալ մարտիկներ։ Ցայտնի է, որ նոյն տարուայ Մարտի վերջին հոգեբաշ արիւնահեղ կռիւներ տեղի ունեցան Խորհրդային իշխանութեան կողմնակիցների ու նրա հակառակորդների՝ աւելի ճիշդ ադրբէջանական ազգայնականների միջեւ։ Թէեւ Հայ Ազգային Խորհուրդն ու նրա տրամադրութեան տակ գտնուող զօրամասերը չէզոքութիւն պահեցին, մնալով պաշտպանողական դիրքերում, եղան նաեւ հայկական ջոկատներ, որ կռուեցին յատուկ նպատակով բարձրացրած մուսուլմանական ուժերի դէմ։ Ցաղթանակեց խորհրդային կողմը։ Այդ օրերի դէպքերին անդրադառնալով, Մնացականեանը գրում է, թէ բոլոր դեմոկրատական ուժերի հետ միասնական ճակատ կազմելու մասին Լենինի ղեկավար ցուցումներից ելնելով՝ բոլշեւիկների Բաքուի կազմակերպութեան ղեկավարները դաշինքի մէջ մտան «ձախ էս-էրների, հնչակեանների, ձախ դաշնակցականների եւ Բաքուի Հայ Ազգային Խորհրդի ղեկավարների հետ, հայ ազգային զօրամասերը խորհրդային բանակի շարքերը ներգրաւելու համար։ Միջազգայնական (խառը) բանակի մարտական զօրութիւնը ուժեղացնելու համար։ 1918 թուի Մարտի 30–31–ի եռօրեայ կատաղի կռիւներում հայ ազգային զօրամասերը, – շարունակում է Մնացականեանը, – կարմիր-գուարդիականների, կարմիր բանակայինների եւ մարտական զօրաջոկատների կողքին, մասնակցեցին «Վայրենի զօրաբաժնի» դէմ մղուող պայքարին, պաշտպանելով յեղափոխութեան նուաճումները։ Հայ ազգային զօրամասերից քիչ զինուորներ չընկան կռիւներում, յանուն յաղթանակի՝ Թրքական գործակալների սեւ հրոսակների նկատմամբ։ Բաքում մուսուլմաններին ջախջախելուց յետոյ՝ կարմիր միջազգայնական բանակի, կարմիր գուարդիայի զօրամասերը եւ հայ ազգային զօրամասերի ջոկատները գործուն մասնակցութիւն ունեցան խորհրդային իշխանութեան յաղթանակի համար մղուող մարտերին՝ Խուրդալանում, Ղուբայում, Լենքորանում, Շամախիում, Սալեանում եւ Ադրբէջանի այլ շրջաններում»։

Մարտեան դէպքերից ու յաղթանակից յետոյ կոմունիստները, իրենց բաւական ապահով զգալով, ուզեցին ցրել Հայ Ազգային Խորհուրդն ու հայկական ինքնուրոյն զօրամասերը, բոլոր ուժերը իրենց ձեռքը հաւաքել։ Ցայտնի է, որ Հայ Ազգային Խորհուրդը չենթարկուեց այդ պահանջին, բայց համաձայնութեան եկաւ հայ զօրամասերը Ապրիլի 14–ից կարմիր զօրքերի մէջ մտցնելու պայմանների շուրջ։ Այդ ժամանակ էլ հենց զօրքը պաշտօնապէս սկսեց կոչուել «Կովկասեան Կարմիր Բանակ»։ Իսկ Ապրիլի 25–ին իշխանութիւնը վերջնականապէս անցաւ բոլշեւիկներին եւ կազմուեց ժողովրդական Կոմիսարների Խորհուրդ՝ Ստեփան Շահումեանի գլխաւորութեամբ։ «Միւս կուսակցութիւններն ու ազգային խորհուրդները, – կարդում ենք Ս. Վրացեանի «Հայաստանի Հանրապետութիւն» գրքում, – յետ մղուեցին, թէեւ, անուղղակի կերպով, Հայ Ազգ. Խորհուրդը շարունակում էր ազդեցութիւն ունենալ գործերի եւ հայկական զօրամասերի վրայ։ Առհասարակ, զօրքի կազմն ու ղեկավարութիւնը հիմնական փոփոխութեան չենթարկուեց. զինուորական գործակալ եւ ընդհանուր հրամանատար էր բոլշեւիկ Ղորղանեանը, նրա սպայակոյտի պետ՝ գնդապետ Աւետիսեանը, հայկական զօրամասերի պետ՝ Համազասպը, ճակատի հրամանատար՝ գնդապետ Ղազարեանը, բանակի մասնա-

digitised by A.R.A.R.@

կարարման մասի վարիչ՝ Մ. Տէր-Գօ-ղոսեանը, եւ այլն»։

Մնացականեանը տեղեակ է, թէ կարմիր բանակի մէջ ինչ կշիռ ունէին հայկական զօրամասերը, քանի որ ժամանակին Շահումեանն ինքն է Լենինին հաղորդել, որ «մեր զօրքերի գլխաւոր քանակակազմը հայկական զօրամասերն են» եւ որ նրանք «քաջաբար են կռուել»։ Գիտէ նաեւ, թէ ում ղեկավարութեամբ են գործել այդ զօրամասերը։ Իր նպատակն է մոռացութեան փոսից հանել ու որեւէ ձեւով վարկաբեկել հայ զօրամասերին։ Բայց քանի որ կովկասեան կարմիր բանակի պատմութիւնը մինչեւ հիմա աչքաթող է արուել հենց ճիշդ նրա հայկական կազմի ու հայկական ղեկավարութեան պատճառով եւ նրա հացէին զանազան ինքնատիպ «քննադատութիւններ» են եղել գրականութեան մէջ, Մնացականեանը հնարաւոր է համարում այսպիսի կազացող բացատրութիւններ տալ. «Բաքուի հայկական զօրամասերում կային մօտ 13 հազար մարտիկներ ու հրամանատարներ։ Նրանց շարքում կային եւ դաշնակցական սպաներ, որոնցից ոմանք երբեմն իրենց լաւ չէին պահում։ Սակայն սխալ կը լինէր հայ կամաւոր զինուորի ամբողջ զանգուածը նոյնացնել դաշնակցականների հետ եւ նրանց նշանակել դաշնակցական առանձին պարագլուխների անվայել արարքների համար»։ Ժամանակին, անշուշտ, այդպիսի արմատական տարբերութիւն ու հակադրութիւն չի եղել յիշեալ պարագլուխների ու զանգուածի միջեւ, բայց այսօր սահմանազատումը պարտադիր է համարւում, ոմանց չանթարգելի տեղ դնելու դնով գէթ որոշ բան փրկելու ճանապարհին։ Ցամենայնդէպս, ինչ էլ որ լինի, դա լրիւ ճշմարտութիւնը պարզելու վստահելի եղանակ չէ։

Մնացականեանն այնուհետեւ տեղեկութիւններ է տալիս վերակազմուած «Կովկասեան կարմիր բանակի» կառուցւածքի ու կազմի մասին։ Ներկայացուած է բանակի Ռազմա-Յեղափոխական Կոմիտէին առընթեր մարմինների տախտակը, – սպայակոյտ, յանձնաժողովներ եւ բաժիններ ու ենթաբաժիններ։ Եւ ահա պարզւում է մի տպաւորիչ ու բաւական ոլորտաստվոր պատկեր։ Զհաշուած ռազմա-ծովային գործերի ժողկոմի, բանակի ռազմայեղափոխական կոմիտէի նախագահի եւ գլխաւոր հրամանատարի պաշտօնները համատեղօրէն վարող բոլշեւիկ Գրիգոր Ղորղանեանին, – որը յայտնի է ռուսականացուած Կորգանով անունով, – 22 մասի բաժանուած տախտակի գրեթէ բոլոր բաժինները, անչափ բացառութեամբ, ծածկուած են հայկական անուններով։ Նոյն պատկերն է պարզւում եւ բուն մարտական ու յատուկ զօրամասերի հրամանատարական կազմը աչքի անցկացնելիս։ Մնացականեանի բերած առեալներից երեւում է, որ, ըստ մի պաշտօնական տեղեկագրի, 18 թուի Մայիսի 22-ին կարմիր բանակի մէջ արդէն կային «19 կարմիր հրաձգային դիմարտակներ, որտեղ ծառայում էին մօտ 20 հազար կամաւոր-զինուորներ. արխիւային փաստաթղթերից ու պաշտօնական հաշուետուութիւններից երեւում է, որ զինուորների 75–80 տոկոսը հայեր էին։ Դա նշանակում է, որ հրաձգային դիմարտակների 20 հազար զինուորներից հայ ժողովրդի զաւակները կազմում էին 15–16 հազար մարդ, այսինքն կովկասեան կարմիր բանակի հիմնական մասը։ Հետագայում դիմարտակների թիւը հասաւ 26-ի, համապատասխանաբար էլ աւելացաւ անձնակազմը, որի ճշդումը դեռ չարունակւում է»։ Այս թուերը ցոյց են տալիս, թէ իրականում ինչ էր ներկայացնում իրենից կովկասեան կարմիր բանակը, որքան մեծ էր հայերի քանակական ու կազմակերպական դերը եւ ինչ ծանրակշիռ հիմքեր կան այդ բանակի կոտարած գործերը հայկական հերոսամարտերի մասեան մտցնելու համար։

Բանակի մէջ, հայերից բացի, երկրորդ տեղն էին բռնում ռուսները։ Իսկ վրացիներն ու մանաւանդ ազրբէջանցիները ուղղակի աննշան էին։ Մնացականեանն այդ երեւոյթը բացատրում է Սահ-

digitised by A.R.A.R.@

վան Շահումեանի աւագ որդու՝ Սուրէն Շահումեանի քառերով։ Շահումեանը իր ժամանակ դա բացատրում էր Թուրք (ադրբէջանական) բանուորութեան քաղաքական անբաւարար հասունութեամբ, զինուորական անպատրաստութեամբ եւ նրանով, որ Բաքուի վրայ յարձակուողները «Թուրքեր էին՝ կովկասեան մուսուլմանների հաւատակիցները»։ Այսպէս թէ այնպէս, հայկական զօրամասերի ուսերին էր ծանրացած մարտական գործողութիւնների մեծագոյն բեռը։ Վերջ ի վերջոյ, ինչպէս յայտնի է, Բաքուի կոմունան պարտուեց, Թուրքերը Սեպտեմբերին մտան Բաքու։ Վերստին եղան Թրքավարի կոտորածներ ու կողոպուտներ։ Եւ այլն։

Բաքուի կոմունայի ժամանակաշրջանի մասին յօդուածներ են գրել ու գրում ո՛չ միայն հայերը, այլեւ օտարները, մանաւանդ անդրկովկասեան մուս ազգերին պատկանող հեղինակները։ Իւրաքանչիւրը դէպքերին նայում է իր տեսանկիւնից եւ ուստի ստացում են վերջին հաշուով արտաւոց հակասութիւններ։ Մնացականեանը իր յօդուածում անդրադառնում է այդպիսի մի ենթատիպ ելոյթի։ Յօդուածի այդ մասը թարգմանում ենք ամբողջութեամբ, որպէսզի հեղինակը երեւայ իր իսկ բառերի միջից։

«Կովկասեան կարմիր բանակի պատմութեան մէջ նոր փուլ սկսուեց 1918 թուի Յունիսին, – գրում է Մնացականեանը, – երբ Թրքական հրամանատարութիւնը, Գեանջայում ստեղծուած մուսուլմանական զօրախմբի ղեկավարների հետ, կենտրոնացրեց իր գլխաւոր ուժերը եւ սկսեց յարձակում պատրաստել Բաքուի դէմ։ Որոշ պատմաբաններ գտնում են, թէ Բաքուի ճակատի կացութիւնը վատացաւ հայկական ազգային զօրամասերի ու Անդրանիկի մեղքով։ Այսպէս, օրինակ, Ադրբէջանական ՍՍՀ-ի Գիտութիւնների ակադեմիայի ակադեմիկոս Ի. Ա. Հուսէյնովը իր «Պատմութեան հերոսական էջեր» յօդուածում, նկարագրելով խորհրդային զօրքերի վիճակը 1918 թուի Մայիս-Յունիսին, գրում է, թէ «հայ չետնիկ (պարտիզան) Անդրանիկը իր հրոսակախմբով զբաղեցնում էր յեղափոխական ուժերը Ղարաբաղում, սպառնալով Բաքուի կարմիր բանակի թիկունքին։ Այդ ամէնը մաչեցնում էր Ադրբէջանի յեղափոխական ուժերը»։ Այնուհետեւ հեղինակը գրում է ադրբէջանական ճակատի կազմալուծման, կարմիր բանակի թիկունքում՝ ադրբէջանական գիւղերում ազգային զօրամասերի արած «սանձարձակութիւնների» մասին։ Նա դաշնակցական առանձին պարագլուխներին չփոթում է հայ զինուորական զանգուածների հետ, դաշնակցականներին չփոթում է հայ բանուորների ու տասնեակ հազարաւոր յեղափոխական մարտիկների հետ, որոնք ձեռք-ձեռքի տուած ռուս, վրացի, ադրբէջանցի հայրենասէրների հետ, մարտ էին նետուում, պաշտպանում Բաքուի կոմունան, չնայելով իրենց ուժերը, արիւնն ու կեանքը՝ պայքարում էին Թուրքական հորդաների ու նրանց գործակալ մուսաւաթականների դէմ։ 1918 թուի Մայիսի վերջին Գեանջա հասան Թուրք զօրավարներ Նուրի-փաշան, Նազիմ-փաշան, Մուրսալ-փաշան եւ ուրիշները, ապա հասան Թրքական կանոնաւոր զօրաջոկերներ։ Բուն Գեանջայում կազմուեց մուսուլմանական զօրախումբ, որի գլուխ էին կանգնած ոչ անյայտ զօրավար-լէյտենանտ Ալի-աղան, զօրավար-մայոր Ֆէյզի Միրզա Կաջարը, զնդապետներ Մամեդովը, Սուլէյմանովը, Իշխան Մաղալովը, ենթազնդապետ Կոչիկիձէն եւ սպիտակ-գուարդիական Մելլուկովը։ Ի. Ա. Հուսէյնովը պէտք է որ աչքի անցկացնէր Նուրի-փաշայի «Իսլամի բանակի» սպայակոյտի եւ մուսուլմանական զօրախմբի հրամանատար Ալի-աղայի հրամանները, ուսումնասիրէր ամբողջ Անդրկովկասում, մանաւանդ Բաքուում եւ Ադրբէջանի գաւառներում գտնուած Թրքական գործակալների ցանկերն ու գործունէութիւնը, ծանօթանար այդ զօրավարների՝ Բաքուի եւ խորհրդ-

digitised by A.R.A.R.@

դային այլ լրջանների բնակչութեանն ուղղած յայտարարութիւններին, թուցիկներին ու կոչերին, ուստիներիր Կովկասեան Կարմիր Բանակի զօրամասերի սպայակոյտերի տեղեկագրերը։ Այն ժամանակ պարզ կը դառնար, թէ ով էր պաշտպանում Բաքուի կոմունան, իսկ ով՝ «ագրմալուծում ադրբէջանական ճակատը»։ Անդրանիկը չէր կարող սպառնալ Բաքուի Կարմիր բանակի Թիկունքին, թէկուզ հենց այն պատճառով, որ նա երբէք չի եղել Բաքուի բանակի Թիկունքում, այլ գործել է Նախիջեւանի շրջանում եւ այդ շրջանը յայտարարել Խորհրդային Ռուսաստանի անբաժանելի մաս, նամակով դիմել է Բաքուի կոմունայի ղեկավարներին ու նրանց միջոցով Լենինին, առաջարկելով իր պատրաստակամութիւնը՝ կատարելու խորհրդային իշխանութեան առաջադրանքները, հարաւային Կովկասի մատոյցները պաշտպանել Թրքական հրոսակախմբերի ներխուժումից։ Կովկասեան Կարմիր բանակը երեք ամիս՝ Մայիս-Յունիս-Յուլիսին, անընդհատ կռիւներ էր մղում Թրքական կանոնաւոր զօրքերի եւ մուսուլմանական զօրախմբի դէմ, որոնք մեծ օգնութիւն էին ստանում դեմանական բանակից եւ վրացական մենշեւիկեան բանակից։ Հակառակորդը լուրջ գերակշռութիւն ունէր՝ մարդկանցով, թնդանօթներով, գնդացիրներով, տեխնիկայով»։

Մնացականեանի յօդուածի այս հատուածը կարդալիս դժուար չէ նկատել, որ որոշ միջանկեալ կէտերի ուրթիւ տեղին կը լինէր պատշաճ առարկութիւններ անել։ Բայց տուեալ դէպքում կարեւորը դա չէ, այլ ուրիշ բան։ Ինչպէս տեսնում ենք, ադրբէջանցի ակադեմիկոս Հուսէյնովը Բաքուի կոմունայի պարտութեան մեղքն անգամ ուզում է բարդել հայերի վրայ, երբ այդ կոմունան իրականում, մենք արձանագրում ենք միայն մերկ փաստը, խորտակեցին հենց թուրքերն ու ադրբէջանցիները։ Բնաւ զարմանալի չէր լինի, անշուշտ, եթէ մեծ ու փոքր հուսէյնովները ներքուստ անբարեացակամ գտնուին հայերի հանդէպ եւ ամէն կերպ ջանային նաեւ հրապարակօրէն արտայայտել այդ չարչարող զգացումը։ Դրա համար նրանք ըստ երեւոյթին անյաղթահարելի պատճառներ ունեն։ Բայց տուեալ դէպքում ինքնատիպն ու յատկանշականն ա՛յն է, թէ անբարեացակամութիւնը կարող է նոյնիսկ ակադեմիկոսներին այնքան կուրացնել, որ նրանք առանց աչք թարթելու հանդէս գան այդպիսի բացայայտօրէն անհիմն եզրյթով։ Անդրկովկասի քարտէզին նայող ամէն ոք կարող է յստակօրէն որոշել, թէ որտեղ էր գտնւում Բաքուն իր բանակով, իսկ որտեղ՝ Ղարաբաղն ու Նախիջեւանը Անդրանիկի ջոկատով։ Այդ դէպքում ինչպէ՞ս կարող էր Անդրանիկն սպառնալ հեռաւոր Բաքուի բանակի Թիկունքին։ Դեռ մի կողմ թողած այն ժամանակուայ ուժերի քաղաքական կողմնորոշման ծանօթ պարադան, երբ Բաքուում հայերը պաշտպանում էին նաեւ կոմունան, իսկ Նախիջեւանում Անդրանիկը իբեն դնում էր Ռուսաստանի խորհրդային իշխանութեան տրամադրութեան տակ։ Ահա թէ ինչպէս է պատմութիւն հրամցւում եւ ամէն ինչ գլխովին շրջւում, պարզապէս հայերին մի անգամ ե՛ւս զրպարտելու համար։ Ահա թէ ինչպիսի՛ անաչառ ակադեմիկոսներ կան աշխարհում։

Ար. Մնացականեանի յօդուածում, «Կովկասեան Կարմիր Բանակի» 1918 թուի գործունէութեան կապակցութեամբ, չատ ու չատ մանրամասնութիւններ են ներկայացւում։ Այդ մանրամասնութիւնները իսկապէս պերճախօս են եւ թելադրական։ Բայց մեր ուշադրութիւնը գրաւեց յատկապէս ա՛յն, որ Մնացականեանը հիմնականում փաստերի լեզուով է խօսում, որքան էլ այդ փաստերը առայժմ թերի լինեն։ Իսկ փաստերը լուսաբանում են, որ «Կովկասեան Կարմիր բանակը» 18 թուին պարզապէս հայկական բանակ էր՝ իր կազմով, հրամանատարութեամբ եւ մարտական տրամադրութեամբ։ Այդ բանակը ամիսներ չարունակ, այնքան

digitised by A.R.A.R.@

դժուարին պայմաններում, քաջաբար մարտնչեց մեր ժողովրդի երդուեալ թշնամիների դէմ, բայց վերջ ի վերջոյ նօսրացաւ ու ստիպուած եղաւ տեղի տալ՝ ուժերի բացարձակ անհաւասարութեան պայմաններում։ Այնուամենայնիւ, պատմութեանը կտակուեց «Բաքուի հերոսամարտի» փաստը, որի հետքերով այսօր Հայաստանի պատմաբանները ջանում են վերականգնել երբեմնի իրականութեան առաւել կամ պակաս հաւաստի պատկերը։

Բաքուի հերոսամարտի մասնակից հայերը առաջին հերթին, անշուշտ, այն համոզումն ունէին, որ իրենք մարտնչում են Հայաստանի, հայ ժողովրդի ու նրա կենսական շահերի համար։ Բայց միաժամանակ, նրանք ուժերի դերադոյն լարուածութեամբ պաշտպանում էին նաեւ մոսկովեան խորհրդային իշխանութեան մարտական դիրքերը Կովկասում։ Այդ էր պատմական իրողութիւնը, անկախ այն բանից, թէ այսօր ով ինչ է մտածում նրանց գործունէութեան մասին։ Ուրեմն, հերոսամարտի բարոյական ժառանգութեան մեծ բաժինը պատկանում է հայութեանը, եւ միանգամայն տրամաբանական է, որ առաջին հերթին հենց հայ մտաւորականութիւնն զբաղուի նրա պատմութեան ուսումնասիրութեամբ, վերականգնի փաստական ճշմարտութիւնը եւ տէր կանգնի մայր ժողովրդի տարեգրութեան մէջ մտած հերոսական գործերի դէմ յիշատակին։ Իսկ քանի որ այդ հերոսամարտը փաստօրէն մղւում էր եւ Ռուսաստանի շահերի համար, ապա բնական կը լինէր, որ այսօրուայ Ռուսաստանն էլ ըստ արժանւոյն գնահատէր հայերի զոհողութիւնները ու յարգէր նահատակների յիշատակը, այլ ոչ թէ քմծին գրականութիւն ստեղծել ասոր։ Բայց, ինչպէս յայտնի է, այդ Ռուսաստանը զոհաբերեց հենց հայկական շահերը եւ հովանաւոր դարձաւ նրանց, ովքեր 18 թուին ջարդել են ռուսներին ու մնացել թշնամի։ Ահա մի իւրայատուկ վարքագիծ, որը այնպիսի հետեւողականութեամբ դրսեւորուեց Ռուսաստանի պետերի երէկուայ ու այսօրուայ քաղաքականութեան մէջ։ Դա այդպէս է։ Անկախ այդ ամէնից, այսօրուայ ու վաղուայ հայերը, սակայն, թերեւս սփոփանք կարող են ունենալ, որ 1918 թուի գարնանն ու ամրանը հայկական զօրամասերը բաքուում իրենց հերթին զուր չկռուեցին, անտեղի չէ որ հերոսամարտ կերտեցին, քանի որ դրանով մի առ ժամանակ պաշտպանեցին հայ զանգուածներին, ամիսներով զբաղեցրին թշնամի ուժերին, որպէսզի նրանք չկարողանան ամբողջ թափով ընկնել նորաստեղծ Հայաստանի Հանրապետութեան վրայ ու վերջնականապէս խորտակել։ Դրանով էլ ըստ էութեան արդարացրել են այն հետաքրքրութիւնը, որն այսօր ցոյց են տալիս Հայաստանի պատմաբանները երբեմնի հերոսամարտներից մէկի պատմութեան նկատմամբ։

Լ. Մ.

digitised by A.R.A.R.@

ԱՐՏԱՇԵՍ ՕՐԱԳԵԱՆ

ԷՋՄԻԱԾՆԱՅ ՄԱՅՐ ՏԱՃԱՐԸ

Էջմիածնայ Մայր Տաճարը, – *էջմիածինը բացայայտ կերպով հայկական ճարտարապետութեան զարգացման պանազան փուլերու կենդանի մէկ պատկերը կը ներկայացնէ։ Ըստ Ագաթանգեղոսի* (Ե. դար) *անիկա կանգնուած է քրիստոնէական կրօնի պետական հռչակուելուն առաջին տարիներուն։*

Ներսէս (353–373) *եւ Սահակ* (389–439) *կաթողիկոսներուն օրով, երկու անգամ կը վերանորոգուի։ Ըստ Ղազար Փարպեցիի, Վահան Մամիկոնեան Ե. դարուն, հիմէն կը նորոգէ տաճարը։ Թէ իսկապէս էջմիածինը իր սկզբնական շրջանէն եւ Ե. դարու վերաշինութենէն ետք ինչ ձեւ ունեցած է եւ այսօրուան գոյութիւն ունեցող շէնքը ո՞ր դարու կը պատկանի՝ երկար վէճերու տեղի տուած է։ Հայկական Ս. Ս. Հ. Դիտութիւններու Ակադեմիայի Արուեստի Ինստիտուտի* 1955–1956*-ին եւ* 1959*-ին ձեռնարկած պեղումներուն շնորհիւ է, որ այսօր վերջնականապէս լուծուած է վէճը եւ յանգած սա վերջնական եզրակացութեան.*

Էջմիածնայ Մայր Տաճարի այժմեան խաչաձեւ կառուցուածքը, թէ՛ դուրսէն եւ թէ ներսէն ոչ թէ ստեղծուած է Ներսէս Գ. կաթողիկոսի ժամանակ, Ե. դարու կիսուն, այլ անկէ երկու դար առաջ, Վահան Մամիկոնեանի օրով՝ 480 թուականներուն։ «Հետեւաբար դեռեւս Ե. դարուն, Հայաստանի մէջ արդէն իսկ ստեղծուել էր խաչաձեւ կեդրոնագմբէթ կառուցուածքի աւարտման կերպարը», *կը գրէ Սահինեան։*

Սահինեան, եռանաւ պազիլիքներու կազմաւորման ընթացքը ցոյց տուած է մասնաւոր տախտակով մը (էջ՝ 123)։ *Բայց դժբախտաբար գրեթէ ոչ մէկ անուն կարելի է կարդալ։ Երբ հորիզոնական*

digitised by A.R.A.R.@

դծերու վրայ կը զետեղէ տեղանունները, կը խորհիմ թէ ուղղա-հայեցն ալ պէտք էր դարաշրջանները ցոյց տային, ինչ որ անհասկնալի կերպով զանց առնուած է։

Օձունի կոթողի քանդակները – չափագրութիւն եւ դծագրութիւն Յակոբեանի – աւելի լաւ պիտի ըլլար, եթէ աւելի մեծ չափերով ներկայացուէին։ Այնպէս ինչպէս ներկայացուած է (էջ՝ 93) սովորական մատիտի մը տպաւորութիւնը կու տայ եւ զրեթէ անհասկնալի է։ Ուրիշ նկատելի կէտեր եւս կան։ Եղվարդի յատակագիծը (էջ՝ 99, դծագրութիւն՝ թիւ 3) շատ պարզունակ միտանաւ պագիլիք մըն է, իսկ էջ 102–ի դծագրութիւնը (թիւ՝ 3) դարձեա՛լ Եղվարդ, բայց այս անգամ սինազարդ ներքնամասով բոլորովին տարբեր Տաճար մըն է։ Ո՞րն է բուն Եղվարդը, ի՞նչ կը ներկայացնէ հապա առաջինը։ Եթէ բացատրողական մէկ քանի տող ըլլար, անկասկած սովորական ընթերցողը բաներ մը հասկնար։

Բայց, դժբախտաբա՛ր, Եղվարդի մասին ո՛չ մէկ արձանագրութիւն հասած է մեզի։ Ինչո՞ւ, մոռցուա՞ծ է։ Դիրաքլար, (էջ՝ 99, դծագրութիւն՝ թիւ 5) դարձեա՛լ, ո՛չ մէկ նկարագրութիւն, ոչ մէկ խօսք։ Հապա՞ Դուինի փառաւոր հկեղեցին (էջ՝ 107, դծագրութիւն՝ թիւ 1)։ Հեղինակը երկար էջեր նուիրած է կաթողիկոսարանին, բայց ոչ մէկ խօսք Տաճարին մասին։ Բոլորովին անհասկընալի։ Կարեւոր ուրիշ կէտ մը։ Շատ անգամ նկարագրուած տաճարներու չափագրութիւնները մոռցուած են, օրինակ Տեկորը, Էջմիածինը եւ շատ ուրիշներ։

Սահինեան կը յամառի դարերու թիւը լատին տառերով ներկայացնել, ի՞նչ մեղք ունին հայերէնները։

Ճարտարապետութեան լեզուն դիծն է։ Եթէ ուզենք անպայման առանց գծի, այսինքն առանց դծագրութեան արտայայտուիլ՝ անիկա պակասաւոր եւ անհասկնալի կ'ըլլայ։ Օրինակի համար, երբ Էջմիածնայ պեղումներու մասին կը խօսի, առանց երկրաչափական, բացատրական դծագրութիւններու անկարելի է ըմբռնել, թէ իւրաքանչիւր մոյթի տակ քանի՞ խարխսի պտնուած է, միմիայն երկո՞ւ թէ գոյութիւն ունեցող մոյթի խարխսով՝ երեք։

Ե. դարուն հայերը չորս անչատ սիւներու վրայ զմբէթ բարձրացուցած են։ Հայերը Գ. եւ Դ. դարերու ընթացքին, շէշտուած կերպով, պայտաձեւ կամարներ գործածած են։ Ինչո՞ւ միաժամանակ չըսել որ այդ ժամանակաշրջանի Արեւելքի եւ Արեւմուտքի մնացեալ մասերու մէջ պայտաձեւի մասին ո՛չ մէկ դաղափար ունէին։ Նամանաւանդ գոռոզ Բիւզանդիոնը։ Հայ ընթերցողը կը սիրէ բացայայտ եւ յատակ հաստատումներ։ Հայաստանի մէջ, դարերու խորերէն արմատ նետած է ինքնայատուկ ճարտարապետական արուեստ մը, որ իբր օրինակ եւ ուսուցիչ ծառայած է իր հարեւաններուն եւ ոչ հարեւաններուն, ու իր ազդեցութիւնը տարածած է մինչեւ հիւսիսային հեռաւոր երկիրները։

Ուրիշ կարեւոր կէտ մը եւս։ Սահինեան, շատ գեղեցիկ, նորակերտ բառերով եւ ասացուածքներով հայ ճարտարապետութեան յատուկ գրական մասնաւոր լեզու մը ստեղծելով հանդերձ, տեղ–տեղ կը խրի օտաբարանութիւններու մէջ։

digitised by A.R.A.R.@

ԳԼՈՒԽ Դ.

«ՀԱՅԿԱԿԱՆ ՃԱՐՏԱՐԱՊԵՏՈՒԹԻՒՆԸ Զ. ԴԱՐԻ ԵՐԿՐՈՐԴ ԿԷՍԻՑ ՄԻՆՉԵՒ Է. ԴԱՐԻ ՎԵՐՋԸ»

Հեղինակ՝ Ս. Խ. Մնացականեան

451-ի Քաղկեդոնի եկեղեցական սիեզերական ժողովին հայերը չկրցան պաշտօնապէս մասնակցիլ, որովհետեւ, ներխուժող պարսկական զերազանց ուժերու դէմ մահու կենաց պատերազմի մը կը պատրաստուէին։ Իսկապէս Ե. դարը կարծես ճակատագրական թուական մը եղաւ հայոց համար։ Քաղկեդոնի մէջ որոշուեցաւ Քրիստոսի երկու բնութեան հարցը, ինչ որ հայ ժողովուրդը մերժելով մերժեց եւ ուրիշ արեւելեան ժողովուրդներու հետ, մընաց միաբնակ, որ ինքնին Բիւզանդիոնի հանդէպ տեսակ մը քշնամական դիրք բռնել կը նշանակէր։ Ասորայրի պատերազմով Պարսկաստան կ'ուզէր ամէն գնով Հայաստանը բաժնել Բիւզանդիոնէն, հոն հաստատելով դրաւչական կրօնը, սակայն տեսնելով որ հայ ժողովուրդը Քաղկեդոնի ժողովէն եաք բոլորովին բաժնուած է բիւզանդական եկեղեցիէն, հետեւաբար նաեւ ժողովուրդէն, կը փոխէ իր յարձակողական քաղաքականութիւնը։ Ապա ուրեմն Զ. դարէն սկսեալ, յարաբերաբար խաղաղ մթնոլորտի մէջ՝ հայ ժողովուրդը կը սկսի թափ տալ, բոլորովին ազգային դծով ինքնուրոյն եկեղեցական աշխատանքի, ինչ որ սակայն երկար չի տեւեր։ Է. դարուն կը սկսի արաբական արշաւանքը։ 641-ին կը գրաւեն Հայաստանը։ Մայրաքաղաքը Դուին՝ հրոյ եւ սրոյ կ'ենթարկեն, պարսկական հսկայ կայսրութիւնը բոլորովին կը կործանին եւ ժողովուրդը բռնի կ'ընդունի իսլամութիւնը։ Բիւզանդացիք փոխանակ հայոց օգնելու, ընդհակառակն, երբեք չեն դադրիր իրենց սոսր մեքենայութիւններով, դժուարին կացութեան մատնել ժողովուրդը։ Իշխան Թէոդորոս Ռշտունի, քաջաբար կռուելով արաբական բանակներու դէմ՝ կը յաջողի նպաստաւոր զաշնագիր մը կնքել անոնց հետ, եւ սակայն Բիւզանդիոն, իր կայսեր Կոնստանդինի առաջնորդութեամբ կը խուժէ Հայաստան, կը գրաւէ Դուինը եւ կը ստիպէ Ներսէս Կաթողիկոսը, որ իր նորաշէն եկեղեցւոյ՝ Զուարթնոցի մէջ յունական ծէսով պատարագ մատուցանէ։ Թէոդորոս Ռշտունի, բոլորովին զզուած բիւզանդացիներու այս վերաբերմունքէն, կը նախընտրէ արաբական գերիշխանութիւնը, որ բոլորովին չէր զրկեր հայ ժողովուրդը իր ներքին ազատութիւններէն, նամանաւանդ կրօնական դետնի վրայ։ Երկրորդ խաղաղ շրջան մը կը սկսի Հայաստանի մէջ։ Երկիրը կը սկսի բարգաւաճել, ժողովուրդի նիւթական վիճակը յարաբերաբար կը լաւանայ եւ կը սկսի շքեղ տաճարներու շինութեան։ Եւ շնորհիւ նախորդ շրջանի հարուստ աւանդութեան, ծնունդ կ'առնէ զմրէթաւոր ճարտարապետութեան փայլուն վերելքը, որ իր ծաւալով, կ'ըսէ Մնացականեան, «հաւասարը չունէր ոչ մի այլ երկրում»։

Ե. դարուն տակաւին Հայաստանի մայրաքաղաքը Դուինն էր, որ ըստ արաբ պատմագիրներու՝ հիացմունքի արժանի, մեծ եւ վաճառաշահ քաղաք մըն էր։ Հոն կային հրաշալի իշխանական պալատներ եւ զանազան ոչ-կրօնական վայելուչ շինութիւններ։ Մնա-

digitised by A.R.A.R.@

ցականեան կ'ըսէ, որ դարաւոր այս պալատները եւ Սառանեան Գարսկաստանի պալատները, որոշ ընդհանուր դիծեր կը ներկայացնէին, արդիւնք՝ հայ-պարսկական դարաւոր կապերուն, եւ սակայն, կ'ելրակացնէ ան, «Հայկական կառուցուածքները հարիւրաւոր թելերով կապուած են տեղական աւանդութիւններու հետ, ըստ էութեան հայկական ժողովրդական բնակարանային ճարտարապետութեան ձեւերն են, որ իրենց որոշակի կնիքն են դրած քաղաքացիական հսկայ կառուցուածքներու վրայ եւ վերջին հաշուով ելակէտ հանդիսացած պալատական այդ հոյակապ կառուցուածքներու մշակման»։

❧

Ինչպէս ուրիշ առիթով մը ակնարկեցինք, ճարտարապետութեան լեզուն գիծն է, որ կրնայ ըլլալ ուղիղ, կոր, բլորակ, կէտադրութիւն եւայլն, այնպէս՝ ինչպէս երաժշտութիւնը կ'արտայայտուի իւրայատուկ նօթագրութեամբ, բանաստեղծութիւնը տառերով, իսկ նկարչութիւնը գիծերով եւ գոյներով։ Կարելի չէ այս բոլորը զանց առնել եւ ամէն ինչ տառերով արտայայտել։ Մնացականեան երկարօրէն կը խօսի ճարտարապետական զանազան մասերու շուրջ – թրոմբ, գմբէթարդ, յենախորշ, հովահարաձեւ։ Առանց մէկ գծադրութիւն իսկ տալու, հոս կարելի է միշտ ասարկել, թէ սա հայկական ճարտարապետութեան ակնարկ մըն է սոսկ, որով՝ եթէ յատուկան գծագրութիւններու ակռինք, գործը շատ հեռուները կ'երթայ։ Բայց չէ՞ որ ամէն ինչ սահման մը ունի։ Մինչ՞ կարելի է բոլոր յուշարձանները միմիայն գրաւոր բացատրութիւններով ներկայացնել, առանց յատակագծի, ա՛յն պատրուակով՝ որ մեր ըսածը պարզ ակնարկ մըն է։ Այսուհանդերձ, Մնացականեան իր յիշած գրեթէ բոլոր եկեղեցիներու յատակագիծերը, զատ-զատ կը ներկայացնէ, որպէսզի հասկնալի ըլլայ։

Մնացականեան, մասնաւոր կերպով կը խօսի հայկական ճարտարապետութեան ա՛յն աչքառու յատկանիշներու մասին, որոնք պարծանքը կը կազմեն հայ ճարտարապետի բացառիկ տաղանդին։ Հայ ճարտարապետը տեւապէս աչքի առաջ ունենալով ժողովրդական աւուներու հարիւրաւոր տարիներու աւանդութիւնը եղող գմբէթային փայտէ կառուցուածքները՝ անվարան ներմուծած է նորամուտ կրօնի կառուցուածքներու մէջ, գլխաւորաբար քառակուսի հիմերու վրայ կանգնած գմբէթի յարդարումը եւ անոր հիման վրայ մշակուած բազմապիսի լուծումները, օրինակ՝ Ծեկորը, քառաչէն գմբէթով, որ նախատիպարը կը համարուի հետագայ չինութիւններուն։

Սակայն, աւանդական փայտէ գմբէթը քարէ գմբէթով փոխարինելու պարագան, կառուցողական շատ կարեւոր նոր խնդիր մը կը յարուցանէր։ Գմբէթին դէպի դուրս հրող ուժերու չեզոքացումի հարցը։ Հոս ալ հայ ճարտարապետը հեշտօրէն կը գտնէ գեղեցիկ լուծում մը։ Յենախորշերու միջոցը, որ վերջ ի վերջոյ

digitised by A.R.A.R.@

նոքութիւն մը չէր, անոնք Դ. եւ Զ. դարերուն գործածուած սապիտներն էին, որոնք այս անգամ գմբէթարդներով ծածկելով ուղղակի իբր յենակ ծառայեցին կեդրոնական գմբէթի կեդրոնախոյս ուժերուն, որ միաժամանակ եղաւ հայկական գմբէթաւոր ճարտարապետութեան հիմնական տարրերէն մին։ Կարեւոր հարց մը եւս կը մնար լուծելիք։ Ինչպէ՞ս կարելի էր քառակուսիէն, բոլորակ գմբէթին կամ թմբուկին անցնել։ Հոս ալ, դարձեա՛լ, հայկական աւանդական փայտաշէն հազարաշէն ծածկոցները օգնութեան կը հասնին, հայ ճարտարապետին trompe–ը, կ'ըսէ Մնացականեան, հովահարաձեւ կ'ըլլայ, մինչդեռ բիւզանդական–սիրիական «trompe d'angle»երը գմբէթարդներով ծածկուած խոշոր են։

Չեմ գիտեր, թէ համեստ մտաւորականը, արուեստի սիրահար ոչ–մասնագէտ մարդ մը ինչպէ՞ս կրնայ ըմբռնել վերի բացատրութիւնը, առանց գծագրութեան, բայց այս այսպէս է «Ակնարկին» մէջ։ Ուրիշ կէտ մը եւս։ Ըսինք՝ որ Տեկոր հայկական քարէ գմբէթի նախատիպարներէն էր։ Այդ պարագային ինչպէ՞ս բացատրել, որ Տեկորի trompe–ը հովահարաձեւ ըլլալէ շատ հեռու եւ արդէն պայտաձեւ գմբէթներու պարագային ալ գոյութիւն առնող trompe–ը երբեք կարելի չէր որ հովահարաձեւ ըլլար։ Այն ուրիշ հարց է, թէ շուտով հայ ճարտարապետը կը յօրինէ հովահարաձեւը։ Մնացականեան, հոս, իբր օրինակ կը բերէ Ս. դարու Աշտարակի Կարմրաւորը, որ գրեթէ անաղարտ պահուած է մինչեւ այսօր, իր կղմինտրեայ կարմիր ծածկով, որուն նկարը տրուած է (էջ՝ 42) եւ սակայն, ամենակարեւորը՝ յատակագիծը մոռցուած է։ Ս.–է. դարերէն ուրիշ շատ գեղեցիկ օրինակներ չեն պակսիր։ Մաստարա, Հառիճ, Ոսկեվարք, Արթիկ, Աւան եւ Հռիփսիմէ, որոնց չափագրութիւնները դարձեալ զանց առնուած կամ մոռցուած են։ Այս շրջանի յուշարձաններուն մէջ մասնաւոր կերպով, իր կառուցողական վարպետութեամբ, աչքառու է Հռիփսիմէն։ Ըստ Մնացականեանի անիկա կառուցուած է 618–ին, Կոմիտաս կաթողիկոսի կողմէ։ Մինչդեռ պատմութիւնը ուրիշ բան կ'աւանդէ մեզի։ Կոմիտաս ոչ թէ ինք չինած է Հռիփսիմէն, այլ ըստ Սէբէոսի «Կոմիտաս կաթողիկոս վերցուց կաթողիկէի փայտայարկը յամին 618, ամրացուց պատերը, որոնք եկած էին եւ ուզի ամուր շինեց, որպէսզի տակաւ, քանի քարէ գմբէթի ծանրութեան»։ Յովհաննէս կաթողիկոս նոյնը կը վկայէ. «Գմբէթը քարէ շինեց լաւ կերպով եւ չքնաղ գեղեցկութեամբ»։

Մնացականեան, բոլոր յուշարձաններու պատմականը մանրամասնօրէն կու տայ եւ սակայն Հռիփսիմէի պարագային շատ ժլատ կը դտնուի, ինչ որ անհասկնալի է, անոր կարեւորութիւնը ունեցող կառուցուածքի մը համար։ Իրաւ է, որ անիկա երկար ժամանակ զանազան հակասական կարծիքներու տեղի կու տայ։ Նոյնիսկ պնդողներ եղած են, որ գմբէթը հետագայի գործ է, սակայն, 1959–ին, ճարտարապետ Ց. Յակոբեանի ղեկավարութեամբ եղած ծեփերու մաքրագործման ժամանակ բացայայտ կերպով յայտնի կ'ըլլայ որ անիկա իսկապէս Ի. դարու գործ է։

Տակաւին կան զանազան ուրիշ կէտեր եւ հարցեր, զորս Մը-

digitised by A.R.A.R.@

նացականեան նկատի չէ առած։ Ցօսքս տաճարի պատերուն մեծամեծաւալ միակտոր եւ անմաչելի խարիսխներու մասին է, որ չատ մը այցելու զիտնականներու ուշադրութիւնը դրաւած է։ Եւ եթէ Ա-զաթանգեղոսի ուանդուիթիւններուն հաւատանք – ոչ մէկ պատճառ ունինք չհաւատալու – այդ պատերը արդէն իսկ գոյութիւն ունեցող մեհեանի մը քարերն են, որոնք, ինչպէս պատմիչը կ'աւանդէ, նոյնինքն Տրդատի ձեռամբ փոխադրուած են։ Հոս ալ դարձեալ ոչ մէկ չափագրութիւն։

Բագարան, – կառուցուած է 631–ին։ Իր ընդհ. յօրինուածքով էջմիածինի չատ կը նմանի, նամանաւանդ իրը յատակագիծ, բայց իր ընդհ. ծաւալային յօրինուածքով չատ կը տարբերի։ Բագարանի ճարտարապետը ամէն ճիգ ըրած է ցոյց տալու համար, որ եկեղեցին խաչաձեւ է եւ գմբէթը յատակ կերպով կը բարձրանայ չորս սիւներու վրայ։ Սա իսկապէս նորութիւն կարելի չէ համարել, քանի որ էջմիածին եւ Տեկոր ալ նոյն յատկանիշները ունին, բայց չափերը բոլորովին տարբեր համեմատութիւններ ունին։ Իր տանիքներու յատակ եւ ուղղակի եռայարկ կարելի է ըսել, գոնէ արտաքնապէս։ Գայեանէի (630) եւ Մրենի (639) համար ալ նոյնը կարելի է ըսել։

Հոս ալ հեղինակը չափազանց ժլատ է։

Զուարթնոց, – Հայ ժողովուրդը տարօրինակ հակասութիւններու ծնունդ է։

Աշխարհի բոլոր ժողովուրդներու համար ընդունուած իրողութիւն մըն է, որ երբ երկիրը թշնամիներէ ոտնակոխ եղած է, երբ ժողովուրդը ահ ու սարսափի մատնուած, սովորական կեանք մը քաշկռտելու միջոցները հաղիւ ունի կամ չունի, շմորած կը մնայ։ Սակայն հայ ժողովուրդը զժբախտութեան մէջ կարծես աւելի կենսունակ կը դառնայ եւ փոխանակ յուսահատելու՝ փայլուն ապագայի երազով կ'ապրի։

Տակաւին երէկ, երբ հայ ժողովուրդի բացարձակ մեծամասնութիւնը արմատախիլ եղած իր դարաւոր հայրենիքէն ու ապագայ Հայաստանի մը գոյութեան մասին խորհ՛ելն իսկ անիմաստ երազ մը կրնար թուիլ միայն, հայութիւնը վերստին դտաւ ինքզինք։ Շատ կարճ ժամանակաշրջանի մը մէջ, անապատներու մէջ կմախացած խլեակները չուռով կեանք առին։ Հայաստան իր մոխիրներէն վերածնեցաւ, զարգացաւ, իսկ գաղթականը թօթափեց իր վրայէն պատառոտած, ծուէն-ծուէն եղած քուրջերը։ Այժմ կը չենցնէ հիւրընկալ ժողովուրդներու անապատները, հոն բարձրացնելով գեղակերտ բնակարաններ, տաճարներ, այգիներ եւ պարտէզներ։

600–ական թուականներուն Հայաստան իր ամենամակաբրդական շրջաններէն մին կ'ապրէր։ Կարծես բիւզանդացիները եւ պարսիկները բաւական չըլլային, կ'աւելնան արաբները, որոնք խրենց նոր կրօնքով արբեցած, կը կոծանեն, հուրի եւ սուրի կը մատնեն չատ մը երկիրներ եւ թագաւորութիւններ։ Կը դրաւեն նաեւ Հայաստանի մեծագոյն մասը, քարուքանդ կ'ընեն մայրաքա-

digitised by A.R.Å.R.@

զաք Դուինը, հազարաւոր գերի կը վարեն, մնացածն ալ կը ջարդեն եւ հոն՝ ուր կեանք եւ խինդ կը տիրէր, աւերածութիւն եւ լաց ու կոծ կը տիրէ։

Արաբները հսկայ աւարներով բեռնաւորուած երբ կը վերադառնան իրենց անապատները, գրեթէ անմիջապէս, անուղիղ լեռներու մէջ փախուստկան ժողովուրդը իր հոգեւոր պետին գլխաւորութեամբ՝ դէպի քաղաքները կը վերադառնայ, կը հաւաքէ մեռեալները մեծ զուրգուրանքով եւ պատշաճ արարողութիւններով հանդիսաւորապէս կը թաղէ զանոնք եւ կարծես այդքանը անբաւական ըլլար, նորընտիր կաթողիկոսը Ներսէս Շինող (642) անմիջապէս կը սկսի շինարարական աշխատանքի, վնասուած շինութիւնները կը նորոգէ եւ բոլորովին քանդուածներուն տեղն ալ նորեր կը կանգնէ։ Եւ ահա այդ նորերու կարգին, ի միջի այլոց, կը կանգնէ նաեւ Ս. Գրիգորի կաթողիկէն, որ կը կոչուի նաեւ Զուարթնոց «Բարձր շինուածով եւ չքնաղ զարմանալիք արժանի Աստուածային պատուոյն, որում նուիրեցան»։

Ս. Գրիգոր, կամ Զուարթնոց հաւանաբար շարք մը ուրիշ նոյնանուն եկեղեցիներէն զանազանելու համար կոչուած է նաեւ Առապարի Ս. Գրիգոր, որովհետեւ ան կը գտնուի Վաղարշապատի անապատին մէջ, Էջմիածին–Երեւան խճուղիի մօտ։

Զուարթնոց միջնադարեան յուշարձաններու մէջ, ամենաշատ վէճերու եւ հակամտութիւններու տեղի տուած հայկական միակ եկեղեցին է։ Հազար ինհարիւրական թուականներուն Էջմիածնական խաչիկ Վրդ. Դաղեան պեղումներու կը սկսի։ Իրեն կը միանայ Թորամանեան, որ երկար ուսումնասիրութիւններէ եւոք, 1904–ին յուշարձանի վերակազմութեան նախագիծը կը պատրաստէ։ Էջմիածին կը մերժէ այդ նախագիծը եւ առ այդ 1906–ին, ժամանակուան համբաւաւոր ճարտարապետ Տէր Սարգիսեանը Մոսկուայէն կը հրաւիրէ, որպէսզի Թորամանեանի «ոչ–գիտական» վերակազմութեան մասին իր հեղինակաւոր կարծիքը յայտնէ։ Տէր Սարգիսեան, սկիզբները, շատ ազեղ կերպով կը ծիծաղի Թորամանեանի նախագիծին վրայ, սակայն Թորամանեանի փաստարկութիւնները լսելէ եւոք, ինքն ալ կը համոզուի եւ Մոսկուա կը վերադառնայ։ 1905–1906 թուականներուն, Ն. Մառ Անիի իր պեղումներու ընթացքին կը գտնէ Զուարթնոցի օրինակով շինուած Գագկաշէն Ս. Գրիգորի մատեանը, որ գրեթէ յար եւ նման էր Թորամանեանի վերակազմութեան, ուստի՝ այլեւս ընելիք ուրիշ բան չէր մնար, եթէ ոչ միայն խոնարհիլ Թորամանեանի տաղանդին առջեւ։ Մէկդի դնելով արտասահմանեան ոչ լուրջ խծբծանքները, ըսենք, որ Մոսկուայի ճարտարապետական Տոքթ. փրոֆեսէօրներէն մէկը՝ Ա. Վ. Կուզնեցով երկար ուսումնասիրութիւններէ եւոք, ա՛յն եզրակացութեան կը յանգի, որ Թորամանեանի նախագիծը բոլորովին երեւակայական եւ անիրականալի գործ մըն է եւ իր քննադատութիւնը կը վերջացնէ նախատական խօսքերով, ուղղուած՝ տաճարի նախագիծի հեղինակին։ Դժբախտաբար առով ալ չի վերջանար բանավէճը։ Կուզնեցովի խմաստութիւնը մեծ արձագանգ կը գտնէ ըլլա՛յ Հայաստանի, ըլլա՛յ արտասահմանեան հայ գաղութներու մէջ։

digitised by A.R.A.R.@

Զուիցերիայէն ճարտարապետ Ճէվահիրճեան բոլորովին կը մերժէ Թորամանեանի նախագիծը եւ ինքն ալ կը խորհի, որ Կուղնեցով աւելի ճշմարտանման է, քան թէ Թորամանեանի տեսլականը։ Միեւնոյնը կը մտածէ Պէյրութէն շատ ծանօթ ուրիշ ճարտարապետ մը։ Այն փոփոխակը (variante), որ Կուղնեցով կը ներկայացնէ, կրնայ շատ ալ ինքնատիպ ըլլալ, սակայն Թորամանեանի նախագիծը՝ անառարկելիօրէն շատ աւելի բարձրաստիճան յղացում մըն է։ Եւ ահա յանկարծ, չեմ գիտեր ի՞նչպէս, անսպասելիօրէն կը յայտնուի, Փարիզի աստուածաժօր տաճարի դիմաց գտնուած Սէն Շափել անուն եկեղեցւոյ երկրորդ յարկը, սիւնասրահի մուտքի ձախ պատին վրայ շարք մը զարդաքանդակներու մէջ կը տեսնուի Նոյեան տապանի շինութեան յաջորդական պատկերները։ Առաջին քանդակը կը ներկայացնէ նոյնինքն տապանը, որ պատրաստ է արդէն եւ վերահաս ջրհեղեղէն խուսափելու համար գանազան կենդանիներ կամուրջի մը վրայով, դէպի տապանը կը բարձրանան։ Այդ տապանի վրայ պատկերուած է չէնք մը, յար եւ նման Թորամանեանի յղացած Զուարթնոցին։ Սէն Շափել կը պատկանի 1243–1248 թուականներուն։

Չեմ հասկնար, թէ ինչպէ՞ս կարելի է դարձեալ վիճիլ Թորամանեանի նախագիծին եւ մտնելի վրայ։ Եւ սակայն ճարտարապետութեան թեկնածու Ս. Մնացականեան, 1959-ին «Սովետական Արուեստ»ի թիւ 7-ին մէջ, երկար յօդուածով մը միջոցը կը գանէ վերը բերուած բոլոր փաստերը չընդունելու։

Աւելորդ կը համարեմ ամսաթերթի մը նեղ սիւնակներուն մէջ մանրամասն նկարագրել, Զուարթնոցի շատ բարդ պատկերը։ Արդէն չեմ կարծեր որ տակաւին գտնուին հայեր, որոնք հարիւրաւոր անգամ տեսած չըլլան, գանազան առիթներով, գոնէ՝ անոր արտաքին պատկերը։

Ս. Ի. Մնացականեան խորապէս ուսումնասիրած ըլլալով հայկական ճարտարապետութեան պատմութիւնը, իսկապէս մեծ հմտութեամբ ցոյց կու տայ Զուարթնոցի ընդհանուր պատկերը եւ գանազան մասերու նկարագրութիւնը եւ իրաւացիօրէն, կը յանգի սա եզրակացութեան, որ՝ «Հայ ժողովուրդը կառուցեց իր ազգային ճարտարապետութեան գլուխ-գործոցը, որտեղ խտացուած են դարերով կուտակուած շինարարական եւ գեղարուեստական դրատիցիաները (աւանդութիւն) ո՛չ թէ նսեմացնելու նրանից ոչ հեռու գտնուող աւանդական տաճարները եւ արքունիները, այլեւ ստեղծելու մի վեհ, վերասլաց յուշարձան, հայ ժողովուրդի, ազգային եկեղեցւոյ եւ նրա հիմնադիրի պատիւին։ Զուարթնոցը միաժամանակ հանդիսացաւ հայկական ճարտարապետական կուլտուրայի մի չքնաղակերտ կոթող, մի մոնումենտ, որ դարերի խորքը պէտք է տանէր հայ հանճարեղ ճարտարապետի գլուխ-գործոցը, նրա համարձակ մտայղացումների հոյակերտ մարմնաւորումը»։

Ա. Օ.

(Շար. 2)

digitised by A.R.A.R.@

ԹԱՏՐՈՆ ԵՒ ԲԵՄԱԿԱՆ ԿԵԱՆՔ

«ՀԻՆ ԱՍՏՈՒԱԾՆԵՐ»

ԲԵՄԱԴՐՈՒԹԻՒՆ՝ ՊԵՐՃ ՖԱՋԼԵԱՆԻ

Հ. Բ. Ը. Մ.ի եւ Հ. Ե. Ը.ի ուժերով, Վահրամ Փափազեան թատերախումբը, բեմադրութեամբ Պրն. Պերճ Ֆաջլեանի, Յունուար 24, 25, 26-ին, Փետրուար 1, 2, 8 եւ 9-ին, Պէյրութի Կիւլպէնկեան թատերասրահին մէջ ներկայացուց Լ. Շանթի «Հին Աստուածներ»ը։

Զենք բաժներ այն մտածումը, թէ Լ. Շանթի «Հին Աստուածներ»ը կարելի չէ ներկայացնել դասական ըմբռնումէն տարբեր ըմբռնումով մը. ընդհակառակն, կը հաւատանք, թէ այդ թատերագրը այնքա՜ն հարուստ է ու խոր, որ կարելի է միշտ նորութիւն գտնել անոնց, պեղել անժնտուորութեանց հոգեկան ոչխարհները ու յայտնաբերել դեռ մութ մնացած անկիւնները, մղել նոր ազդակներ, նոր համադրութիւններ. որով, Պրն. Գ. Ֆաջլեան ամբողջովին ապատ էր փորձելու նոր մտեցում մը յայտնաբերելու Շանթի «Հին Աստուածներ»ու բեմադրութեան մէջ։

Ուրիշ հարց է սակայն, թէ ի՞նչ բերաւ իրրեւ նորութիւն, ի՞նչ չափով յաջող էր մտապատկերացումը իր, ի՞նչ չափով յաջողեցաւ այդ մտապատկերացումը փոխանցել հասարակութեան, եւ ի՞նչ չափով երեւան հանեց «Հին Աստուածներ»ուն մէջ նոր գեղեցկութիւններ եւ հաղորդութիւններ։ Այս հարցումներու պատասխանն է, մանաւանդ երբ գրական է պատասխանը, որ կրնայ երեւան հանել տարբերութիւնը խորապէս ըմբռնող ու ստուգող արուեստագէտի մտեցումին, եւ մակերեսային, արտաքին պանուեանցներով գրաւելու ձգտումին։

Հիմնական նորութիւնը, (եթէ կարելի է նորութիւն անուանել գոյութիւն ունեցածին շեշտաւորումը) աբեղայի երգչներուն մտահայեցանքի մը ստեղծանին հացուած ըլլալն էր. մի-գանոյշներ, Սեղա, բանդագուշանքի ձեւով տեւաբար իր տենդահար ուղեղը կը չարչարէին, մեհենական տեսարանին, իր տեսած զօրավարները գէշ ատաղ իր կողքին կանգնած ու իր հետ ալօթող վանականներն էին, որոնց ուսերէն սեւ զգեստը թնկած էր եւ տակէն դուրս եկած էր զօրականի զգեստաւորում։

Աբեղան տեւաբար այս խելագարեցնող մտաթելադրանքներու ազդեցութեան տակ մնաց, անոնց խաղալիք դարձաւ. երգանքի մէջ լեռ այլեւս, այլ խանդաբուռ ուղեղի մը գերագրգիռ երեւակայութեան տակ ճգմուած գոհ մը։ Այս բոլորը ներկայացուցիչ համար օգտագործուած էին կարգ մը գիւտերդ, որոնք անշուշտ գիւտեր չէին, այլ բեմերու վրայ յաճախ գործածուած ու գործածուող բէմիկ միջոցներ, որոնք, հիւր է, առաջին անգամ ըլլալով կը գործածուէին «Հին Աստուածներ»ու ներկայացման մը համար։ Նման նորութիւններ էին օրինակ, Սեղայի առաջին երեւումը, իրրեւ ուսիլը, մութ շղարշ վարագոյրի մը ետին, յանկարծական լուսաւորումով անոր կերպարին. Սեղայի ձայնին մրմունջի ձեւով հնչելը հեռաւոր բարձրախօսէն. ամբողջովին սեւեր հագած միգանոյշներու ձեռքին կայծկլտացող, վառող ու մարող լոյսերը։

Այդ նորութեանց կողքին, նորութիւն մըն

digitised by A.R.A.R.@

էր նաեւ ճերմակաւորին աբդիկան, ամենաերիտասարդ կիցուածքով ու հագուածքով հրամցուելը հասարակութեան, ձեռքը բարձրախօսի մը միխրոֆօնը ու թելը, ինչ որ հաւանաբար կը ձգէր արտայայտել կիսնքի յաւիտենականութիւնը, ուժը, մինչեւ մեր օրերը տարած յաղթանակը (մերօրեայ հագուստներով կիսնքով խանդավառ երիտասարդի մը մէջ մարմնաւորելով զայն)։

Այս, արտաքին նորութիւնները, կամ ներկայացնելու նոր ձեւերը իրենց արժէքը պիտի առնային արուեստի պեղումներու արդիւնք եղող նոր իմաստաւորում մը երեւան բերելով թէ՛ Քառերակին համար եւ թէ անմեղութեանց։ Դժբախտաբար նման իմաստաւորում մը չառաջացաւ, եւ հրաշալուած գեղութիւնները մնացին արտաքին պաճուճանքի ձեւին առէջ, երբեմն հակասելով իրենք իրենց, չկապուելով մինչեւ անգամ անմեղութեանց հետ, կամ Քառերակին հետ, մեղով, տակաւին, երբեմն ուշադրաւ (Սեղոյի ձայնը դուրէն, Սեղուսարեաց առաջին հանդիպումին)։

Այս աբդիկանացմանց ճիգին մէջ, մեծագոյն աւելորդը եղաւ Վանահայրը, որ վերածուեցաւ երկրորդական առարկայի մը, որ պէտք է գար ու անցնէր, առիթ տալու համար յաղթարդ տեսարանին, ուր արեղան եւ իր մտահալածանքները ըլլային, թէքնիք գեղեցիկ արտայայտութեանց կարելիութիւններով։ Բնականաբար զոհ դարձին նաեւ մնացեալ անմեղութիւնները, Կոյր Վանականը, Իշխանուհի Մարիամ, եւ մինչեւ անգամ Աբեղան, իրենց Վանահօր եւ Վանականներուն մաս կազմող անմեղութիւնն։

Թերեւս այդ պատճառով, կամ Քառերակին հանդէպ այլ ընդհանրութիւնի մը բերելու գործութեանց հարկադրանքով, Քառերակը իր ամբողջութեան մէջ մեզ չներկայացուած հասարակութեան. վերածուեցաւ քանի մը տեսարաններու ուշադրաւ նոյնութիւնով ներկայացումի մը։ Դերակատարները, Վանահայրն ու Կոյր արեղան ալ ներառեալ, կարծես զրկուած էին իրենց նիւթէն, իրենց այլապէս այնքան արժէքաւոր տողերէն. խաղարկութիւնը անկարելի դարձած էր. եւ կամ, դերակատարներուն արուած չէր իրենց դերին եւ Քառերակի լրիւ ընդունած բացատրութիւնը. որով, կը խաղային առանց ապրելու կամ ընդունած ըլլալու իրենց տիպարն ու Քառերակը։

Նման պայմաններու մէջ, Վանահօր դերը վերածուած էր ծանր բեռան մը Թորոս Մարգիսեանի ուսերուն համար, որ մեծ եռգով միայն կրցաւ, արտաքին խաղաղութեան մը արտաքին խաղարկութեամբ միայն, Վանահայրը պահել այնպիսի կիցուածքի մը մէջ, որ Քառերակը բոլորովին չեռրատակուի։

Ուշադրաւ էր իր խաղարկութեամբ Ցարուբիւն Գնդունի, արեղայի դերով։ Թրոշ տեսարաններու ան կրցաւ բերել անմեղունակ արեղայի մը հարուածուած հոգիին ու մտքին բնական ու ապատարիշ արտայայտութիւնը։ Այլ տեսարաններու մէջ զգալի էր, դժբախտաբար, տարվոզի անբնականութիւն մը։ Գէտք է հետեւիլ Ցարուբիւն Գնդունիին, ապագայ խոստացող տիրող դերասան մը է։ Այդ ապագան կը կառուցուի յուրջ աշխատանքով, հարատեւումով. այդ ճանապարհով պէտք է առաջնորդել զինք, եւ չեղծել պարտադրուած խաղարկութեանց տակ։

Տպաւորիչ բեմայարդարում մը կը բերէր Օշին Դրգեանեան։

Անհանդուրժելի էր առոգանութիւնը, հայերէն շեշտադրման բացակայութիւնը, որ Քառերակին բնական արժէքներուն գէթ ինքնաբերաբար երեւան գալը կ'արգելէր, արգիլելով անոնց ու տողերուն մէջեղծով մատուցմանց արագ մուտքը։ Դերակատարները կրնան լաւ հայերէն ասուգանութիւն ու շեշտադրում չունենալ, բեմադրիչին պարտաւորութիւնն է տակաւին իր մատնանշումը ընել լեզուական մաքրութեան, եւ շեշտադրման հարգատութեան անթերի պահպանումը. որու իրականացման համար պարտաւոր է գիմել այդ մարդին մէջ փորձառու եւ պարտաւորուած անմեղութեանց օժանդակութեան։ Ներելի չէ, օրեւէ լեզուով, բեմ բարձրանալ, առանց յարգելու այդ լեզուի գեղեցկութիւնը կազմող, այդ լեզուով արտայայտութիւնը կարելի դարձնող առոգանութիւնն ու շեշտերը։

Բ. Փ.

digitised by A.R.A.R.@

«ԺԱՆ ԿԱՊՐԻԷԼ ՊՈՐԿՄԱՆ»

ԲԵՄԱԴՐՈՒԹԻՒՆ՝ Ժ. ՍԱՐԳԻՍԵԱՆ

Փարիզ Հայուհի Նորուստրա «Ճակոբ Տէր Մելքոնեան» թատերասրահին մէջ, 22 Փետրուար 1969-ին (ինչպէս նաեւ 23, 28 Փետրուարին, 1, 2, 8, 9 Մարտին), Հայազգայինի Գասպար Իփէկեան թատերախումբը ներկայացուց Իբսէնի «Ժան Կապրիէլ Պորկման», չորս արարով տուածը։

Գրուած 1896-ին, «Կապրիէլ Պորկման», Իբսէնի վերջին ուժեղ գործն է, հոգեկան սուր եւ դառնութեամբ թաթաւուն վիճակի մը պատկերացումին։ Այդ գործին մէջ՝ Իբսէն յետադարձ ակնարկ մը կը նետէ իր անձնական կեանքին վրայ, արուեստագէտ-գրագէտի թափած հիդին վրայ, կեանքին բերելու մարդոց հոգիներուն մէջ թաքնուած զգեցիկութեան գանձերը, առալացնելու համար աւելի գեղեցիկ ու տոնելի աշխարհ մը։ Այնտեղ ներկայ է, բնականաբար, նաեւ ընկերութիւնը, որ իր կանոններով, տարորոշիչներով, քարացած ըմբռնումներով կը կաշկանդէ, կը բանտարկէ ստեղծագործ ուղեղները, ընկերային օրէնքներու բռնաշաղիներուն մէջ։

Դժբախտաբար, թատերակին տարբեր բացատրութիւն մը արուած էր բեմադրիչին, Ժ. Սարգիսեանի կողմէ։ Անշուշտ բեմադրիչ մը ազատ է ունենալու իր բացատրութիւնը, եւ իր համոզումն է, որ պիտի ներկայացնէ։ Արդիւնքին յաջողութիւնը կախուած է նաեւ այդ բացատրութեան բերած բնականութենէն, հարազատութենէն եւ լերմութենէն։

Փոքրամասու խումբ մըն է Գ. Իփէկեան թատերախումբը, փոքրամասու դերասան մըն է Ժ. Սարգիսեան։ այս անդամ, տակաւ, կրնցինք ա՛յն տպաւորութիւնը, թէ թատերակը չէ խաղած իր արտին, համակրանք չունէր իր դերին հանդէպ։ որով, իր վարպետութեան շնորհիւ կրցաւ զայն պահել պարզ դրամատիկոյ մը բնական կերպարի սահմաններուն մէջ։ Գոհունակաւ բանատեղծութիւնը։

Բանատեղծութեան անմոռանալի արտայայտիչը եղաւ Ն. Արարատեան, Վիլիէմ Ֆոլտալի դերով։ կրցաւ մարմնաւորել իր տիպարը, ամբողջովին փոխակերպուելով, եւ տուաւ հարազատութեան եւրոպական լաւագոյն դերասաններուն համահաւասար խաղարկութեան մը վայելքը։

Տիկ. Զ. Շանթ, Գորկմանի կնոջ, կընկալեալ դերով, ամբողջովին մարմնաւորեց քրոջ, ամուսինին, ընկերութեան, մինչեւ անգամ զաւակին դէմ, յանուն բարոյական անունի, գիրքի ու պատուի պայքարող մօր մը տիպարը։

Օր. Վարդուհի Քիւրքճեան, շնորհալի՝ ապագայի իմաստով, դերակատարուհի մըն էր, որուն պարտադրուած էր չափէն աւելի մելոտրամաթիք, լալկան խաղարկութիւն մը, որ ամբողջովին կ'աղաւաղէ Իբսէնը, որուն թատերականերէն եւ ոչ մէկը մելոտրամաթիք է։ Այլ թատերախաղերու մէջ պիտի ուզէինք զինք տեսնել, եւ տարբեր դերերով։

Տիկ. Գարմէն Տէր Կարապետեան, տիկին Ուիլիքնի դերով, կեանքը սիրող, անկեղծ, համարձակ, ազատատրուած կինը փորձեց բլլալ, յաջողութեամբ՝ երբ հարցը կը վերաբերէր իր անձնաւորութեան բնական մասին, քիչ մը չափազանցուած խաղով՝ երբ հատարկութեան կ'ուզէր ներկայանալ արուեստական կեցուածքով ու շեշտերով։

Գրն. Գ. Ջանսըզեան, Գորկմանի աղուն դերով, ներկայացուած ըմբռնողութեամբ տղու դերին մէջ, տեղ-տեղ յաջող, տեղ-տեղ կրկնուած խաղարկութիւն մը մեկնելի բերաւ։

Հ. Մարտիրոսեան (Ֆրիտայի դերով) եւ Մարօ Սարգիսեան (Սպասուհիի դերով), լաւ խաղարկութեամբ մը այդ փոքր դերերուն տաց շունչ կրցան տալ։

Թատերակը թէեւ չէր պահանջեր, կամ կարելի չէր եղած դուրս բերել իր մէջ պահուած, ամբողջ ուժականութիւնը եւ գեղեցկութիւնները, բայց եւ այնպէս՝ իր ներկայացումը կ'արձանագրուի իբրեւ գրական երեւոյթ, շահ մը հայ բեմին համար։ Մեր թատերախումբերը պէտք է տեւաբար պէտք տրժէքաւոր թատերագիրներու գործերը, կրկին ու կրկին հրամցնեն զանոնք հայ թատերասէր հասարակութեան։ Մշակոյթի հարըստացման լաւագոյն ճանապարհն է ասիկա։

Բ. Փ.

digitised by A.R.A.R.@

«Գրական Թերթ»-ի խմբագրությունը, այս տարուան իր առաջին չորս թիւերով լույս ընծայից նախապէս պատրաստած իր հետեւեալ հարցարանին արդիւնքները։

Իրենց ներկայացուցած հետաքրքրական կողմերուն համար՝ մեր ընթերցողներուն ուշադրութեան կը յանձնենք վեց քննադատներու եւ վեց բանաստեղծներու մասնակցումներն ու կարծիքները։

1.— Ո՞րն էք համարում 1968 թուականի հայ գեղարուեստական լաւագոյն բանաստեղծութիւնը։

2.— Ո՞րն էք համարում 1968 թուականի Ձեր ամենալաւ բանաստեղծութիւնը՝ տպագրուած կամ անտիպ։

«Գրական Թերթ»ի խմբագրութիւնը առաջին հարցով դիմեց Հանրապետութեան տասը գեղանկարիչների, երկրորդ հարցով՝ տասը բանաստեղծների, եւ ստացուած պատասխաններից մի քանիսը, մնացածները հերթական համարներում ներկայացնելու մտադրութեամբ։

Բոլոր պատասխանները տպագրելուց յետոյ, խմբագրութիւնը մըտադիր է նոյն հարցով դիմել ընթերցողներին։

Վ. ՄՆԱՑԱԿԱՆԵԱՆ

1968 թուականին ապագրուել են բազմաթիւ լաւ եւ մի քանի սիրուած բանաստեղծութիւններ, բայց... բայց այդ թուականի իմ հոգեւոր աշխարհն ինչ-որ չափով աղքատիկ կը լինէր, եթէ չկարդայի Վահէ Կոտէլի (ազգութեամբ հայ) «Հայաստան» պոեմը («Մոսկուայի Գրականութիւն», թիւ՝ 11) Վահագն Դաւթեանի գեղեցիկ թարգմանութեամբ։

«Հայաստանը ... ժայռեղէն լեռու է ու գժուարին հերկ» ապա «Հոգեմաքաւ եղած ու վիրընծայուած Սասունի պատի» եւ «Մարքահարուած սիրոյ սէրութիւն»..., յետոյ «Փչրուած գանգեր, չէներ մխացող, Ապրիլը 24»... Եւ շնչած ճակատագրի այդ սահուրութեանը.

Օրօրուեց սակայն օրօրոցն Հայկեան,
Մուսա լեռն ըմբոստ կրակով շաչեց,
Գուռկիկ Ջալալու սմբակը գիպաւ Նրարատ ասրին
Եւ ուրարտական սէգ առիւծների
Դնչակալներից շռնչ եկաւ ճորից...
Եւ եղաւ յանկարծ չոր վայրի ծաղկում
Եւ կենդանութիւն ամրակների...

«Ծագանի կայանից» մինչեւ նորագ ոստաններ, «Խեղդուած երգանիներից» մինչեւ վառուող լահեր, հողմահար խոզանից մինչեւ աշխարհի բոլոր հայերին իր գիրկն առնող Հայաստան երկիր, որի հողն ու երկինքն այլեւս անբաժան են իրարից։

Անցած տարին ամբողջեան մի նոր հանգոյց աւելացրեց այդ գալինքին։ Հպարտութիւն ներշնչող այդ նորի մէջ իր ժան ունի նաեւ Վահէ Կոտէլը, որ լինելով այդքան հեռու, կարողանում է լիաթոք շնչել Հայաստանի երեկուայ, այսօրուայ եւ ապագայի օդը։

Ինչպէսի՛ բախտաւորութիւն, երբ բանաստեղծը, ազգանդից բացի, ունի նաեւ մեծ ոգեկից։

digitised by A.R.A.R.@

Ս. ԴԱՐՈՆԵԱՆ

Ցարուսյ Լաւագոյն Բանաստեղծութիւնը... Ո՞վ կարող է ճշգրիտ որոշել, թէ որն է։ Կա՞յ արդեօք այնպիսի մի սարք, որ կարողանար բռնել ու համեմատութեան մէջ դնել քնարերգութեան բոլոր հրերանգները։ Հաւանաբար չափանիշ մնում է ընթերցողը։ որքան ընթերցող, այնքան էլ տարուսյ «լաւագոյն» բանաստեղծութիւն։ Եւ նոյնպէս ընթերցող եմ եւ ունեմ իմ սիրած բանաստեղծներն ու նախասիրութիւնները։

Ժամանակակից հայ – եւ ոչ միայն հայ – քնարերգութիւնից ինձ ամենից շատ դիւր է գալիս այսպէս կոչուած փիլիսոփայական բանաստեղծութիւնը՝ բանաստեղծի մտորումները իր եւ ժամանակի մասին։ Անցած տարուայ նմանօրինակ բանաստեղծութիւններից ես առանձնացրեցի եմ Աշոտ Գրաչու «Ո՞ւր ես, սիրոյ մոլորակ» (1968 թ.) գրքի «Հանելուկ ես դու, աշխա՛րհ, ինձ համար» բանաստեղծութիւնը։ Ո՞րն է դրա իմաստը։

Բանաստեղծի պատկերացման մէջ աշխարհը հանելուկ է, եւ ինքը փնտռում նրա բանալին։ Աշխարհը Գրաչու համար ոգեւորութեան աղբիւր է եւ նրա ճանաչման ուրախութիւն։ Եւ այնքանով, որքանով այդ ընթացքը անվերջանալի է, ապա քնարերգութիւնն էլ, ինչպէս աշխարհը, անսահման է։

Հանելուկ ես դու, աշխա՛րհ, ինձ համար,
Օ, կեա՛նք, առեղծուած հին, զարմանալի,
Դեռ իմ մեռիերում դու ուրբ բանալի,
Որ բացիմ թախտի դռներդ ամեամար,
Որպէս երկնքիմեր աստեղապատմար,
Հանելուկ ես դու, օ, դա՛ր, ինձ համար,
Հանելուկ ես դու, աշխա՛րհ, ինձ համար,
Բայց ինձ՝ քո պռեստ որդուն ետաստա՛,
Թէրեւ յայտնութիւն ու գիտ քեզ գտայ,
Ուր էլ դու լինես, աշխարհ, ինձ ժպտա՛
Ազա՛տ, ամշդրա՛յ։

Հանելուկ ես դու, աշխա՛րհ, ինձ համար,
Ե՛ւ առեղծուած ես – Ե՛ւ լուսէ կամար։

Ս. ՍԱՐԻՆԵԱՆ

Հաւասարութեան եւ հաւասարարութեան մեր ժամանակներում ամենասիրելի ճշմարտութիւններն անգամ ենթակայ են դարձել վիճաբանական ստուգութեան։ Ի՞նչ կարող ես անել. բացարձակը կա՛մ մերժւում է, կամ չկայ, չափանիշները համահաւասարւում են միջին–յարաբերականով, իսկ մեքենայացուող բանականութիւնն իր հերթին կանխում անհատական ճաշակի ու նախասիրութեան ազատութիւնը հասարակական կարծիքի առաջ։ Դրանից չէ՞, որ անկախութեան ձգտող արդի մտածողութիւնը այնպէ՞ս խոչում է բարոյականների վրայ։ Եւ այսպէս, 1969 թուականի հայ քնարերգութիւնն ունի լաւ գրքեր, լաւ բանաստեղծութիւններ, բայց թէ ո՞ւր է հլուսոյն բանաստեղծութիւնը... դուցէ պատասխան կը տայ հաջուիչ մեքենան։

digitised by A.R.A.R.@

Ս. ԱՂԱԲԱԲԵԱՆ, Լ. ՀԱԽՎԵՐԴԵԱՆ

Վերջին չորքանում յոսմախ են գրում այսպէս կոչուած գրանասեղծական լարքերդ։ Վատն այն չէ, որ բանաստեղծական չափառոգերը լոյս աշխարհ են գալիս նման երամ-ներով։ Վատն այն է, որ դրանց ժխորում ինքնուրոյնութիւնից ու անհատականութիւնից զրկւում է մի բանաստեղծութիւնը։ Այնինչ գոհդիայի պատմութիւնը, վերջին հաշուով, մի բանաստեղծութեան պատմութիւն է։ Մի «Հրապդան, գեղանդ իմ հայրենի», մի «Երազ», մի «Հաստիկ», մի «Հոգեհանգիստ», մի «Կարոտի նամակ», մի «Բինգեոլ», մի «Տխրութիւն», մի «Գիշերն անուշ է...», մի «Ես իմ անուշ Հայաստանի», մի «Գարնանամուտ», մի «Լեռան գագաթին օրն ուշ է մթնում» – այսպիսի ինքնուրոյն մեաւորներից է գոյանում ճըշ-մարիտ պոեզիան։

«Գրական Թերթ»-ի հարցումը, ահա, ուրախացնում է մի բանաստեղծութեան ինք-նուրոյնութիւնն ու աթժէքը հաստատելու տրամաբանութեամբ։

Ինչ վերաբերում է «Բանաստեղծութիւն, 1968»-ին, ապա գիւրին բան չէ ընտրել այն միակ բանաստեղծութիւնը, որ լաւագոյն ենք համարում։

Բանաստեղծական առատ բերքի այս տարում՝ 1968-ին, երբ լոյս են տեսել Հա-մո Սահեանի «Բարափներն երգը», Ե. Չարենցի «Ցուշաբան մայրիկիս», Հր. Ցոլհան-նիսեանի «Վայրի վարդ» հրատարակ գրքերը, երբ ուրիշ ահել ու ջահել բանաստեղծներ ժամուշում տպագրել են ուշադրութեան արժանի գործեր, դժուար է ընտրութիւն կատա-րել։ Մանաւանդ, որ կայ նաև անհատական ճաշակի խնդիրը։

Այդուամենայնիւ, ընտրութիւնը կանգ առաւ Դ. Սարգսեանի այս գեղեցիկ ու նուրբ բանաստեղծութեան վրայ։

Ես ուրախ մի օր իմ ուզում·
Մի ամռոց ցնրեկ,
Ես ունեմ ամռան մի յուզում,
Մի կարած երէկ։
Նրէկս գոմեր իմ ուզում,
Աչքումս առ արցունք,
Ինձ կանչում, կանչում է մուժում
Հեռու մի բարձունք։
Ես ծագող արեւ իմ ուզում,
Գիշեր է գալիս,
Աշխարհը մութի մէջ սուզում
Ինձ ձայն է տալիս։
Գիշերն ինձ կանչել է ուզում,
Գնա՞լ, թէ՞ մնալ,
Ես դեռ ոտ երգեր իմ հիւսում,
Չեմ ուզում գնալ։

Անժամանակի կռահումներով, անբնական քարշացումներով, արհեստական զուգոր-դումներով լեցուն ստանաւորների աղբի հեղեղում մեր ալեհեր պոետի այս բանաստեղ-ծութիւնն աչքի է ընկնում զգացմունքի անկեղծութեամբ եւ արտայայտման դասական յատկութեամբ, ապրումի եւ իր արտայայտչութեան ներդաշնակութեամբ։ Ցաւոսալի է-նը, որ պէտք է շրջանինները լինեն ճշմարիտ պոեզիայի համար։

digitised by A.R.A.R.@

Գ. ԱՆԱՆԵԱՆ

Անկեղծ ասած, հարցադրումը ինձ այնքան էլ դիւրը չի գալիս. թերեւս այն պատճառով, որ անմիջաբար չի մղում խոստովանելու տարուայ բանաստեղծական հունձքից ստացած անմիջական ապաւորութիւնը։

Ինձ համար, օրինակ, 1968 թուականը Համո Սահեանեան էր, լցուած քարափների զարմանալի երգով։ Երկանիկ է այն բանաստեղծը, որը հոժարաբար վարժութեամբ լաւ բանաստեղծութիւններ գրելը թողնում է անցած ճանապարհին՝ մուտք գործելով լաւ բանաստեղծութիւններ հրատարակելու՝ մեծերին վերապահուած ասելանը։ Հեշտութեամբ լեն գրւում նման բանաստեղծութիւնները ու շատ էլ լեն լինում, բայց ե՞րբ է նուաճուածի բարձրութիւնը քանակով չափուել։ Ճանամեակների ընթացքում երգերով ու կրքուանների հարստացած գարմանալի պէտ՝ իմաստնացած բանաստեղծի «Քարափների երգը» գրքում կայ այսպիսի մի բանաստեղծութիւն.

Իմ ապրած կեանքի օրերից արքուն
Ոչ մէկը չկայ այս ճանապարհին,
Ասա ինձ, յոգնած յաւիտենութիւն,
Ո՞ւր են հեռանում օրերն ու տարին։

Եթէ կայ ինչ-որ գերեզմանատուն,
Որտեղ հանգչում են նրանք սրբօրէն,
Ցոյց տուր ինձ, գնամ, յաւիտենութիւն,
Իմ ծնուած օրուայ շիրիմն համբուրեմ։

Ոգբերգական ապրումի վիթխարի ուժով, որն այնուամենայնիւ մնում է մեծ արուեստի հիմքը, դասական յստակութեամբ ու խորութեամբ, կեանքի մասին փիլիսոփայական ծանր խոհի գրաւորման «թեթեւութեամբ» այս բանաստեղծութիւնն առանձնանում է ոչ միայն Հ. Սահեանի ստեղծագործութեան կամ նոյնիսկ 1968 թուականին ծնուած բանաստեղծութիւնների, այլեւ ընդհանրապէս վերջին տասնամեակի վերելքներով, հակայական նուաճումներով բնութագրուող քնարերգութեան մէջ։

Ուզում եմ հաւատալ կանխազգացմանը, իր «ժեռագիրը» հաստատած բանաստեղծը այս բանաստեղծութեան ճանապարհով մտնում է ստեղծագործական նոր հեռանկարներ՝ դառնալու հոգնած յաւերժութեան զրուցակիցը։

Ն. ՋԱՐԵԱՆ

«Գրական թերթի հարցումին. «Ո՞րն էք համարում 1968 թուականի ձեր ամենալաւ (տպագրուած թէ անտիպ) բանաստեղծութիւնը», պատասխանում եմ.

1968 թուականի իմ չափածոյ գործերից ես ամենալաւն եմ համարում «Աբրաւաղդ եւ Կլէոպատրա պոեմ -ոգբերգութիւնը (ոչ Գ. Մունդուկեանի անուան թատրոնի ներկայացրած վիճակով) եւ մի տառնձին անտիպ եռատող.

Երէկ դու ասող էիր, բայց ոչ արաւնտագէտ,
Այսօր, երբ դու արդէն տիրել ես արաւնտին,
Ինչ փոյթ, որ ասող է այլ մի անարաւնտ
եռմբակ։

digitised by A.R.A.R.@

Հ. ՍԱՀԵԱՆ

Հազար տարուայ մեր քնարերգութիւնը հազարաւոր գլուխ-գործոցներ ունի։ Հայրեն ու անտունի, լարական ու տաղիկ, գազել ու բալլադ, սոնետ ու եղերերգ... ամէն մէկը մի գլուխ-գործոց։ Եւ այդ գլուխ-գործոցների գլուխ-գործոցներն ինձ համար եղել են ու մնում են «Ցրտունգէ», «Փիշերգ սանչ է, գիշերգ նիշտագին», «Աշխարհս մի փանջարա է», «Լիսաբնամայում», «Պատրամէ», «Հրաժեշտի գազել» եւ «Անմեռութիւն»։

Այդքաղչ կեանքում երազել եմ գրել դրանց հաւասար մի բանաստեղծութիւն։

Ամէն անգամ, երբ կայծակել է առաջին տողը, եւ սկսել է անհնարինը գտնելու կրիւը, թուացել է, թէ դրուում է հենց այդ բանաստեղծութիւնը։ Բայց երազանքը մնացել է երազանք։ Մնացել է հորիզոնի ազեղին թառած աստղի պէս, որքան ժամեցել եմ, այնքան հեռացել է։

Ո՞րն է 68 թուականին գրուած իմ ամենալաւ բանաստեղծութիւնը։

Մեր գիւղացի Մեսրոպենց Ենոքն ունեցել է 12 տղայ։ Ոչ մէկին իր «գրոց» անունով չեն կոչել։ Մեզը եղել է Զուլին, փոքրը՝ Գուլին։ Դրանց արանքներում Ցուլին, Ղուլին, Դուլին, Մուլին եւ էլի ուլիներ։

Օրերից մի օր «Մեսրոպենց դուժինն» անցնում է ոչխար Գէորգի տան դռնով։ Ամէն մէկը ոչխարների ետում է իր «Օրհնեա՛ տէրը» եւ ոչխարի «Առատաւատ օրհնիր» ասում գնում։ Հերթը հասնում է Գուլուն։ Գուլի դու Գուլի, «օրհնեա՛ տէրի» տեղակ բերանում հաւաքած ջուրը փչում է ոչխարի երեսին ու փախչում։

Տէրտէրը բոլորին օրհնում է, Գուլուն անիծում։ Բայց արի ու տես, որ Ենոքը ամէնից լաւ սիրել է «անիծած» Գուլուն։

68 թուականի իմ «անիծած» Գուլին այս բանաստեղծութիւնն է, որ բերում եմ ամբողջութեամբ.

Իրաւ աարեակը գաշտում։ Մել էր կտուցին։
Երբեմ վրայ մի կանաչ տող էր թիրտում։

Արտից տատրակը բռաւ։ Հասկ էր կտուցին։
Երբեմ վրայ մի կարմիր տող էր թիրտում։

Ծիծառն անցաւ երկնքով։ Ամպ էր կտուցին։
Երբեմ վրայ մի դեղին տող էր թիրտում։

Կռաց ագռաւը ձորում։ Ձիւն էր կտուցին։
Սրտիս վրայ մի ցերմակ դող է թիրտում։

digitised by A.R.A.R.@

Գ. ԷՄԻՆ

Ընդհանրապէս, 1968 թուականին գրած իմ բանաստեղծութիւններից ես, որպէս ընթերցող, քիչ թէ շատ հաւանում եմ իմ «Փարիզեան երգեր» շարքի «Ա՛հ, Մարիա՛ջ բանաստեղծութիւնս («Մամիտասկան Գրականութիւն» թիւ. 2, 1968 թ.)։

Ինձ թւում է, թէ ես այնտեղ կարողացել եմ արտայայտել այս աշխարհի ու այս դարի գլխին կախուած սպառնալիքների սպառնալից պատկերը։—

Ա՛հ, Մարիա՛,
Բա՛ւ է, Մարիա՛...
Բա՛ւ է՝
ձեռացն այս փլչող տանիքի,
Մուտի կարիքն,
Երբ բռունցքն՝ տեր՛ դ,
Խիզեր՝ բարի՞ է...
Ա՛հ, Մարիա՛...
Բա՛ւ է՝
Մեր գլխին կանգնած ռումբերը,
Թափո՛ւր վառոդերը, լեցո՛ւն բաճոերը,
Աշխարհն ուրոյ մոլի կրքե՛րը.
Եւ խե՛ղճ գրքերը,
Եւ խե՛ղճ երգերը,
Որոնք անզօ՛ր են,
Ինչպէս քեզ ձօնուած
Հառաչանքնե՛րն ու ապաչանքնե՛րը,
Ա՛հ, Մարիա՛...

Վ. ԿԱՐԵՆՑ

Այս հարցին պատասխանելը դժուար է, որովհետև ի՞նչ իմանաս, ը՞ն հաւանած բանաստեղծութիւնը ուրիշները կը հաւանե՞ն, թէ ոչ։ Բացի այդ, ինքը՝ հեղինակն էլ այդքան հեշտ չի ջոկում իր ամենալաւը։ 1968 թուականին ես գրել եմ բանաստեղծութիւնների գրքիկ մի ամբողջ ժողովածու։ Հեշտ չէ ընտրել ամենալաւը։ Մակայն կայ մէկը, որ չարունակ մնում է յիշողութեանս մէջ։ Ես այն ամենալաւը համարել չեմ կարող, բայց թեմ... ուհանգստացնում է։ Ուրեմն նա մօտ է իմ սրտին։ Ահա այդ բանաստեղծութիւնը.

Արշալոյսից մինչ երեկոյ ես լսեցի քամուն,
Նա հեռուտը իմ սարերից մայիսի բերեց գառան,
Ես մանկութիւնն իմ յիշեցի ափսոսանքով ու լաւ –
Ձերմա՛կ, ձերմա՛կ իմ մազերից մէկը տարաւ քամին։

Արշալոյսից մինչ երեկոյ ես լսեցի քամուն,
Նա հեռուտը իմ դաշտերից խրխինջ բերեց ձիու,
Զաեիլութիւնն իմ յիշեցի, ես յիշեցի տխուր –
Ձերմա՛կ, ձերմա՛կ իմ մազերից մէկն էլ տարաւ քամին։

Արշալոյսից մինչ երեկոյ ես լսեցի քամուն,
Նա ուռենու շշշիւն բերեց իմ հեռուտը ձորից,
Ես յիշեցի աէրն իմ ամէնց, աէրն իմ սատանանուր,
Ձերմա՛կ, ձերմա՛կ իմ մազերից ետքից տարաւ քամին։

Արշալոյսից մինչ երեկոյ ես լսեցի քամուն,
Նա ինձ բերեց, փաշին բերեց մօտս շիրմաքարի.
Ձերմա՛կ, ձերմա՛կ իմ մազերից տարա՛ւ, տարա՛ւ քամին –
Եւ ասելի մեռուր փայլեց ձիւնը բարձրիկ լեռան։

digitised by A.R.A.R.@

ՍԱՐՄԷՆ

1968 թուականը ինձ համար շատ բեղմնաւոր եղաւ։ Գրեցի բանաստեղծութիւններ, արձակներ, գրախօսներ, ուսնեակներ եւ մի պոեմ, որոնք կազմում են այս տարի լոյս տեսնելիք «Երգանոց» գրքիս հիմնական կորիզը։

Այս բազում ու բազմազան գործերի մէջ, չգիտեմ ինչու, ես ամենից շատ սիրում եմ այս բանաստեղծութիւնը.

ԹԻԹԵՌ

Ինձ պատից զարմանք
Ու հիացմունք,
Երբ շուշան ծաղկի
Թերթերին տեսայ
Մի մեռած թիթեռ։

Իմ երկաթ կեանքի
Մեծ ճանապարհին,
Ես այդպէս շիթիմ
Ու այդպէս մեռել
Չէի տեսել դեռ։

Ու շիթիմը այդ
Իմ գրտին թուաց
Փարաւոնների
Դամբանների էլ
Մեծ ու փառաւոր։

Թիթե՛ռ, հոգ չէ, որ
Ազդել ես մի օր,
Բայց քաղուած ես դու
Ինչպէս թագաւոր։

Լ. ԴՈՒՐԵԱՆ

«Մի՞թէ է 1968 թուականի ձեր ամենալաւ բանաստեղծութիւնը...»։

Եթէ ես անուն հանած բանաստեղծ լինէի, ինձ համար դժուար չէր լինի պատասխանել այդ հարցին, քանի որ անունը պարտադրում է...

Ես մեկ մտավախութիւն ունեմ իմ բանաստեղծութիւնների նկատմամբ եւ յաջողուածները սիրում մեկայն անձիպ վիճակում։

Իմ կարծիքով, իմ ամենալաւ բանաստեղծութիւնը այս բանաստեղծութիւնն է, որը դեռ անտիպ է։

Դու եկել ես ոտից անակնկալ,
Ես չգիտեմ՝ վերջը ինչ կը լինի,
Թող որ խմեմ վերջին, վերջին անգամ
Քո աչքերի կապո՛յտ, կապո՛յտ գինին,
Երջանկութիւնը հենց այդ է, որ կայ,
Ես չգիտեմ՝ վերջը ինչ կը լինի։

Երջանկութիւնը հենց անտառն է այս,
Այս պտտենոց թաց, այս ծառուղին,
Ցեռուիր գու իմ ուսին, իմ ոսկեվարս,
Շրջենք այս ծառուղում գաղտագողի,
Քեզ ճնում են ծառերն աշնանավարս,
Իմ տխրութիւն, իմ սէր, իմ լուռ թախիծ։

Դու եկել ես ոտից անակնկալ,
Այդպէս բախտն է գալիս միշտ անպատրաստ,
Աշնանավարս ազիկ, իմ բարեկամ,
Ես չգիտեմ՝ ուրին ուր է տանում,
Թող որ խմեմ վերջին, վերջին անգամ
Քո աչքերի թացը անհուն։

Աշնանավարս ազիկ, վերջին իմ սէր,
Վերջին պտուղ՝ ընկած վերջին ծառից,
Ո՞վ կարող է սիրոյ հիմնը հիւսել
Առանց տատապանքի, առանց ցաւի,
Դու իմ ազատութիւն, ցաւ իմ լուռէ,
Իմ տխրութիւն, իմ սէր, իմ լուռ թախիծ։

digitised by A.R.A.R.@

Սառրեւ բնաբերին հետ այն թարգմանութիւնը, որուն համար մեր նեբկայ թիւին 69-րդ էջին վրայ՝ Վաղէն Մնացականեան կը գրէ, թէ «այդ թուականի իմ հազիւոր աշխարհն ինչ-որ չափով աղքատիկ կը լինէր, եթէ չկարդայի Վահէ Կոտէլի «Հայաստան» պոեմը»։

Մօր կողմէ հայ այս բանաստեղծը բոլորովին անծանօթ չէ ընթերցողին։ Քառասունին դեռ չհասած երիտասարդ մըն է Վահէ Կոտէլ եւ արդէն հեղինակ է Ֆրանսերէնով գրուած բանաստեղծական հինգ-վեց հատորներու։

Հայ ընթերցողներու մտքին մէջ, սակայն, անոր անունը առաւելապէս կապուած է Դանիէլ Վարուժանի։ Վահէ Կոտէլ Ֆրանսերէնի վերածեց հեթանոս քուրմին «Հացին երգը», նոյնն Վարուժանէն թարգմանեց ու իր ընթերցողին ներկայացուց լաբգ մը «Ը-

Arménie 1915 - 1965

par VAHE GODEL

Giron des fleuves, éperon, verge du monde,
socle de l'Arche, mémoire du Déluge, roseau pourpre,
prunelle solaire, langue rocheuse, brûlée,
rauques labours, et ce fut l'Ourartou!
Les nids d'aigles répondirent aux rumeurs des vergers;
dénouant leur ceinture, des villes neuves
mûries dans les méandres
offraient aux caravanes la courbe de leurs hanches...
Par la tiare d'Ardachès! par la robe de Tigrane!
par le poing d'Ardavast! tends l'oreille!
ouvre l'œil! voici l'autre versant.
La croix prenant racine retenait le terreau,
ses branches s'ouvraient aux galaxies,
ciel et terre formaient un même tissu,
Mesrob forgeait une écriture,
nulle couture entre le corps et l'âme...
Par la voix de Meher! par l'oncle de David!
par la ruse de Vahan-le-Loup! cuivre, or, soufre,
granit, gangitide, terreur des vipères, qui que tu sois,
consume ton restant d'huile au fond du gouffre,
(on ne sombre que pour mieux surgir!),

digitised by A.R.A.R.@

տիր էջեր» եւ «Հայաստանի բանաստեղծներ» անունին տակ հրապարակ հանեց երրորդ հատոր մը, ուր ամփոփուած են 5-20-րդ դար երկարող հայ բանաստեղծութեան ընտիր նմոյշները։

Վահագն Դաւթեանի թարգմանած հեռագայ քերթուածը առաջին անգամ լոյս տեսաւ Ֆրանսական «Էսֆրի» ամսաթերթի 1965-ի Յունիսի համարին մէջ, որուն խմբագրութիւնը ընկերացուցած էր Մեծ եղեռնը ոգեկոչող խիտ բայց ուշագրաւ նօթ մը։

Ձհաշուած թարգմանիչին մօտ կռահուած «Արքայի Գրիգորի ծառը» չարցնելու, «Դաւիթին օրը» անհասցնելու, «Վարամին տունը» քանդելու եւ քանի մը այլ նախադասութիւններ յապաւած ըլլալու տկարութիւնները, քերթուածը կը մնայ ուշագրաւ թարգմանութիւն մը, ուր յաջողակօրէն պահուած է բնագրին Ս. խորհուրդը, Ս. ուժգնութիւնը Ս. թռիչքը։

ՀԱՅԱՍՏԱՆ 1915 - 1965

Դու՝ գետերի հուն, ջրհեղեղի յուշ, տապանի կայան,
Կարմիր եղնգնիկ, արեգական թիր,
Ժայռեղէն լեզու, հոգմահար խոզան,
Դու՝ հերկ դժուարին, երկիր ուրարտու։
Արձագանգում են արծուի բները այգեստանների կանաչից պոկուած
երգին ու կանչին,
Եւ քաղաքները՝ արքունիքի հասած,
Կուսուրեան կանաչ գոտին արձակում
Ու մատուցում են քարաւանների կորուստները իրենց կոմիտաների...
Ակնոցդ սրիր Մեծն Տիգրանի ծանր ծիրանու հէտ ծփանքով
Եւ Արտաւազդի բռունցքը բանտող շղթայ-կապանքով,
Ու աչքերդ բաց՝ նայիր այս լանջին։
Քառաթեւ խաչը արմատակալել այս պարարտ հողում
Եւ իր թեւերն է աստղերին պարզել,
Միահիւսելով երկիր ու երկինք։
Մեսրոպ Մաշտոցը գրեր է դարբնում,
Որ իրար կապի ոգի ու մարմին...
Մեերի գայթոյթ, Դաւթի հօրեղբօր որոտմունք ահեղ,
Պղինձ, գրանիտ,
Ծնունդ ու ոսկի, իժերի սոսկում... ով էլ լինես դու,
Ձրագդ վառի՛ր, մինչեւ վերջ վառի՛ր խորհրդում վիհի,
(Մինչեւ չգայթես, վեր չես բարձրանայ)...

digitised by A.R.A.R.@

attache-toi à la toison du premier cri,
afflue vers les hautes vallées,
confie ton sort aux sources vertigineuses,
aux parfums de l'amome («graine de paradis»),
ruissellement de perdrix, annales giboyeuses,
épouse trop belle, trop féconde, jardin par excellence,
éminence, îlot perdu, génisse
rongée par les vents du désert,
Sabre-Lumière plantée dans une nuit d'hiver,
corolle de Sassoun, saccagée, refleurie, vendanges,
roseraies, souci des troubadours,
terre d'amour, terre battue, cornue brisée,
cendre des doléances, tumulte des panoplies,
aubes fourbies, rugissements que le silence attise,
tour calcinée, femme éventrée, enfant
noyé, semailles nocturnes, colline rouge...
Que de grains amassés dans la grange commune,
que de sang dans les caves! Van, Erzéroum,
Samsoun, Ani, crâne troué, tison,
vingt-quatre avril..., les prisons
se soûlèrent, les ténèbres se gorgèrent,
puis soudain elles vomirent une bouillie fumante,
une lave silencieuse qui dans l'espace de pierre
allait rejoindre des ossements déjà blanchis;
les passereaux s'enfuirent,
les truites gagnèrent les profondeurs...
Berceau de Haïg! arbre de saint Grégoire!
repaire de David! brasier rebelle de Moussa-Dagh!
le poulain Djalali effleura l'Ararat, un souffle aigu
démusela les lions de l'Ourartou, floraison
du bois mort, remous dans les décombres,
pour une lampe étouffée mille torches s'allument!
la faux change de mains...
Revenez, laboureurs, effeuilleuses, vignerons,
avec pour seul bagage la vigueur de vos reins,
la forge de vos entrailles!
la charrue vous attend, les brantes sont lavées,
le taureau gronde, les bornes brillent, prairies,
maison d'Aram, sonnailles de Lori, soleil grenu,
Araxe vivandière, lune de miel, chemin, chevance des tonneaux,
ouvre l'œil! tends l'oreille! reviens!
voici le pain, le lait, le vin nouveau de l'Arménie.

Genève, février 1965

Vahé GODEL

digitised by A.R.A.R.@

. . . . . .
Կարկաչով հոսիր հովիտներն ի վար,
Բախտդ գահավէժ ջրերին տուած
Եւ բուրումներին համեմի, դաղձի···
··· Որսաշատ տարի, կամուրջ բերկրանք,
Կին հրաշալի ու բազմաթեղուն, այգի հիասքանչ,
Ջինուղ սարահարթ, կղզի կորուսեալ,
Տափաստանների հոգմերից հիւծուած տխուրաչ երինջ,
Մի թուր–կայծակի մխրճուած ամրան գիշերների մէջ,
Հոգմաթափ եղած ու վերընձիւղած Սասունի պսակ,
Վարդ ու այգեկութ, զուսանի փանդիռ,
Սմբակահարուած սիրոյ տերութիւն,
Ոգրի սեւ մոխիր, զենիթերի շառաչ,
Մաքուր արշալոյս ու մի մոնչիւն, որ բորբոքում է լռութիւնը խոր···
Թեկուած աշտարակ ու խոցխոցուած կին,
Խեղդուած երեխայ, գիշերային ցանք, արիւնոտ բլուր···
Որքա՜ն ցաւեան է շեղջ ու շեղջ կիտուել ամբարների մէջ
Եւ մառաններում որքա՜ն էլ արիւն,
Էրզրում ու Վան, Սասուն ու Տարօն, փշրուած գանգեր, շէներ մխացող,
Ապրիլ 24···
Լեցուն բանտերը խրախճանեցին, խաւարը հարբեց···
Լեցուն բանտերը լերդացած ու սեւ արիւն փսխեցին,
Ու լուայի պէս
Գնաց, ծածկելու ճերմակ ոսկորներ···
Եւ ճնճղուկները փախան տագնապած,
Ձկները գետի խորքերը իջան···
··· Օրօրուեց սակայն օրօրոցն Հայկեան,
Մուսա լեռն ըմբոստ կրակով շաչեց,
Քուռկիկ Ջալալու սմբակը դիպաւ Արարատ սարին,
Եւ ուրարտական սէգ առիւծների դնչակալներից
Շունչ եկաւ զօրեղ···
Եւ առաւ յանկարծ չոր փայտի ծաղկում եւ կենդանութիւն ատերակների···
Խեղդուած ու մարուած ճրագի տեղակ ջահեր վառուեցին,
Եւ գերանդիներ ձեռքէ ձեռք անցան:
Տուն վերադարձէ՛ք, ո՛վ սերմնացաններ եւ այգեգործներ,
Բերէ՛ք ձեր միակ հարստութիւնը՝ ուժը թիկունքի
Եւ ձեր թոքերի շնչառութիւնը:
Ձեզ են սպասում ճոնչուն ապլեր,
Եզներ սպիտակ եւ՝ ճանապարհներ··· մաքուր հնձաններ, մարգագետիններ.
Նորոգ մի ոստան, զանգերը լռուս, մի շռայլ արեւ,
Ձկնառատ Արաքս, մեղրամիս, ճամբայ, տակառներ լեցուն···
Ականջդ սրիր եւ աչքերդ բաց: Տուն վերադարձի՛ր,
Ահա հացը, կաթն ու Հայաստանի նորաբուխ գինին:

Թարգմ. ՎԱՀԱԳՆ ԴԱՒԹԵԱՆ

digitised by A.R.A.R.@



ՋՈՒԹԱԿԻ ԱՇԽԱՐՀԱՀՌՉԱԿ ՈՒՍՈՒՑԻՉ ԻՎԱՆ ԿԱԼԱՄԵԱՆ

Ամերիկան «Թայմ» չաբաթաթերթը իր եբաժշտական բաժնին մէջ ուշադրաւ տեղ յատկացուցած է ամերիկահայ աշխարհահռչակ քուքակահը եւ քուքակի ուսուցիչ Իվան Կալամեանի։

Սառրեւ՝ «Թայմ»ի յօդուածին ամփոփումը։

«Կալամեան իր բոլոր դասերը կու տայ Մանհաթթընի իր յարկաբաժնի մէկ աշխատասենեակին մէջ։

Ուսանողները գայն կը կոչեն *Տանջանքի Մենեակ*։ Այդ սենեակէն ներս ոչ մէկը կրնայ մտնել, եթէ նախապէս արդէն ապացոյցը տուած չէ տաղանդի կամ խոստումի։ Սենեակին մթնոլորտը ամէն վայրկեան կը յիշեցնէ վարպետին սարսափազդու համբաւը, տարածուած՝ քուքակի ամբողջ աշխարհին մէջ։

Բարձրահասակ ու խոհուն, 65 տարեկան, Կալամեան կոչուած է «*Երկրին ամէնէն արդիւնաւէտ քուքակի ուսուցիչը*»։ Երիտասարդ մենակատարները մեծ մասով իր արտադրութիւնն են։ Հաստատած է ճաւ սենեակի երաժշտութեան կարեւոր ուսումնարան։

Կալամեանի տեսութիւնը ա՛յն է, որ աշխատանքի ընթացքին տատապանքը, ուսանողը հեռացնելով կը տանի դէպի յառաջդիմութիւն եւ կը զարգացնէ անոր երաժշտական անհատականութիւնը։

«*Հիմա լա՛ց, եղբը նուագէ*», կը հրահանգէ իր յաչտագիրը։ Սակայն, բոլոր ուսանողները համակարծիք են, թէ սա իր խստութեան ետեւ ունի ազնիւ եւ խոհուն անձնուրութիւն մը։

Իր աշակերտներուն կը հետեւի գաց, ճանի որ գաց կրնայ ուսուցիչ բոլոր կտրուածները։

Տարօրինակը այն է, որ իմէ բնաւ չի ճեղքեցնար անձնական համերգներով։

Մանկութիւնը անցուցած է Մոսկուա։ Բամպակի հայ վաճառականի մը երկչոտ տղա զաւակը, ուզած է ուսումի քուքակահար մը ելլալ։ Սակայն, ուրի հոգ, կայամեան ճշմարած է, թէ իմէ ուրի զօրաւոր ուրիշ կոչում մը ունի· ուսուցանելու կոչումը։

14 տարեկանին սկսած է դասեր տալ։ 21 տարեկանին հաստատուած է Փարիզ։ Համաշխարհային Բ. Պատերազմէն հոգ, Միացեալ Նահանգներ։

Ունի մօտ 100 աշակերտ։ Իր ճոխկին աշակերտները կը սիրեն հանդիպիլ իրենց վարպետին եւ առնել անոր խորհուրդները։

Կալամեան օրը տասը ժամ կ'աշխատի։ Շաբաթը եօթը օր։ Գիշերները կը հանգչի ոնիրի վէպեր կարդալով։ Երբեմն, առաւօտները ժամը 4·30-ին կ'արթննայ ուսուցելու համար։ Իր կինը կ'ըսէ, որ 27 տարուան իրենց ամուսնական կեանքի ընթացքին, միայն մէկ անգամ թատրոն գացած են։ Եւ այդ օր, Կալամեան թատերախաղէն ամբարացած, միջնարարին ուզած է տուն վերադառնալ։

ՎԱՐՈՒԺԱՆ ԳՈՅԺԵԱՆ «ԳԷՎԷԲՐԻ ՀԻԼԶ ՍԷՆՖՈՆԻԷ» ՆՈՒԱԳԱԽՈՒՄԻՆ ԱՄԲԱՎԱՐ ՆՇԱՆԱԿՈՒՄԸ

«Լոս Անճելըս Փրոնիքըլ» թերթը լեքսանտահայ ֆանոթի քուքակահար Վարուժան Գոյճեանի մասին կու տայ հետեւեալ լուրը։

«Վարուժան Գոյճեան խմբավարը «Գէվէբրի Հիլզ Սէնֆոնիէ» նուագախումբին վարիչ նշանակուեցաւ։

Գէվէբրի Հիլզի չրջանային կրթական անդրէն Բէօպին Քորտովա, այս առիթով, ըսած է. «Կասկած չկայ, թէ յանձինս Գոյճեանի, հաղուագիւտ ընտրութիւն մը ըրած ենք։ Իր երաժշտական վայելուն անցեալով ֆանոթ խմբավար մը գտած ըլլալու երջանկութիւնը ունինք մեր ազգութիւն մէջ։ Նուագախումբը արդէն քանի մը նուագահանդէսներ տրուած է։»

Տարօրինակը այն է, որ իմէ բնաւ չի ճեղքեցնար անձնական համերգներով։

Մանկութիւնը անցուցած է Մոսկուա։ Բամպակի հայ վաճառականի մը երկչոտ տղա զաւակը, ուզած է ուսումի քուքակահար մը ելլալ։ Սակայն, ուրի հոգ, կայամեան ճշմարած է, թէ իմէ ուրի զօրաւոր ուրիշ կոչում մը ունի· ուսուցանելու կոչումը։

14 տարեկանին սկսած է դասեր տալ։ 21 տարեկանին հաստատուած է Փարիզ։ Համաշխարհային Բ. Պատերազմէն հոգ, Միացեալ Նահանգներ։

Ունի մօտ 100 աշակերտ։ Իր ճոխկին աշակերտները կը սիրեն հանդիպիլ իրենց վարպետին եւ առնել անոր խորհուրդները։

Կալամեան օրը տասը ժամ կ'աշխատի։ Շաբաթը եօթը օր։ Գիշերները կը հանգչի ոնիրի վէպեր կարդալով։ Երբեմն, առաւօտները ժամը 4·30-ին կ'արթննայ ուսուցելու համար։ Իր կինը կ'ըսէ, որ 27 տարուան իրենց ամուսնական կեանքի ընթացքին, միայն մէկ անգամ թատրոն գացած են։ Եւ այդ օր, Կալամեան թատերախաղէն ամբարացած, միջնարարին ուզած է տուն վերադառնալ։

digitised by A.R.A.R.@

ԿՈՉ՝

ՍՓԻՒՌՔԱՀԱՅ ԳՐՈՂՆԵՐՈՒ, ՀՐԱՏԱՐԱԿՉԱՏՈՒՆԵՐՈՒ ԵՒ ԳՐԱԴԱՐԱՆՆԵՐՈՒ

Հայկազեան Գոլէճի Հայագիտական Ամպիոնն ու Մատենադարանը ծրագրած են հրատարակել սփիւռքահայ գեղարուեստական գրականութեան մատենագիտութիւն (պիպլիոկրաֆի)։ Այս աշխատութիւնը պիտի ընդգրկէ 1920–1969 թուականներուն սփիւռքի տարածքին վրայ լոյս տեսած սփիւռքահայ գրողներու (արձակագիր, բանաստեղծ, թատերագիր, գրաքննադատ, գրականագէտ) գործերը եւ գրական ուսումնասիրութիւնները։

Եւ այդ, կը դիմենք սփիւռքի բոլոր գրողներուն, մտաւորականներուն, հրատարակիչատուներուն, գրադարաններուն, որ գրեն մեզի՝ տալով հետեւեալ տեղեկութիւնները իրենց հեղինակած, հրատարակած եւ կամ ունեցած գիրքերուն մասին.— *հեղինակ, գիրքի անուն, վայր, տպարան, թուական։*

Հասցէ՝

Armenological Library
Haigazian College
P. O. Box 1748
Beirut, Lebanon.

ՇՆՈՐՀԱԿԱԼՈՒԹԵԱՄԲ ՍՏԱՑԱՆՔ

ՄԱՏԵԱՆ ՍԻՐՈՑ ԵՒ ՄՈՐՄՈՔԻ (Քերթուածներ), Վահէ–Վահեան, Պէյրութ, 1968

ԱՊՐԻՄ–ՄԵՌՆԻՄ (Քերթուածներ), Գ. Ալդգարեան, Երեւան, 1968

ՓՈՒՆՋ ԳԵՂԵՑԿԱԳՈՅՆ ՊԱՏՄՈՒԱՆՔՆԵՐՈՒ, հայացուց՝ Ս. Զաւէն, Պէյրութ, 1968

digitised by A.R.A.R.@

ՀԱՅԵԿԱՆ ԲԱԺՆԵՊԻՆ

ԼԻԲԱՆԱՆ	22	Լ. ՈՍԿԻ
ԱՐՏԱՍԱՀՄԱՆ	8	ՏՈԼԱՐ
ՀԱՏԱՎԱՃԱՌ	2	Լ. ՈՍԿԻ

Վաճառքեան հասցէ՝

G. SASSOUNI

Rue Sélim Boustani,
Beyrouth-Liban

digitised by A.R.A.R.@